



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ	1
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ.....	2
ՂԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԻՄՔԵՐՈՒ ՀԻՄՔԸ ԻՆՔՆԱՃԱՆԱՉՈՒՄՆ Է	2
ՀԱՐՑԱԶՐՈՅՑ.....	4
«ԻՆՉՊԷՍ ՄՏԱԾԵԼ ԱԶԳԻ, ՊԵՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ»	4
14/5/2025.....	4
ԿԻՊՐԱՀԱՅ	8
ԱԼԵՔՍ ԾԱՂԻԿԵԱՆԻ ՄԻԱՆՁՆԵԱՅ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ	8
ՄԱՅԻՄԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐՈՒ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ.....	12
ՅՕԴՈՒԱԾՆԵՐ.....	14
ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՐԹԱԿ	14
ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍՄԱՐՏԻ ՈԳԻՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ	14
ՕՂԷՆ ԿԱԽՈՒԱԾ, ԲԱՌԱՐԱՆԸ ՍՄՔԱԾ.....	17
ԼԵԶՈՒԻՆ ՄԷՋ ԾԱՄԾՍՈՒԱԾ՝ ՀԵ՛Գ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ.....	17
ԱԶՂՊԵՅՃԱՆԻ «ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԱՆՑՔ»Ի ԵՐԱԶԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱԿԱԶԴՈՒՄԸ.....	20
ԺԱՄԱՆԱԿՆ Է ԴԱՏ ԲԱՆԱԼՈՒ ԹՈՒՐՔԻՈՅ ԴԷՍ, ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՅԱԻԵԼԵԱԼ ՃԱՆԱՉՄԱՆ ԿԱՐԻՔ ՉԿԱՅ	23
ԹՐՔԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԻԼԷԿԱՆ ՈՒԺԱՆԻԹԻ ԿԱՐԵԼԻՈՒԹԻՒՆՆԵՐԸ.....	25
ՏԵՍԱԿԷՏ	28
110-ԱՄԵԱԿԻ ՄՏԱԾՈՒՄՆԵՐ	28
ԻՆՉ Է ՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՈՐՈՆՔ ԵՆ ՆՐԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ.....	32
TIK TOK-ԷՆ ՏԱՃԱՐ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿՆ Է.....	34
ՈՒ ՎՏԱՆԳՈՒԱԾ Է ՆԱԵԻ ԼԵԶՈՒՆ...ԱՅՆ, ԻՆՉԸ ՄԻԱԻՈՐԵՑ ՀԱՅԱԽՕՍ ՑԵՂԵՐԻՆ ՈՐՊԷՍ ՄԷԿ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱԶԳԻ.....	36
ՄԷ՛Կ, ՄԷ՛Կ, ՄԷ՛Կ.....	39
ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ.....	40
ՓՈՒԽՋ ՍԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷ.....	40
ԿԵԱՆՔԷՍ ՊԱՏԱՌԻԿ ՍԸ.....	45
ՄՕՐՍ ԿԱՆԱՉ ՀԱՅԵԱՑՔԸ.....	45
ՎՏԱՆԳՈՒԱԾ, ԲԱՅՑ Ո՛Չ ԿՈՐՍՈՒԱԾ ՄԵՐ ԼԵԶՈՒՆ, ՄԵՐ ՄՇԱԿՈՅԹԸ.....	47
ՊՐԻՍՄԱԿԷՍ	52
«ՄԵԾ ԵԳԻՊՏԱՀԱՅ ՍԸ»	52



ԱՆՇԱՆՕԹՈՒՇԻՆ.....	55
(Խոհագրութիւն).....	55
ԱԿՆԹԱՐԹՆԵՐ	58
ՔԱՌԵԱԿՆԵՐ.....	61

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԻՄՔԵՐՈՒ ՀԻՄՔԸ ԻՆՔՆԱՃԱՆԱԶՈՒՄՆ Է

Կրթական տարեշրջանի ասարտին, մեր միտքերը դարձեալ կը սեւեռին կրթութեան, դաստիարակութեան կարեւորագոյն խնդրին:

Համաշխարհայնացման այս դարուն, ուր այնքան վիթխարի չափերու կը հասնի ազգային ինքնուրոյն դիմագիծի, ազգային արժէքներու, ազգային ոգիի ու գաղափարի խամրումը յօգուտ անդէմ ու անդիմագիծ խառնամբոխի մը կազմաւորումին, մեր միտքերու հայեացքին առջեւ կը կոթողանայ դարձեալ հազարամեակներու փորձով հաստատուած Սոկրատեսեան հիմնարար սկզբունքը՝ ԾԱՆԻՐ ԶՔԵԶ:



Ինքնաճանաչման ուղերձ մը՝ ուղղուած մարդ էակին ընդհանրապէս, որպէս մարդ-անհատ եւ որպէս ազգային պատկանելիութիւն ունեցող անհատ, մեր պարագային՝ հայ անհատին:

Մեծ մանկավարժ Դոկտ. Բերկրուհի Սվաճեան սահմանելով հայ դպրոցին դերը կը գրէր. «Հայ փոքրիկին հոգի տալ, հայ փոքրիկը մարդ դարձնել եւ ոչ՝ թեքնիք արուեստագէտ մը: Իսկ միւս դերը՝ հետապնդել մեր ազգային մտահոգութիւնները»:

Ճշմարիտ խօսքեր՝ արդարեւ:

-Հայ փոքրիկին հոգի տալ կը նշանակէ էապէս անոր մէջ սերմանել սիրոյ, կարեկցանքի, խղճամտութեան, բարութեան, ազնուութեան ու գեղեցիկի ճաշակի եւ յարակից առաքիներութիւններ, մասնաւորաբար՝ տակաւ ռոպոթացող եւ հոգեզրկուող աշխարհի մը մէջ, ուր ոյժը, շահն ու հաշիւը կը տնօրինեն ամէն ինչ եւ ուր մարդ էակը կրնայ դիւրաւ վերածուիլ հոգիէ զուրկ մարդ-մեքենայի:

-Զուգահեռաբար, հայ փոքրիկը կամ պատանին մարդ դարձնել չի նշանակէր երբեք անոր ուղեղը խճողել միայն ու միայն տարբեր-տարբեր գիտելիքներով, ծանօթութիւններով, լեզուներու եւ հմտութեանց իւրացումով եւ շատ անգամ զոց սորվուած տուեալներով...Մարդը մտածող, բանական էակ է գերազանցօրէն: Հետեւաբար, իրաւ կրթութիւնը կամ դաստիարակութիւնը պէտք է միտի փոքրիկին կամ պատանիին միտքը



կրթել այնպէս, որ ան կարենայ ինքնուրոյն մտածել սորվիլ, իրեն մատուցուած առարկան քննել ու վերլուծել սորվիլ, հարցադրել ու կշռադատել սորվիլ, մտածումի նորանոր հորիզոններ նուաճել սորվիլ... Մեր ժամանակներուն յատկապէս, երբ կայ ահաւոր տեղատարափը տարբեր տեղեկութեանց, շուկայացած աշխարհի գովազդներու, լոգունգներու, սուտ ու փուտ չարժէքներու...՝ համացանցով թէ գանգուածային լրատուական միջոցներով, ան պէտք է կարենայ ճիշդ կողմնորոշուիլ եւ չթողուլ որ իր մատղաշ ուղեղը լուացուի ու մոլորուի սխալ, վնասաբեր, իր ժամանակն ու միջոցները մսխելու կոչուած «թակարդ»ներով...

-Ինքնաճանաչումը վերջապէս կ'ենթադրէ ազգային ինքնաճանաչում, քանզի ամէն մարդ անհատ նաեւ եւ գերազանցօրէն ունի ազգային արմատներ եւ ազգային ինքնութիւն: Չկայ վերացական մարդ: Ազգային ինքնաճանաչումը՝ հայեցի մեր ինքնութեան անբաժանելի մասը նկատուող՝ հայոց լեզուի ու մշակոյթի, հայոց պատմութեան, Լուսաւորչեան հաւատքի եւ ազգային մեր արժէքներու համակարգի խորունկ ճանաչողութիւնն է, անոնց հետ սերտ հաղորդակցութիւնը, անոնց վրայ հիմնուած ազգային ինքնագիտակցութիւնը: Մփիւռքի լայրծուն մայրերուն վրայ, յատկապէս, հարց կը ծագի թէ մենք՝ աշխարհացրիւ տարագիր հայութեան բեկորներս, պիտի կարենա՞նք ազգային արմատներու մեր շարունակականութիւնը կերտել հայեցի կրթութեամբ եւ դաստիարակութեամբ: Պիտի կարենա՞նք հայրենատէր ազգ որպէս դաստիարակուիլ, թէ՞ պիտի ըլլանք լոկ ծագումով հայեր կամ անդէմ, անդիմագիծ փերեզակներ ու մուրիկներ ցրուած աշխարհի պողոտաներուն վրայ...լուագոյն պարագային՝ հայասերներ եւ հայամէտ բարեգործներ...

-Հայեցի կրթութիւնը պիտի կարենա՞յ փոխանցել պետական եւ հայրենատէր ազգի բաղադրիչները, համահայկական մտածողութեամբ, համահայկական ոգիով, վեր ելլելով անձնական, խմբակային, նեղ-հատուածական, նեղ-կուսակցական նկատառումներէն եւ գաւառամտութենէն...

-Հայեցի կրթութիւնը պիտի կարենա՞յ մղել հայ ուսանողը որ յանձնառու զգայ ան հետապնդելու մեր ազգային մտահոգութիւնները, մեր իղձերն ու տեսլականը, ամենայն պատասխանատուութեամբ եւ անկեղծութեամբ, ամենայն հետեւողականութեամբ եւ անկոտորում կամքով եւ ոգիով, հեռու ամբոյսավարութենէ, ճառերէ եւ սին ձեւականութիւններէ: Հեռու մանաւանդ գոհի կերպար ըլլալու մեր հիւանդկախ մտայնութենէն: Հեռու նաեւ ուրիշներուն ապաւինելու եւ մեր սխալները այլոց վրայ բարդելու մտածելակերպէ, ինչ որ մեր տունը քանդած է դարերու ընթացքին: Այլ իր ճակատագրին լիարժէք ՏԷՐԸ ըլլալու վճռակամութեամբ եւ արժանապատուութեամբ:

Եւ վերջապէս, հայեցի կրթութիւնը պիտի կարենա՞յ արթնցրնել մատղաշ սերունդին մօտ այն զօրաւոր գիտակցութիւնը որ ԱԶԳԱՅԻՆ ՀԶՕՐ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԿԵՐՏՈՒՄԸ կրնայ դառնալ ամենէն ամուր ԵՐԱՇԽԻՔԸ ԱԶԳԱՅԻՆ ՄԵՐ ԳՈՅԵՐԹԻՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՄԵՐ ԵՐԱԶՆԵՐՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ: Եւ այս ուղղութեամբ իւրաքանչիւր հայ անհատ ընելիք ունի՝ Հայաստանի Հանրապետութենէն ներս թէ անոր սահմաններէն դուրս:

Ահա կարեւորագոյն մարտահրաւերներ կրթութեան, մասնաւորաբար հայեցի կրթութեան առջեւ:

Որքան խորունկ իմաստ ունի դարերէն եկող այն խօսքը որ կը պատգամէ.

«Ինքնաճանաչումը սկիզբն է իմաստութեան»:

Այս մարդկային եւ ազգային խորունկ ԻՆՔՆԱՃԱՆԱՉՄԱՆ կերտումն է որ կրնայ հնարաւորել մեր վաղուան նոր ու պայծառ լուսաբացը:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

«ԻՆՉՊԷՍ ՄՏԱԾԵԼ ԱԶԳԻ, ՊԵՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ»

14/5/2025



«Նոր Յառաջ» Ապրիլ 17-ին, Եանց Գլեօպի մէջ հանդիպում մը կազմակերպած էր պատմաբան, դիւանագետ, Լեւոն Տէր Պետրոսեանի նախագահութեան օրով՝ հայ-ազերպայճանական եւ հայ-թրքական յարաբերութիւններու կարգաւորման համար բանակցող Ժիրայր Լիպարիտեանի հետ:

Հակառակ դպրոցական արձակուրդին եւ Զատկուան շաբթուան զուգադիպելուն՝ շուրջ յիսուն հոգի ներկայ գտնուեցաւ այս հանդիպումին: Պրն Լիպարիտեանի ներածական խօսքէն ետք տրամադրուեցաւ անկեղծ եւ բաց հարցում-պատասխանի ժամանակ, որ շարունակուեցաւ ճաշի ընթացքին: Երեկոյթը ընթացաւ երկլեզու՝ հայերէն եւ ֆրանսերէն: Հայերէնէն ֆրանսերէն թարգմանութիւնները սիրայօժար ապահովեց տիկին Իզապել Քորթեան:



Սկսելու համար, Ժիրայր Լիպարիտեան ներկայացուց որոշ հասկացութիւններ եւ դրաւ որոշ հարցեր որպէս թեմաներ փոխանակումներու համար, նախքան ներկաներու հարցումներուն պատասխանելը: Ստորեւ կը հրատարակենք Ժիրայր Լիպարիտեանի **ներածական խօսքը**:

«Մի քանի գաղափար պիտի ներկայացնեմ, այնուհետեւ քանի մը հարցադրումներ եւ կը յուսամ որ այս հանդիպումը կը վերածուի գրոյցի: Չեմ ուզեր դասախօսութիւն տալ, ձեր գիտելիքները, կարծիքները կը յարգեմ, բայց կ'ուզեմ, որ մեր մէջ գրոյց ընթանայ՝ կարելոք հարցերու շուրջ:

«40 տարեկանիս շատ անելի ինքնավստահ էի, հիմա այս տարիքիս անելի զգուշութեամբ կը մօտենամ հարցերուն: Այսօր կ'ուզեմ անդրադառնալ ազգ եւ պետութիւն գաղափարին: Միջազգային գրականութեան մէջ **«ազգ-պետութիւն»**-ը (État-nation) ընդունուած գաղափար մըն է, այսինքն կայ տիրապետող ազգութիւն մը եւ պետութիւնը կը կառուցուի այդ ազգութեան կողմէ, այդ ազգութեան գաղափարներով, նաեւ՝ պետութիւնը կը ստեղծէ ազգութիւնը:

«Համալսարանի իմ դասախօսներէս մէկը կ'ըսէր, թէ ինչպէս պետութիւնը կը ստեղծէ քաղաքացին: Իսկ մեր քով՝ ազգը,– այնպէս ինչպէս կը գործածեն,– տարբեր իմաստ ունի: Նկատի ունենալով որ երկար ատեն պետութիւն չենք ունեցած եւ մեր ժողովուրդը ապրած է իսլամական տէրութիւններու մէջ, մենք սեպուած ենք որպէս կրօնական համայնք: **Ազգը սահման չունի, պետութիւնն է որ սահման ունի:** Այս երկուքը տարբեր ստորոգելիներ ունեցող կառոյցներ են: Օրինակ՝ խումբ մը մարդիկ Չինաստանի մէջ եկեղեցի մը կառուցելով ազգի մաս կը կազմեն, բայց հոն պատասխանատուութեան պակասը կայ: Հոն հայուն հիմնական պատասխանատուութիւնը Չինաստանին կը պատկանի, իսկ պետութեան պարագային այդ պատասխանատուութիւնը Հայաստանի պետութեան կը պատկանի: Հետեւաբար **ազգի մէջ կարելոքը մշակոյթն է, պատմութիւնն է, իսկ պետութեան մէջ՝ ապահովութիւնը եւ ապագան:**

«Առաջին՝ քիչ առաջ ըսածներուս հիման վրայ կրնանք տարբեր ձեւով մտածել Սփիւռք-Հայաստան հարցերուն մասին: Ազգը կրնայ որեւէ բան երեւակայել եւ ուզել, ըլլալը կամ չըլլալը կարելոք չէ, իսկ պետութիւնը եւ պետութեան մէջ ապրող ժողովուրդը չի կրնար երեւակայել, որովհետեւ իրական քաղաքական եւ միջազգային կեանքի մէջ կը գտնուի:

«Երկրորդ՝ պետութիւնը կառավարութենէն տարբեր է. եթէ պետութիւն ունինք, որ ունինք, այդ պետութիւնը անկախ պիտի ըլլայ, թէ՛ կախեալ: Եթէ հարցը իբրեւ գոյութենական ձեւակերպենք, այդ ճամբան մեզ կը տանի ուրիշ տեղ: Իսկ եթէ մենք մեզ օտար կը նկատենք այն աշխարհին մէջ ուր կ'ապրի պետութիւնը եւ մեր դրացիներուն հետ խնդիր ունինք, այն ատեն դուրսի օգնութեան պէտք պիտի ունենանք:

«Եթէ մենք կ'ուզենք գոյութիւն ունենալ օտար ուժերու յոյսով՝ այն ատեն չենք կրնար անկախ ըլլալ: Իսկ այդ օտար պետութիւնները Եւրոպան է, Ամերիկան է, քրիստոնէայ պետութիւններն են: Այսինքն՝ այս պարագային աշխարհի նկատմամբ մեր մօտեցումը կրօնական է:

«Երրորդ կէտը որ կը բխի առաջին երկուքէն հետեւեալն է. արդեօք մենք մեր պետութեան կառուցման մէջ դէր ունինք կատարելիք, թէ՛ ոչ: Այսինքն **եթէ մենք մեզ կը տեսնենք որպէս զոհ, անցեալի զոհ, ներկայի եւ ապագայի հաւանական զոհ, այդ կը նշանակէ, որ մենք չենք մասնակցիր մեր պատմութեան կերտումին, քանի որ միայն զոհ ենք...**, զոհը պատմութիւն



չունի, գոհը մահ ունի: Ասոր կը հետեւի այն հարցը, որ մեր ըսածները եւ ըրածները, մեր չըսածները, որ պէտք էր ըսէինք, չըրածները որ պէտք էր ընէինք արդէօք դեր կատարած են մեր պատմութեան մէջ, այսինքն մենք պատասխանատուութիւն ունինք մեր պատմութեան ընթացքին պատահածներուն մէջ...: Վերջին անգամ ո՞ր հայկական հաստատութիւնը, կազմակերպութիւնը պատասխանատուութիւն ստանձնած է իր սխալներուն համար:

«Քանի մը հարցադրումներ, որոնց մասին կը յուսամ որ կրնանք խօսիլ.

«Առաջին՝ արդէօք մեր հարցի միջազգայնացումը մեզ որեւէ բան տուած է՝ սկսելով Պերլինի, Ման-Սթեֆանոյի դաշնագրերէն: Արեւմուտքը մեզ ի՞նչ տուած է: Ի՞նչ դեր ունեցած են Եւրոպան, Ամերիկան, Ռուսաստանը մեր պատմութեան մէջ երբ մենք իրենց դիմած ենք եւ ճիշդ ի՞նչ ըրած են մեզ որեւէ փորձանքէ փրկելու համար: Պատմութեան ընդհանուր հաշուեկշիռը (bilan) այն է, որ Արեւմուտքը օգտակար եղած է երբ որ փորձանքը պատահած է՝ որքանոցներ բացած է, մեզի պատսպարելու վրաններ դրկած է, թերեւս սովէն ազատած է... , բայց մեզ չէ ազատած փորձանքներէն եւ թերեւս ալ պատճառ դարձած է այդ փորձանքներուն: Հաւանաբար խիստ են ըսածներս, բայց ըստ իս այս է իրականութիւնը:

«Երկրորդ՝ եթէ այսօր Հայաստան վտանգի տակ կը գտնուի, ապա մենք որպէս Սփիւռք, որպէս կազմակերպութիւն, որպէս հաստատութիւն ի՞նչ պէտք է ընենք:

«Երրորդ՝ մենք որ միշտ կը հպարտանանք, թէ պատմութենէն դասեր քաղած ենք, այս պարագային հետեւեալ հարցումը կը յառաջանայ՝ **2020-ի պատերազմէն եւ 2023-ի Արցախի պարտութենէն ո՞վ ի՞նչ սորվեցաւ»:**

ՔԱՆԻ ՄԸ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Հարցում – Ձեր կարծիքով Արցախի, Ուքրաինայի, Աբխազիոյ կամ Օսիոյ հողային հարցերը ինչպէ՞ս կրնան լուծում գտնել եւ արդէօք Հայաստան կրնա՞յ ամբողջովին անկախ մնալ շրջանին մէջ:

Ժ.Լ. – Ո՛չ մէկ երկիր կրնայ ամբողջական անկախութիւն ունենալ, նոյնիսկ Միացեալ Նահանգները: Խնդիրը անկախութեան աստիճանն է, թէ ի՞նչ չափով դուն կրնաս որոշել քուներքին վարչակազմը եւ ի՞նչ չափով կրնաս քու հիմնական շահերդ պաշտպանել եւ հետապնդել զանոնք ըստ քու հայեացքիդ, նկատի ունենալով նաեւ շուրջիններու մտահոգութիւնները՝ քու կարողութիւններուդ համաձայն: Ձեր հարցումը երկու բաժին ունի. յստակ է որ Հայաստան ձեր թուարկած շրջաններու տազնապնէրուն գծով բան մը չի կրնար ընել: Ինչ կը վերաբերի այն տարածքներուն, որոնց նկատմամբ հողային պահանջներ ունինք, ապա պէտք է ըսեմ, որ այսօր մեր Հանրապետութեան սահմաններէն դուրս թէ՛ միջազգային օրէնքով եւ թէ՛ մեր կարողութիւններու չափով հողային պահանջ ներկայացնելը վտանգի տակ կը դնէ Հայաստանի պետութիւնը: Մենք նման պահանջ ներկայացուցինք Արցախի նկատմամբ եւ առաջին պատերազմին՝ յաղթեցինք, բայց այդ հարցը չլուծուեցաւ ու Ազերպայճան վերադարձաւ շրջանին մէջ: Ընդգծեմ, թէ 30 տարի ո՛չ մէկ երկիր մեր իրաւունքը ճանչցաւ: Եւ հիմա Նախիջեւանի, Ախալքալաքի կամ Արցախի նկատմամբ հողային պահանջ ունենալը կը նշանակէ որ մենք յարձակողապաշտ պետութիւն ենք եւ սա չի համապատասխաներ մեր անվտանգութեան հիմնական սկզբունքներուն: Այդպէսով պարզապէս մեզի համար վտանգ կը ստեղծենք:



Հարցում – Ես կուզեմ սկսիլ ձեր վերջին՝ շատ յուզող հարցէն. ինչո՞ւ մենք պարտուեցանք 2020 թուականի պատերազմին: Կենթադրեմ, թէ մենք պարտուեցանք, որովհետեւ 30 տարի ձեռքերնիս ծալած նստեցանք, աշխարհէն պահանջելով ճանչնալ Արցախի անկախութիւնը, մեր բանակը չհզօրացուցինք, իսկ Ազերպայճան այս 30 տարիներուն պատրաստուելով եւ հզօրանալով՝ յաղթեց պատերազմը եւ իր վրէժը լուծեց: Ի՞նչ է ձեր կարծիքը:

Ժ.Լ. – Ես համաձայն եմ, որ վերջին 30 տարիներուն մենք մեծ բան մը չըրինք մեր բանակը հզօրացնելու ուղղութեամբ, իսկ միւս կողմէ Ազերպայճան լուրջ կերպով կը պատրաստուէր եւ մենք նոյնիսկ չէինք հաւատար որ ազերիները կրնան կռուիլ: Ըսեմ նաեւ որ թէ՛ 2020-ի պատերազմին եւ թէ՛ 2023-ին երբ Արցախը պարպուեցաւ իր բնակչութենէն ո՛չ մէկ երկիր ո՛չ մէկ բան ըրաւ: Պատճառն այն է, որ թէւ այդ օտար պետութիւնները մեզի կը ժպտային, մեր նկատմամբ մեծ սեր կը յայտնէին, մեր մշակոյթը կը յարգէին, բայց մեզի կըսէին՝ «այդ տարածքները ձերը չեն, Ղարաբաղը անկախ չի կրնար ըլլալ եւ պէտք է յարգել Ազերպայճանի տարածքային ամբողջականութիւնը»: Բայց մենք չէինք ուզեր հասկնալ իրենց ըսածը: Մեր քաղաքական մտածելակերպի մշակոյթին մէջ չունինք այդ փափաքը կամ կարողութիւնը նախ հասկնալու թշնամին եւ միւս դերակատարները: Մենք գիտէնք մի՛ այն մեր պահանջները, որ արդար են, թէ մենք լաւ մարդիկ ենք եւ թշնամին սատանայ է: Հետեւաբար այս մտայնութեամբ լուրջ բանակցութիւն չի կրնար ըլլալ:

1993-ին, երբ Ազերպայճան յարձակեցաւ Արցախի վրայ, իմ պաշտօնիս բերումով եկայ Փարիզ, գացի Մոսկուա եւ այլուր, ըսելու թէ տեսէ՛ք մեր ժողովուրդը կը սպաննեն եւ ի՞նչ կը կարծէք որ ինծի ըսին այդ մայրաքաղաքներուն մէջ. ըսին՝ «ի՞նչ կ'ակնկալէիք»...: Հետեւաբար **Արցախի անկախութեան մեր ծայրայեղ (մաքսիմալ) պահանջներուն պատճառով դիւանագիտութիւնը ձախողեցաւ:** Իսկ երբ դիւանագիտութիւնը կը ձախողի՝ պատերազմի հաւանականութիւնը կը շատնայ: Գիտէք, երբ առաւելագոյնը կը պահանջես՝ նուազագոյնն ալ չես ստանար: Մեր կառավարութեան պաշտօնավարման ժամանակ մենք գիտէինք այդ եւ մեզի համար կարելորդ այն էր որ Արցախի ժողովուրդը այդ հողին վրայ մնայ, ապրի այս կամ այն կարգավիճակով:

* * *

Այնուհետեւ շուրջ մէկուկէս ժամուան ընթացքին ներկաները բազմաթիւ այլ հարցումներ ուղղեցին յարգելի բանախօսին, որոնց սիրով պատասխանեց Լիպարիտեան:

Հանդիպումը ավարտեցաւ ընթրիքի մը սեղաններուն շուրջ, ուր շարունակուեցաւ մտերմիկ զրոյցը:

«ՆՅ»

ԿԻՊՐԱՀԱՅ

ԱԼԵՔՍ ԾԱՂԻԿԵԱՆԻ ՄԻԱՆՁՆԵԱՅ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ



(ԱՌԱՋԻՆ ԻՆՔՆԱՍԿԱՐ)

Շաբաթ 31 Մայիս 2025-ին, երեկոյեան ժամը 7:00-ին, Սթրովոլոսի Մշակութային Կեդրոնին մէջ, բացումը կատարուեցաւ կիպրահայ երիտասարդ արուեստագէտ ԱԼԵՔՍ ԾԱՂԻԿԵԱՆԻ արուեստի գործերուն ի ներկայութեան արուեստասէր հոծ հասարակութեան մը:

Արուեստի իդաներկ հոյակապ գործերը իւրայատուկ մթնոլորտ մը ստեղծեր էին սրահին մէջ, սքանչացման եւ հիացման զգացումներով համակելով ամենէն խստապահանջ ճաշակները...

Ի դէպ, արձանագրենք որ Ալեքս Ծաղիկեան այս հոյակապ գործերը պիտի ցուցադրէ նաեւ Լիմասոլի մէջ, այնուհետեւ Լոնտոնի մէջ, ապա մասնակի ցուցահանդէսներով պիտի ներկայանայ Տուպայի, Հոմի եւ Աթէնքի մէջ: Այս հանգամանքը ցոյց կու տայ անոր ազնիւ փառասիրութիւնը հասանելի ըլլալու աւելի մեծ թիւով հասարակութեան, միաժամանակ կրելով արուեստի բարձրագոյն չափանիշներ...



(ԹՈՅՈԹԱՅԻ ԵՐԱԶ-ՄԵՔԵՆԱՆ)

Ալեքս Ծաղիկեանի գործերը ցոյց կու տան որ ան հետամուտ է արուեստի գործերուն ընդմէջէն իմաստներ յայտնաբերելու բացառիկ նուիրումով եւ ստեղծագործական մշտանորոգ եռանդով ու կորովով:



(ԳԵՂԱՐԴԱՅ ՎԱՆՔ)

Երիտասարդ Ալէքս Ծաղիկեան ժամանակակից գեղանկարիչ է, որուն իւղաներկ պաստառները իրենց խորախորհուրդ ներշնչումը կը քաղեն պատմութենէն եւ մշակոյթէն: Ան ուսանած է Միացեալ Թագաւորութեան մէջ, հետեւելով industrial design and business ուսման բնագաւառներուն, այնուհետեւ ան իր արուեստի տաղանդը կամ վարպետութիւնը կատարելագործած է աշխարհի ամէնէն անուանի եւ հեղինակաւոր ակադեմիաներուն մէջ՝ Փեթերզպուրկի եւ Նիւ Եորքի մէջ: Ծաղիկեան իր մէջ կը միացնէ դասական ակադեմական վարպետութիւնը գիտական վերջին թեքնիք նորարարութեանց հետ, աւանդականին տալով նոր շունչ ու ոգի, դառնալով դասական իրապաշտութեան վերագարթօնքի առաջնորդող դերերէն:



(ՏԻԳՐԱՆ ՄԵԾ)

Ան արժանացած է 20 ազգային եւ միջազգային արուեստի մրցանակներու: Նշենք նաեւ որ ան իր առաջին իւղաներկ կտարը ստեղծած է 15 տարեկան հասակին եւ այսօր քայլ առ քայլ բարձրանալով հասած է այնպիսի բարձրորակ մակարդակի որ իր գործերը կը ցուցադրուին յատուկ հաւաքածոներու մէջ՝ Եւրոպայ, Միացեալ Նահանգներ եւ Ճարն:

ԱԶԱՏ ԽՕՍՔը ջերմօրէն կը շնորհատրէ երիտասարդ արուեստագէտը, իրեն մաղթելով նորանոր յաջողութիւններ իր արուեստի յարատեւ կատարելագործման ուղղութեամբ մեր նոր ժամանակներուն: Ե.Գ.

ՄԱՅԻՍԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐՈՒ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ



1918ի Մայիսեան յաղթանակները, որոնք վեց դարերու պետականագուրկ կեանքէն ետք ստեղծեցին հայկական առաջին Հանրապետութիւնը, կրկին ի մի բերին Կիպրահայութիւնը, որ Հայաստանի անկախութեան 107րդ տարեդարձը տօնախմբեց՝ ինչպէս ամէն տարի, այս տարի եւս՝ ՀՄԸՄ-ՀԵՄի մարզադաշտին վրայ:



Կիպրոսի ՀՅԴաշնակցութեան Կիպրոսի Կոմիտէի եւ յարակից միութիւններու (ՀՄԸՄ-ՀԵՄ, Համազգային, ՀՕՍ) կազմակերպած միջոցառումը տեղի ունեցաւ Շաբաթ, 31 Մայիսին:

Հանդիսութիւնը կը վայելէր՝ Կաթողիկոսական Փոխանորդ, Տէր Կոմիտաս Արք. Օհանեանի հովանաւորութիւնը ինչպէս նաեւ Կիպրոսի Հայ Համայնքի Պետական ներկայացուցիչ՝ Վարդգէս Մահտեսեանի նախագահութիւնը:

Օրուան խորհուրդը փոխանցեց Հայաստանի Ազգային Ժողովի «Հայաստան Դաշինք»ի Դաշնակցական պատգամաւոր ընկեր Արթուր Խաչատրեանը:

Ձեռնարկին ելոյթ ունեցաւ աշխարհահռչակ երգչուհի Շուշան Պետրոսեան, իսկ իրենց պատգամները փոխանցեցին Գերշ. Տէր Կոմիտաս Արք. Օհանեանը, Հայաստանի Հանրապետութեան նորանշանակ դեսպան՝ վսեմաշուք Տիկ. Իննա Թորգոմեանը, եւ կազմակերպիչ մարմինի կողմէ՝ ՀՅԴաշնակցութեան Կիպրոսի Կոմիտէի ներկայացուցիչ՝ ընկեր Ատուր Գարակիլեանը:

Ձեռնարկը իրենց ներկայութեամբ պատուեցին, ՍԴԿՆ եւ ՌԱԿ կուսակցութիւններու եւ այլ Կիպրահայ միութիւններու եւ հաստատութիւններու ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ Կիպրոսի քաղաքական կեանքին մէջ գործող Եւրոխորհրդարանի անդամներ, քաղաքական



կուսակցութիւններու ներկայացուցիչներ, Սթրովոլոսի քաղաքապետն ու փոխքաղաքապետը:

Ձեռնարկին ելոյթ ունեցան Համազգայինի «Սիփան» եւ «Նանոր» պարախումբերը, կենդանի պատկերով՝ ՀՅԴ Լիմասոլի եւ Նիկոսիոյ պատանիներն ու երիտասարդները, ինչպէս նաեւ ՀՍԸՄ-ՀԵՄի սկաուտները:

Խրախճանքին՝ որ տեղի ունեցաւ անմիջապէս ետք, ազգային-

յեղափոխական երգերով ելոյթ ունեցաւ Վիգէն Տիշչէքէնեան:

Աղբիւր՝ «Կիպրահայեր կայքէջ»

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՐԹԱԿ

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՈԳԻՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹԻՒՆԸ



Ամէն անգամ որ կը պատմենք Սարդարապատի հերոսամարտին մասին մենք կը լեցուինք հպարտութեամբ: Առաջին համաշխարհային պատերազմին սկիզբը կայսերական Գերմանիան զինած էր Օսմանեան բանակը ու մարզած էր զայն կռուելու համար Կովկասեան ճակատին վրայ: Նպատակը հասնիլն էր Պաքուի քարիւղի

հորերուն, անոնց տիրելով գերմանական բանակին ապահովելու համար պէտք եղած քարիւղը իր զինուորական արտադրութիւնը յառաջ տանելու եւ օդանաւերուն ու հրասայլերուն քարիւղ ապահովելու համար: Սակայն, ռուսական բանակը հայ կամաւորական գունդերու օգնութեամբ ոչ միայն կրցած էր զսպել յարձակումը, այլ կրցած էր նաեւ հակայարձակումով գրաւել շատ մը շրջաններ ինչպէս Վասպուրական եւ Կարին: Սակայն, պատերազմի աւարտին, ռուսական բանակը եւրոպական ճակատին վրայ կրեց մեծ կորուստ ու համայնավար յեղափոխութենէն ետք ռուսեր հեռացան Կովկասեան ճակատէն, հայերը ձգելով առանձին թուրքին դէմ միայն բանակի հայ զինուորներ, ռուս սպաներ, զէնք ու զինամթերք ձգելով հայերուն: Դժոխային Եղեռն վերապրած հայ ժողովուրդը ցասումով լեցուած էր ջարդարար թուրքին դէմ: Հայ կամաւորը անգամ մը եւս ցոյց տուաւ, թէ պողպատեայ կամքի տէր է: Օրուան կարգախօսն էր Վերապրում եւ ազատութիւն կամ մահ: Գեորգ Ե.Ամենայն Հայոց կաթողիկոսին մերժումը հեռանալ Ս.Էջմիածինէն ու կոչը իր ժողովուրդին օգնելու հայոց բանակին դէմ դնելու համար թշնամիին, ունեցան նաեւ իրենց կարեւոր ազդեցութիւնը բարձրացնելու համար ժողովուրդի մարտական ոգին:

Հազարամեակներէ եկող մեր ժողովուրդը միշտ մղած է ճակատագրական մարտեր իր գոյութիւնը պահելու համար: Հայը յարձակող չէ եղած: Յարգած է իր դրացիները, սակայն երբ յարձակած են իր վրայ, պաշտպանած է իր գոյութիւնը գերմարդկային ճիգով: Գերմարդու վերածուած է հայը, երբ պայքարը հասած է մահ ու կենացի: Սարդարապատի ճակատամարտը անոր ամենավառ օրինակն է: Վերապրելու կամքը մաս կազմած է մեր ժողովուրդի կեանքին: Այս է պատճառը մեր դիմացկունութեան, դիմանալուն հազարաւոր տարիներ: Աւարտելէ ետք իր սեւ գործը Արեւմտեան Հայաստանի մէջ, Իթթիհատական Թուրքիան իր աչքերը դարձուց դէպի Արեւելեան Հայաստան, աւարտելու համար իր գծած ծրագիրը: Սակայն, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Ե.-ի առաջնորդութեամբ հայ քաղաքական ղեկավարներ եւ բանակի սպաներ պատրաստեցին եւ գործադրեցին ինքնապաշտպանութեան հիանալի ծրագիր մը: Հայ ժողովուրդը իր բոլոր խաւերով մէկ մարդու նման ճակատ գնաց ու հարուածեց թրքական օձին գլուխը: Մայիս 22, 1918-էն մինչեւ 27 Մայիս հայկական բանակը եւ կամաւորական գունդերը, որոնց մէջ նաեւ ռուս սպաներ ու եզիտի եղբայրներ մեծ հարուած հասցուցին թրքական բանակին ու կասեցուցին անոր յառաջխաղացքը Սարդարապատի, Բաշ Ապարանի եւ Ղարաքիլիսէի ճակատներուն



վրայ: Թուրքը հասկցաւ որ երբ հայը նեղի մատնուի ու ելք չմնայ իր առջեւ, կը դառնայ կրքոտ «խենթ» մը որ թշնամիին կը հասցնէ մահացու հարուած ու կը մնայ ոտքի:

28 Մայիս 1918-ին յայտարարուած Հայաստանի անկախ պետութիւնը ուղղակի արդիւնքն էր Սարդարապատի յաղթանակին:

Այդ առաջին հայկական պետականութիւնն էր Կիլիկիոյ Թագաւորութեան անկումէն ետք 1375 թուականին: Ճիշդ է որ առաջին հանրապետութիւնը չկրցաւ լուծել բոլոր խնդիրները հայ ժողովուրդին առջեւ դրուած, սակայն պետականութեան սկիզբն էր երկար բացակայութենէ ետք: Ան յոյս մըն էր հայ ժողովուրդի հազարամեայ պատմութեան մէջ: Դժուար ժամանակներ էին ու Հայաստան այսօրուան նման շրջապատուած էր թշնամիներով: Կարճ տեւեց 1918 թուականի 28 Մայիսին հիմնուած Հայաստանի առաջին հանրապետութիւնը, որովհետեւ շրջանի պետութիւններուն շահերը տարբեր էին հայ ժողովուրդի շահերէն:

Այս պատգամը կը փոխանցուի դարէ դար: Միշտ ակնածանքով պիտի յիշենք Սարդարապատի հերոսները, նահատակները, Հայաստանի առաջին հանրապետութեան հիմնադրութեան օժանդակած հայ քաղաքական գործիչները ու այդ ոգիով դաստիարակենք մեր գալիք սերունդները: Հերոս է այն ժողովուրդը, որ երբ զգայ վտանգը, բահը կը փոխարինէ զէնքով ու կը հարուածէ թշնամիին ապահովելու համար մեր փառապանծ ազգի գոյատեւումը Հայաստանի սրբազան հողին վրայ: Հզօր է այն ժողովուրդը որ իր պատմութենէն դաս քաղել գիտէ, իրեն վնասած ուժերուն դարձեալ չի վստահիր ու նոյն սխալը չի կրկնէր:

Հայ ժողովուրդը, իր կարգին, կուրծք տուաւ Բանթուրքիզմի բոլոր ձեւի ճնշումներուն, ջարդերուն ու տեղահանութեանց եւ, Սարդարապատի մէջ, 1918 Մայիս 26-ին կասեցուց թրքական յառաջխաղացքը դէպի Ատրպէյճան, եւ այդպիսով արգիլեց Բանթուրքիզմի հանգրուանային ծրագրի իրականացումը՝ որ կը կայանար Թուրքիոյ կողմէ Ատրպէյճանի հետ հողային անմիջական կապ ստեղծելուն մէջ: Իսկ 1920 Նոյեմբեր 29-ի քայլով, Հայաստան յաջողեցաւ թրքական զօրքը հեռացնել Ալեքսանդրապոլէն եւ շրջանէն, շնորհիւ խորհրդային իշխանութեան զինուորական եւ դիւանագիտական նեցուկին, եւ մասնաւորաբար՝ 13 Ապրիլ 1921 թուականի վերջնագրիին, երբ՝ վերջ էր գտած Փետրուարեան հակախորհրդային ապստամբութիւնը Հայաստանի մէջ:

Պատմութիւնը մեծ դպրոց է որմէ պէտք է սորվինք: Սարդարապատի մէջ յաղթեցինք, որովհետեւ վստահեցանք մեր ուժին եւ դաւաճաններ չկային մեր շարքերուն մէջ: Արցախի վերջին պատերազմը ցնցեց ամբողջ ազգը: Ըստ վերլուծողներու, պարտութեան պատճառներէն մէկն էր մեր ապաւինողականութիւնը եւ դաւաճանութիւնը: Այսինքն որպէս պետութիւն, Հայաստանի հանրապետութիւնը իր անկախութենէն ի վեր ինքնուրոյն կամ ինզինքին վրայ վստահելով պաշտպանութեան համակարգ չէր ստեղծած, ըստ երեւոյթին: Ապաւինող ըլլալը եւ մեր ժողովուրդի հակառակորդներու ցանկը յստակօրէն չճշդելը մեծ հարուած հասցուց մեզի: Խօսինք օրինակներով: Բոլորս ալ գիտենք որ գոնէ 19-րդ դարու երկրորդ կէսէն սկսեալ Մեծն Բրիտանիան վարած է հակառուսկան քաղաքականութիւն եւ հետեւաբար հայոց դատին դէմ գործած է, նկատի առնելով ռուսերու աջակցութիւնը հայերուն իր քաղաքական հաշիւներէն մեկնելով: Երբ դուն քեզի դէմ դարերէ ի վեր աշխատած պետութեան մը կը յանձնես Արցախի ականներու քարտէսը եւ այս պետութիւնը զայն կը յանձնէ թուրքերուն, դուն քեզ պէտք է այպանես միայն: Այսքան ապաւինողականութիւն շատ է: Մեզ միակ փրկողը պիտի ըլլայ մեր ազգային արժանապատուութեան վերականգնումը: Առանց այս քայլին, մենք պիտի մնանք ուրիշին հետեւող ժողովուրդ եւ բնաւ պիտի չկարենանք վարել ինքնուրոյն ազգային քաղաքականութիւն: Ժամն է արթննալու:



Մշակութային համարկումը (cultural globalization) կը համարուի ազգային պետութեան հիմերը ներսէն տկարացնող քաղաքականութիւն: Հայաստանի ներկայ կառավարութիւնը, երբ դասագիրքերէն վերցուց կրօնքի դասը եւ զայն միացուց պատմութեան, պատմութեան դասագիրքերու ծրագիրի վերատեսութիւն սկսաւ կատարել ի նպաստ Թուրքիոյ հետ բարիդրացիական յարաբերութեան, հայերէնի դասը սահմանափակեց համալսարաններուն մէջ, շատ մը վերլուծաբաններու մօտ հարցական նշաններ սկսան երեւիլ: Արուեստի համարկումն ալ սկսած է աղիտալի ըլլալ մեր ազգին համար: «Եւրոպիժըն» երգի երոպական մրցումին Հայաստանի ներկայացուցիչին երգած երգը հայկականէ զատ ամէն բան էր, ըստ արուեստաբաններու: Մեր ժողովուրդը աշխարհի անդիմագիծ խառնամբոյսին միացնելը ծրագրուած է ամէն մակարդակի վրայ:

Յայտնի դարձաւ որ կը կատարուի արտաքին պատուէր մը մշակութային համարկումի ենթարկելու համար մեր ժողովուրդը: Ազգային արժէքները եւ կրօնքը կը կազմեն հիմերը մեր ազգին: Որեւէ տկարացում այս երկու սիւներուն, մենք պիտի յայտնուինք վտանգաւոր գօտիի մէջ: Ծրագրուած աշխատանք կը տարուի հայ ազգը համարկելու միջազգային անդէմ մշակոյթին մէջ: Այս կը կազմէ հիմը համաշխարհայնացում կոչուած համակարգին, որու նպատակն է հաստատել անդէմ եւ անգոյն ընկերութիւն մը, որու ստրկացումը դիւրին կը դառնայ միջազգային միաբեւեռ համակարգին կողմէ:

Եւրոպական Միութեան եւ Արեւմուտքի համակարգին մաս կազմող շատ մը պետութիւններ «լայիք» կամ անկրօն համակարգը որդեգրած են: Ըստ այս համակարգին, մարդը պէտք չէ կաշկանդուի կրօնական ուսուցումով: Ան ազատ է եւ որեւէ մէկու կամ համակարգի հաշուետու չէ: «Անհատ» մարդն է կորիզը մարդկութեան եւ ոչ թէ Քրիստոնէայ եկեղեցին, որ կը համարուի մարմինը քրիստոնէայ հաւատացեալներու համախմբումին, իր բարոյական արժեհամակարգով: Ուրեմն պահանջուածը մարդու անհատին պաշտամունքն է եւ ոչ թէ ընկերութեան բարոյական արժէքներուն: Այս է մեր ուզածը: Մենք ալ յս պատճառով պէտք է միանանք այս անկրօն ու անդէմ համակարգին: Ո՞ր մնացին մեր ազգային, նահապետական արժէքները: Բոլորը պիտի վաճառե՞նք այս շինծու համակարգին մաս կազմելու համար: Այս է հարցումը, որու պէտք է պատասխանեն մեր մտաւորականները եւ քաղաքական գործիչները:

Մշակութային համարկումը (cultural globalization) կը համարուի ազգային պետութեան հիմերը ներսէն տկարացնող քաղաքականութիւն: Ռուսիոյ Դաշնութեան առած քայլը պաշտպանելու համար Ռուդափառ եկեղեցին եւ ազգային արժէքները ողջունելի էին եւ կարելի է զանոնք որպէս օրինակ օգտագործել պայքարելու համար ազգի արժէքները նսեմացնող համակարգին դէմ, որ կը կոչուի համաշխարհայնացում:

Համարկումի հոլովոյթը ունի քանի մը երես: Կրօնական համարկում, ազգային արժէքներու համարկում, տեղեկատուական մարզի համարկում: Աղանդաւորական շարժումներ անսանձ կը գործեն Հայաստանի մէջ առանց որեւէ արգելքի: Կը տարածեն իրենց կեղծ վարդապետութիւնը առաջին քրիստոնէայ ժողովուրդի զաւակներուն մէջ: Կը քանդեն սուրբ եկեղեցին մէջէն: Կը քանդեն սրբութիւններ, կենսաձէ: Կառավարութիւնը ազատ խօսքի եւ խիղճի ազատութեան լոգունգին տակ թոյլ կու տայ անոնց սանձարձակ գործունէութիւնը: Մեռային ազատութիւնն ալ իր սեւ գործը կը կատարէ: Խիղճի ազատութեան լոգունգին տակ թոյլ կը տրուի ամէն բարոյական սանձարձակութիւն, «Եւրոպական համարկում» լոգունգին տակ Հայաստան կը մտցնեն ամէն տեսակ բարոյական սանձարձակութիւն: Իսկ տեղեկատուական դաշտը գրաւած են Արեւմուտքի համակիր լրատուամիջոցներ, որոնք վերոյիշեալ զարտուղութիւնները կը ներկայացնեն որպէս «բնական» եւ զարգացումի կարեւոր հանգրուան: Անոնց համար «զարգացում» բառը զարտուղութիւնը քողարկելու ամենալաւ միջոցն է:

Մարդարապատի հերոսները փրկեցին մեզ թուրքի սուրէն, ներկայիս ո՛վ պիտի փրկէ մեզ այն թուլութենէն որ կը հարուածէ մեր ազգը: Թուլութիւն որ ծրագրուած է եւ պիտի առաջնորդէ մեր ուժացումին որպէս մշակոյթ, լեզու եւ բարոյականութիւն որոնք հիմը քրիստոնէական հաւատքն է: Պէտք է շարժիլ քանի դեռ ուշ չէ: Աշխատելու ժամանակը հասած է:

Վ.Թոսունեան

«Պայքար» շաբաթաթերթ, 25 Մայիս 2025

Օգտագործուած աղբիւրներ.1. Wikipedia.org

2.«La Mondialisation Culturelle», Francois Chaubet, 2013

3. «Միոնիզմի եւ Բանթուրիզմի Առնչութիւնները», Մէթր Գ.Տէրտէրեան, 1990

ՕՐԷՆ ԿԱԽՈՒԱԾ, ԲԱՌԱՐԱՆԸ ՍՍՔԱԾ

ԼԵԶՈՒԻՆ ՄԷՋ ԾԱՄԾՍՈՒԱԾ՝ ՀԵ՛՛Գ ՄԻԱՄՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Պարոյր Յ. Աղպաշեան



Հայ ժողովուրդը հարուստ է իր բարեմասնութիւններով, առաւելութիւններով, յատկանշութիւններով, առաքինութիւններով, շնորհալիութիւններով, բարեյաջողութիւններով եւ, ընդհանրապէս, այն բոլոր ուշագրաւ յատկանիշներով, որոնք քիչ կը յայտնուին կամ կը նշմարուին այլոց մօտ:

Հայ ժողովուրդը հպարտ է, որ ինք նման բազմաշնորհութիւններով օժտուած է ու կը

պատկանի այն հազուագիւտներուն, որոնք միշտ ալ աչքի զարկած են իրենց բնատրոյթեանց ցայտուն երանգներով, փայլած՝ իրենց նուաճումներով եւ իրագործումներով:

Եթէ հայ ժողովուրդը չըլլար այդ ակունքներով զերյագեցած ծնունդ մը, այսօր դժուար թէ անոր մասին խօսուէր հիացմունքով, որպէս օրինակելի ու պատշաճելի ժողովրդահաւաքականութիւն մը:

Պատմութիւնը կը վկայէ նաեւ, որ հայ ժողովուրդը անկոտրում հաւատքով ու վճռականութեամբ կառչած մնացած է իր արմատներուն եւ ոչ միայն այդքան, այլեւ՝ իրեն յատուկ բնորոշումներով, զգացումներով եւ ապրումներով, ան կանգուն մնալու ու գոյատեւելու համարեա բոլոր հաւանական արգելքները յաղթահարած է:

Ջարմանալ թէ ոչ, զարմանալի թէ ոչ, ա՛յս եղած է հայ ժողովուրդի կեանքին ընթացքը, թառաչքը ու հոլովոյթը, որովհետեւ գիտակցած է այն ուժին ու հմայքին, որոնք իրեն համար եղած են ազնուագոյն նուիրականութիւններ եւ ասպետագոյն սեփականութիւններ:

Վստահաբար, աստոնք գրգռած են իր մօտիկ ու հեռաւոր հարեւաններուն նախանձը, ոխը եւ անկուշտութիւնը, յաճախ զինք թիրախ դարձնելով յարձակումներու ու հալածանքներու, շրջափակումներու ու բռնագրաւումներու, նոյնիսկ փորձելով զինք ոչնչացնել կամ բնաջնջել:

Եթէ իր ժամանակակիցներէն բազմաթիւ ժողովուրդներ «զոհ» զացած են այդ վայրագութիւններուն եւ անօրէնութիւններուն, սակայն, հայ ժողովուրդը մնացած է աննկուն, անյաղթելի եւ անընկճելի, որովհետեւ, իր հաւատքի ճամբան, համոզումի ուղին,



գաղափարի ընտրանքը, միշտ ալ փրկած է զինք, միշտ՝ օժանդակած իր ելիցին, միշտ ալ նպաստած՝ իր ինքնապահպանումին:

Այս տեղաշարժերը, հակառակ այն բոլոր աղէտներուն ու կործանարարութիւններուն, երբեք հանգիստ ու խաղաղ չեն ձգած զինք, բայց, ի գին բազում զոհողութիւններու, ան կրցած է խուսանաւել եւ ապացոյցը տուած է իր անսասանութեան:

Մակայն, այս վերագրումները, նկատառումներն ու մտորումները կը նշանակէ՞ն, թէ հայ ժողովուրդը ապրած ու գոյատեւած է անարգել եւ անխափան երթողիով մը կամ դիմացած է ու չէ վնասուած տիրող աննպաստ պայմաններէն եւ կամ՝ յաղթանակներն ու անպարտելիութիւնները եղած են իր բախտորոշութիւնները:

Քաւ լիցի:

Մեր ակնարկութիւնը ու մտածողութիւնը երբեք մեզ հոն չեն տանիր, չեն առաջնորդեր, ոչ ալ կը ձեւացնեն, այնքան ատեն, որ հայը բնաւ լրիւ հանգստաւետ ու խաղաղապաշտ երկնքի տակ չէ ապրած, առաւել՝ այդ ամբողջական երանութենէն յաճախ զրկուած է, սակայն, արտաքին ճնշումները միշտ ալ ենթարկուած են զսպուածութեան, հակադարձութեան ու հակազդեցութեան, հոգ չէ թէ՛ պարտուողականութիւններէն միշտ ալ տեղ մը կամ մասունք մը իրեն բաժին ինկած է:

Վերջին հաշուով, հայ ժողովուրդը, որքան ալ իր էութեան եւ ինքնութեան տէր ըլլար, անզիջողութեամբ թէ անտեղիտալիութեամբ, չէր կրնար իր «փրկութեան լաստ»երը լքել եւ ինքզինք նետել անորոշութեան գիրկը, ընդհակառակը, ան աւելիով եւ ոգելին ինքզինք ամրապնդուած կը զգար ու կը հաւատար, որ ատկէ դուրս ՉԻՔ այլ ելք, հետեւաբար, հոն կը տեսներ իր երաշխիքին գրաւականութիւնը ու հաւաստիքութիւնը, իրենց զանազան արտայայտութիւններով ու տպաւորութիւններով:

Այս խայտաբղէտ ու բազմատեսակ եղելութիւնները, որոնք եղած են (ու էին) հայ ժողովուրդին մնայուն եւ անխուսափելի պարտադրանքները, իրենց պատմականութեամբ, ժամանակագրութեամբ եւ աշխարհաքաղաքականութեամբ, արդեօք ինքնին ցուցանիշներ չէ՞ն, որ՝ որեւէ ժողովուրդ, ինչ գոյնի ալ պատկանի, ո՛ր ալ գտնուի, անշուշտ, պիտի չկարենայ հեզասահ եւ անսայթաք կեանք մը կամ պատմութիւն մը ունենալ, այլ ո՛ր մնաց, որ ան դառնայ իտէալական (իմա՝ ժողովրդավարական), երբ աշխարհը կը թքթքայ ու կը թփռտայ աջ ու ձախ, գլխիվայր ու գլխիվեր, ամէն ինչ յեղաշրջելով ու տապալելով:

Թերեւս (կամ ապահովաբար), այս արանքին պէտք է փնտռել, թէ ինչո՞ւ հայ ժողովուրդը իր հերոսական գոյամարտով, ազգաշինական պատկանելիութեամբ, հաւատարմագրական լիցքով եւ անպարտելիական ոգիով (թէկուզ սպիներով), չընկրկեցաւ ու չզինաթափուեցաւ, քանզի աներերութեամբ մնաց պատուանդանի վրայ, որքան որ իր ուժերը, հնարաւորութիւններն ու կարելիութիւնները թոյլատրեցին, բայց, ժամանակներու ու պայմաններու զարգացումին հետ, ատոնք մնացի՞ն նոյնը, ատոնք դարձա՞ն օգտաշատ, թէ մեծ մասը անոնց թռա՞ւ ու գնաց, իսկ հրապարակ նետուեցան ճիւղեր ու տերեւներ, ոսկորներ ու քղանցքներ:

Բնական է, պիտի չխօսիմ կամ կրկնեմ հայ ժողովուրդին պատմութեան վերելքներուն ու անկումներուն մասին, որոնք իրենց զանազան դերակատարութիւններով, գօտիներով ու մակարդակներով, կա՛ն ու մաս կը կազմեն ընթացիկ թէ արտընթացիկ կեանքին, որոնցմէ մաս մը յատկապէս իր տխուր, ցաւալի եւ ողբերգական տուեալներով, տակաւին կը թեւածէ իր գլխուն վերէ:

Այսօր, բարեբախտաբար, հայկական առումով, ոճրասփիւռ պայքարները, բիրտ հակամարտութիւնները ու ներքին քստմնելիութիւնները վերացած են, որովհետեւ անոնք



«պաղ-պատերազմ»ի ու «տաք բեւեռներ»ու արդիւնք էին եւ, այսօր, աստոնք չքացած են (կամ կը թուի թէ... շոգիացած են):

Կա յ աւելի յուսադրող եւ ոգեւորող ճշմարտութիւն, երբ հայութիւնը կ'ապրի ու կը վայելէ այդ անդորրութիւնը, իսկ ատիկա իրեն համար գերագոյն ու մեծագիր բարենիշ մըն է, որմէ պէտք է օգտուիլ ու սնանուիլ:

Այս դառն ճշմարտութեան պէտք է հաւատայ իւրաքանչիւր հայ, համոզուած ըլլալով, որ անիկա այն ամբակուտ բռունցքն է որ զինք կը պահէ ու կը զօրացնէ, ոչ միայն այսօրուան դիտարկումով, այլ նաեւ ապագայական:

Պէտք կա յ յիշեցնելու ու զգաստացնելու, որ հայութիւնը այլ տարբերակ չունի եւ չի կրնար ունենալ, բացի ոգեւին, գործնապէս ու հիմնովին հետեւելու ու որդեգրելու այս երթին անփոխարինելիութիւնը:

Հարցը այն է, որ այս ըղձանքը (կամ բերկրանքը) չի կրնար իրականանալ խօսքով, մտածումով կամ զգացականութեամբ, այլ՝ զայն պէտք է խմորել, ձուլել ու տրորել՝ գործով, նուիրումով, հաւատքով եւ արդիւնքով:

Զմոռնա՛լ, ինչպէս այլուր, Միջին Արեւելքը եւս կ'անցնի խիստ փորձանաւոր ու վտանգաւոր հանգրուաններէ, ուր հայկականութիւնը սկսած է տժգունիլ (այսինքն՝ զինք տժգունեցնել), իսկ այդ վիշապանակողմերուն հետ, ինչպէ՞ս կարելի պիտի ըլլայ յարաբերիլ, երբ անոնք ամէն կողմ են եւ ամէն ուղղութեամբ կը խլրտին, իսկ այդ շարժերուն հետեւանքները արդէն զգալի են եւ, հետեւաբար, կրնան աւելի քանդել եւ աւելի յեղաշրջելի դառնալ:

Սուրիահայութեան սիրտ այրող ճակատագիրը, արդէն բոլորին ծանօթ է, տարիներէ ի վեր զայն անճիտելով եւ անգօսնելով, ուր մեր պանծալի ու հրաշագեղ «ԹԹԽՄՈՐ»ը, այնքան անոյշ ու համեղ, դարձուցին... լեղի, դառն ու... թոյն:

Ցաւալի է, որ՝ երբ Հայաստանը ստացած է իր անկախութիւնը ու գեթ զայն վայելելու եւ անորմով հպարտանալու առիթները պիտի ըլլային հայ ժողովուրդին համար յուսապսակ ճակատներ ու ճրագներ, այսօր, կը տեսնենք, թէ հոն ալ կը տիրեն, առնուազն, սուր ու մուգ, պիրկ ու ձգտուած պայմաններ, որոնք չեն զիտեր, վաղը կամ միւս օրը ի՞նչ կրնան յուշել եւ ո՞ր կրնան առաջնորդել հայրենիքը, իր ժողովուրդով ու տարածքով:

Անկեղծ դիտարկումով, երբ լիբանանեան քաղաքապետական ու թաղապետական ընտրութիւններու լուսարձակներով կը խորաչափենք, ինչ որ տեղի կ'ունենայ (եւ պիտի ունենայ) այս ստուգատեսներուն մէջ, ինքնին ո՞ր պէտք է տեսնել լիբանանահայութեան դերն ու դերը, որպէս համայնքային ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ, ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ ու ՄԷԿՈՒԹԻՒՆ:

- Պէ՞տք է միասնականութեան ԳՈՐԾՈՂ լծակներ տեսնել հոն:
- Պէ՞տք է միասնականութեան ՀԱՄԱԽՈՒՄԲ ազդակներ գտնել հոն:
- Պէ՞տք է միասնականութեան ԿԵԴՐՈՆԱԶԻԳ տուեալներ նշմարել հոն:
- Պէ՞տք է միասնականութեան ԵՐԵՒՈՅԹՆԵՐ արձանագրել հոն:
- Պէ՞տք է միասնականութեան ՈԳԻ զգալ հոն:

Հարցադրումները՝ կը ձգուին ու կը բնորոշուին, դիտորդներուն ու մասնակիցներուն կողմէ: Այդուհանդերձ, երբ լիբանանահայ ղեկավարութիւններ (իրենց զանազան պատկանելիութիւններով), կը պոռան, կը պահանջեն, կը յորդորեն, կը քարոզեն, կը լոզուցեն զաղութային միասնականութեան, միաբանութեան ու մէկտեղութեան մասին, ինչ որ բացարձակ իրականութեան ու ճշմարտութեան, արդարութեան ու հաւատարմութեան իրաւունք է, ինչո՞ւ, այդ պարագային, զանոնք չեն գործադրուիլ, թէկուզ, ՄԱՍԱՄԲ (՝) տնօրինումով, բայց, կը տեսնենք, թէ աստոնք տեղի կ'ունենան, աւելի քան, քիչ մը... կաղաքումներով, կողմնակալութիւններով եւ կամ՝ անիրաւութիւններով:



Դժբախտաբար, հայութեան մօտ, ամենէն խոցելի ու կոտտալի կողմը հանդիսացած է... ՄԻԱՄՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ անգործածելիութիւնն ու բացակայութիւնը, թէև զայն միշտ փնտռող եղած է, օրինաճ, ոգեւորած, իրախուսած ու հետապնդած, բայց, ոչ մէկ ձեւով ան իրականացած է, որովհետեւ, անիկա միայն շահագործուած է, խեղաթիրուած, նոյնիսկ... սեփականացուած եւ արգելափակուած:

Եկեղեցին, կուսակցութիւնները, միութիւնները, բոլոր շրջանակները կը խօսին միասնականութեան մասին, կը պահանջեն անոր իրագործումը, բայց, երբ զանգը հնչէ, երբէք չեն պակսիր զայն մոռցողներ, երես դարձնելով անկէ:

Այս քարքարոտ եւ աւազախրոտ ճամբաներով, ինչպէ՞ս կարելի է միասնականութեան անունով երդուիլ, բայց, նոյնհետայն... թաղուիլ անոնց մէջ եւ սպասել օր մը անոր վերածնունդին, որ կրնա՞յ զալ, կրնա՞յ երեւնալ կամ կրնա՞յ մարմնաւորուիլ:

Դառն փորձառութիւնները, փխրուն խոստումները, դիւրաբեկ խօսքերը ու մակերեսային ելոյթները, ո՛չ երէկ, ո՛չ այսօր, ոչ ալ վաղը կրնան յուսադրել կամ բան մը փոխել, երբ կարաւանային տեղաշարժերը, հազի՛ւ թէ հաւատքի յոյսեր ներշնչեն...:

(Պէլրութ)

15/5/2025

ԱԶՐՊԷՅՃԱՆԻ «ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԱՆՑՔ»Ի ԵՐԱԶԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱԿԱԶԴՈՒՄԸ

Յարութիւն Իսկահատեան – Պէլրութ



Վերջերս Ազրպէյճանի բռնատէր Իլիհամ Ալիեւի բերնէն շատ կը լսենք «Արեւմտեան Ազրպէյճան» արտայայտութիւնը, ուր ան կ'ակնարկէ Հայաստանի Հանրապետութեան կարգ մը շրջաններուն իբր թէ ազերիական պատկանելիութեան: Այլ ազերի պատասխանատուներ, ինչպէս նաեւ «վերլուծաբաններ» սոյն պահանջքը արդարացնելու ունայն փորձով զայն կը կոչեն

«Յետադարձական պահանջք», իբրեւ թէ այդ ակնարկուած հողերը ստեն մը պատկանած ըլլային Ազրպէյճանի, որ պատմական իրականութեան կը հակասէ:

Այս հարցը պատմաբան Գեորգ Եազըճեան կը լուսաբանէ հետեւեալ ձեւով.- «Զանգեզուր-Մինիքը հայկական եղած է պատմականօրէն, բայց անոր պատկանելութիւնը վերջին հարիւրամեակներուն յստակ չէ եղած, քանի որ ամբողջ տարածաշրջանը 16-րդ դարու սկիզբէն գտնուած է օտար տիրապետութեան տակ՝ մեծ մասամբ պարսիկներու, կարճ ժամանակներով օսմանցի թուրքերու, 1828-էն ռուսերու: Այս երէք կայսրութեանց ժամանակ ո՛չ անկախ Հայաստան կար, ո՛չ ալ Ատրպէյճան անուանումը: Հայերուս հաճոյանալու համար, Նիքոլայ Ա. կայսրը 1830-ին ստեղծեց Հայկական Մարզ անունով վարչական միաւորը Ռուսական Կայսրութեան ծիրին մէջ, բայց 1840-ին լուծարեց այդ միաւորը: Զանգեզուրը այդ տասը տարիներուն այդ մարզին մէջ կը գտնուէր: Սակայն զգոյշ պէտք է ըլլալ, որ անոր անունն հայկական ըլլալը պէտք չէ խաբէ մեզ. ան ռուսական վարչական միաւոր էր: Պարզապէս հայերս սիրաշահելու համար՝ Նիքոլայ կայսրը այդ քայլին դիմեց,



քանի որ խոստացեր էր հայոց թագաւորութիւնը վերականգնել: Բայց ինչպէս կը տեսնենք, խոստում կու տան սակայն չեն յարգեր:

«1918-ին Հայաստանն ու Ազրպէյճանը յայտարարեցին իրենց անկախութիւնը, երկուքն ալ կը յաւակնէին ոչ միայն Միւնիքին, այլեւ Արցախին ու Նախիջեւանին: 1919-ին այդ տարածքին մէջ յայտնուած բրիտանացիները Արցախը տուին Ազրպէյճանին, Նախիջեւանը՝ Հայաստանին, Միւնիքն ալ յայտարարեցին վիճելի: Այսպէս ըրին որպէսզի այս երկու պետութիւնները միշտ իրարու դէմ հանեն (անգլիական արաւորական բաժնէ որ տիրեալի նենգութիւնը): Եթէ տրամաբանութեան երթանք, պետք է որ ճիշդ հակառակը ընէին՝ 95 տոկոս հայութեամբ Արցախը տրուէր Հայաստանին, 40-42 տոկոս հայութեամբ Նախիջեւանը՝ ազերիներուն: Իսկ երբ 29 նոյեմբեր 1920-ին յայտարարուեցաւ Հայաստանի խորհրդայնացումը, Ազրպէյճանի Յեղափոխական Կոմիտէի նախագահ Նարիման Նարիմանովը յայտարարեց, այդ յայտարարութիւնը տպուած է երեք լեզուներով՝ հայերէն, արաբատառ թաթարերէն եւ ռուսերէն, որ իբրեւ եղբայրական քայլ Ազրպէյճանը Հայաստանի տարածք կը ճանչնայ Ղարաբաղը, Չանգեզուրն ու Նախիջեւանը: Քանի մը շաբաթ ետք երբ դաշնակցականներ ապստամբութիւն բարձրացուցին եւ գրաւեցին Երեւանը, ազրպէյճանցիք պոլշեիկ ռուսերու դրդումով յետս կոչեցին իրենց այդ յայտարարութիւնը: Մէկ խօսքով, Միւնիքը պաշտօնապէս եւ իրողապէս երբեք չէ եղած Ազրպէյճանի մաս»:

Այս բացատրութեան աւելցնենք պատմական ստոյգ իրականութիւն մը, թէ Խորհրդային Ազրպէյճանի պահանջքով, Խորհրդային Հայաստանի մէջ ապրող 50 հազար ազերիներ 1950-ական թուականներուն կամովին եւ իրենց բոլոր ստացուածքը՝ տուն, արտ, ընտանի կենդանիներ, եւ այլն հայոց վաճառելով ու անոնց համարժէք գումարը ստանալով, լքեցին ու մեկնեցան Ազրպէյճանի հարաւի Մուղանի անապատային տափաստանին մէջ բամպակամշակութեամբ զբաղելու: Կարելոր է շեշտել թէ բոլոր ազերիները, որոնք կամովի լքած են Հայաստանի Հանրապետութեան տարածքը, լիովին ստացած են իրենց վաճառած տուններուն, արտերուն եւ բոլոր ստացուածքներուն համարժէք գումարները: Ազրպէյճանի մէջ ապրող հայոց պարագան այդպէս չէ եղած, ազերիները յափշտակելով հայոց ստացուածքները, սպաննած կամ բռնագաղթեցուցած են զանոնք:

Վերոյիշեալ փաստարկութիւններու լոյսին տակ կրնանք հաստատել, թէ Ալիեւի ու ազերի այլ պատասխանատուներու Հայաստանի Հանրապետութեան տարածքներուն վերաբերեալ պահանջքի յայտարարութիւնները անհիմն են, կը հակասեն պատմական իրողութիւններու եւ փաստերու, ուրեմն զառանցանքներ են:

Գրեթէ ամէն օր Ազրպէյճանն ու Թուրքիան Չանգեզուրի անցքը բանալու անհրաժեշտութեան մասին կը խօսին, պատճառաբանելով որ անոր բացումը նշանակալից կերպով պիտի բարձրացնէ Երջանի տնտեսութեան մակարդակը: Ըստ Պաքուի եւ Անգարայի, սոյն անցքին բացման օրինաւորութիւնը կը յենի Արցախի երկրորդ պատերազմէն ետք կայացած 10 Նոյեմբեր 2020-ի համաձայնութեան վրայ:

Վերլուծաբան Բենիամին Պօղոսեան Չանգեզուրի եւ այլ հարցերու մասին իր «Անցքերու Պատերազմ»ի վերաբերեալ Վիճաբանութիւնը Իրականութեան Վրայ Չէ Հիմնուած» խորագիրով յօդուածին սկիզբը կ'ըսէ, թէ 10 Նոյեմբեր 2020-ի եռակողմանի համաձայնութեան մէջ միայն Լաչինի անցքն է որ կը յիշուի եւ ոչ մէկ ակնարկութիւն կայ Չանգեզուրի կամ այլ անցքի մասին: Այս համաձայնութեան մէջ Ազրպէյճան «անցք» բառին յենելով իր ցանկատեսական փափաքը կը յայտնէ՝ Չանգեզուրէն անցք մը ապահովելու երազով, որպէսզի իր ապրանքները բեռնատարերով ու շոգեկառքերով Հայաստանի հողերէն անցընելով Նախիջեւան ու Թուրքիա հասցընէ եւ հոնկէ ալ հակառակ ուղղութեամբ թրքական ապրանքները դէպի Պաքու, առանց հայկական սահմանային քննութեան, անցագիրի եւ մաքսային պարտաւորութեանց: Կարգ մը ազերի պատասխանատուներ



մեղմացնելու համար այս երազի ցնորքը, կ'առաջարկեն անցք բառը փոխարինել «մասնաւոր ուղիղ անցակէտ» արտայայտութեամբ:

Հայաստան հաստատակամօրէն կը մերժէ «Զանգեզուրի Անցք» կոչեցեալ որեւէ գաղափար, ըսելով թէ եռակողմանի համաձայնութիւնը, որ հաղորդակցութեան վերականգման մասին կը խօսի, բաձարձակապէս կապ չունի Հայաստանի Հանրապետութեան հողերէն անցնող որեւէ անցքի հետ: Հայաստան չընդունիր Ազրպէյճանի առաջարկը, մանաւանդ որ իբր թէ այդ անցքը առանց հայկական հսկողութեան պիտի ըլլայ, անկախ անկէ թէ ի՞նչ կը կոչուի ան՝ «անցք» թէ «ուղիղ անցակէտ» կամ որեւէ այլ բան:

Բենիամին Պօղոսեան կ'ըսէ թէ այս միջոցին մէկ այլ վիճաբանութիւն մըն ալ սկիզբ առած է շրջանին մէջ: Հարցը հիւսիս-հարաւ եւ արեւելք-արեւմուտք հաւանական ստեղծուելիք անցքերուն մասին է, թէ ո՞ր մէկը աւելի հաւանականութիւն ունի գոյութիւն առնելու կամ ո՞ր մէկը ընդունելի պիտի դառնայ բոլորին կողմէ: Հիւսիս-հարաւ անցքը պիտի ապահովէ Հնդկաստանէն ապրանքներ փոխադրելը դէպի Եւրոպա, անցնելով Իրանէն, Հայաստանէն, Վրաստանէն եւ Սեւ Ծովէն ու հասնի Եւրոպա, նաեւ հակառակ ուղղութեամբ Եւրոպայէն դէպի Հնդկաստան: Յարդ Ազրպէյճան, Ռուսիա եւ Թուրքիա կողմնակից են արեւելք-արեւմուտք անցքի գոյացման, իսկ ԱՄՆ, Եւրոպական Միութիւն, Իրան, Հայաստան ու Հնդկաստան հիւսիս-հարաւ անցքին:

Այս երկու ուղղութեամբ անցքերուն ծրագիրները Հարաւային Կովկասը դարձուցած են կարելոր կեղրոն մը, ուր սուր մրցակցութիւն գոյութիւն առած է խնդրոյ առարկայ երկիրներու միջեւ:

Հիւսիս-հարաւ անցքին համար երկու տարբերակներ կան: Առաջինը՝ Հնդկաստան, Իրան, Հայաստան, Վրաստան, Սեւ Ծով, Եւրոպական Միութիւն: Իսկ երկրորդը՝ Իրան, Ազրպէյճան եւ Ռուսիա, որ պիտի հասնի մինեւ Եւրոպա:

Հայաստան ծրագիր մշակած է կառուցելու Միւնիքը կտրող նոր մայրուղի մը՝ միացնելու համար Իրանը Հայաստանի, շրջանցելով լեռնային շրջանները: Եւրոպական Միութիւնը 600 միլիոն եւրօ պիտի տրամադրէ այս ծրագրին՝ Միսիան-Քաջարան հատուածին համար: Հայաստան ֆինանսաւորման այլ աղբիւրներ եւս կը փնտռէ որպէսզի կարենայ մայրուղիին միւս հատուածները կառուցել: Միսիանէն մինչեւ Իրանի սահման մայրուղիի կառուցումը կը պահանջէ 1,5 միլիարդ ԱՄՆ տոլար եւ կառուցման աւարտը նախատեսուած է 2029-2030-ին: Միայն այս ծրագրին աւարտով Հայաստան պիտի կարենայ մաս կազմել Հնդկաստան-Եւրոպա ճանապարհային անցքին:

Հիւսիս-հարաւ եւ արեւելք-արեւմուտք անցքերու ծրագիրներու շուրջ ներկայի վիճաբանութիւնները առ այժմ վերացական աշխարհաքաղաքական ըսի-ըսաւներու տպաւորութիւն կու տան, քան թէ գործնական իրականութեան քննարկում:

Հայաստանը այլ առաջարկ մըն ալ կատարած է, որ անուանած է Խաղաղութեան Խաչմերուկ, սակայն շեշտելով որ Հայաստանի հողերուն վրայէն անցնող որեւէ անցք միայն Հայաստանի կողմէ պիտի վերահսկուի: Ներկայիս այս իրավիճակն է որ կը տիրէ այդ շրջանին մէջ, առանց յստակ դարձնելու թէ ի՞նչ արդիւնք կ'ունենան այս ծրագիրները, քանի որ յատկապէս քաղաքական վերիվայրումներէ կախուած է անոնց ճակատագիրը:

ԺԱՄԱՆԱԿՆ Է ԴԱՏ ԲԱՆԱԼՈՒ ԹՈՒՐՔԻՈՅ ԴԷՄ, ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՅԱԻԵԼԵԱԼ ՃԱՆԱՉՄԱՆ ԿԱՐԻՔ ՉԿԱՅ

Յարութ Սասունեան



www.TheCaliforniaCourier.com

1915 թուականի Հայոց ցեղասպանութենէն ի վեր հայերը անդադար պայքարած են աշխարհին տեղեկացնելու Օսմանեան կայսրութեան կողմէ գործուած 1.5 միլիոն հայերու համակարգուած ոչնչացման մասին:

Իբրեւ արդիւնք, աւելի քան 30 երկիրներ, շարք մը միջազգային կազմակերպութիւններ եւ առաջատար ցեղասպանագէտներ ճանչցած են Հայոց ցեղասպանութեան ճշմարտացիութիւնը: Այս բոլոր ճանաչումներէն ետք Հայոց ցեղասպանութիւնը դարձած է ընդունուած իրողութիւն՝ ուղղակի կշտամբանք Թուրքիոյ ժխտողական քարոզչութեան:

Յաւրթ քանի մը կարեւոր երկիրներ, ինչպէս՝ Միացեալ Թագաւորութիւնը եւ Իսրայէլը, տակաւին չեն ճանչցած զայն, ոչ թէ անտեղեկութեան, այլ քաղաքական նպատակայարմարութեան եւ Թուրքիան հանդարտեցնելու իրենց փափաքին պատճառով: Այսպիսով ճանաչման հետապնդման դարաշրջանը պէտք է աւարտած նկատել:

Հարցը այն է, որ տասնամեակներ շարունակ Յեղասպանութեան ճանաչման արշաւներէն ետք հայերն ու օտարները, որոնց կարգին թուրք պաշտօնեաները, սխալ եզրակացութեան հասած են, որ՝ ճանաչումը վերջնական նպատակ է: Ասիկա հիմնական թիրիմացութիւն է: Մեր իսկական պահանջները փոխհատուցումն ու Արեւմտեան Հայաստանի վերադարձն են: Երբ Թուրքիան անդրադառնայ, որ Յեղասպանութեան ժխտումը պիտի չարգիլէ հայ ժողովուրդը հետապնդելու այս միւս երկու նպատակները, Անգարան կրնայ վերջապէս տեսնել իր ժխտողական արշաւին ունայնութիւնը:

Այնուամենայնիւ, Յեղասպանութեան ճանաչման համաշխարհային արշաւը ապարդիւն չէր: Աշխարհը այժմ գիտէ Հայոց ցեղասպանութեան ճշմարտութիւնը: 110 տարի ետք թրքական կառավարութիւնը տակաւին կը բախի իր նախորդ վարչակարգին կողմէ գործադրուած նողկալի յանցագործութիւններու ամօթալի յիշեցումներուն:

Բայց եւ այնպէս, պարզապէս Հայոց ցեղասպանութիւնը ճանչնալն ու ներում հայցելը պիտի չբուժեն վերքերը, ոչ ալ պիտի վերացնեն գործուածին հետեւանքները: Հայերը տակաւին կը սպասեն արդարութեան, իրենց պատմական իրաւունքներու վերականգնման եւ բռնագրաւուած հողերու ու ունեցումաձքի վերադարձին:

1915 թուականին Օսմանեան կայսրութիւնը համակարգուած արշաւ կատարեց՝ արմատախիլ ընելու ամբողջ ազգ մը իր նախնիներուն հայրենիքէն՝ գրկելով վերապրածները իրենց տուններէն, հայրենի հողերէն, մշակութային ժառանգութենէն, եկեղեցիներէն եւ անձնական ունեցումաձքէն: Հայ ժողովուրդին դէմ գործադրուեցաւ մեծ անարդարութիւն, որ անոր, ինչպէս հրեական Ողջակիզումի պարագային, իրաւունք կու տայ օրինական փոխհատուցում ստանալ իր հսկայական կորուստներուն համար:



Հատուցումը կրնայ ըլլալ բազմաթիւ ձեւերով: Իբրեւ առաջին կարելորագոյն քայլ՝ Թուրքիոյ Հանրապետութիւնը պէտք է բոլոր 2500 հայկական եկեղեցիները վերադարձնէ հայկական վերահսկողութեան՝ զանոնք դնելով Պոլսոյ Հայոց պատրիարքարանի իրաւասութեան ներքոյ: Այս բռնագրաւուած եկեղեցիները, որոնք վերածուած են մզկիթներու, ախոռներու, պահեստանոցներու կամ քանդուած են, պէտք է վերադարձուին իրենց օրինական տէրերուն:

Այսօրուան Թուրքիոյ Հանրապետութիւնը՝ իբրեւ Օսմանեան կայսրութեան իրաւայաջորդ պետութիւն, պէտք է իրաւական պատասխանատուութիւն կրէ Յեղասպանութեան եւ անոր շարունակական հետեւանքներուն համար: Թուրքիան ժառանգած է Օսմանեան կայսրութեան ունեցուածքները, հետեւաբար ժառանգած է նաեւ անոր պարտաւորութիւնները:

Ցաւօք, Հայոց ցեղասպանութեան վերաբերող նախագահական հռչակագիրները եւ Քոնկրետին կողմէ որդեգրուած յիշատակման բանաձեւերը օրէնքի ուժ չունին, հետեւաբար, իրաւական արժէք չեն կրնան ունենալ:

Առանց երկար սպասելու, նկատի ունենալով, որ հայերը արդէն սպասած են աւելի քան մէկ դար, անոնք պէտք է իրաւական քայլերու ձեռնարկեն միջազգային եւ ազգային դատարաններու միջոցով, ներառեալ.

- Արդարադատութեան միջազգային դատարանին (Համաշխարհային դատարան), ուր միայն պետութիւնները ունին նման իրաւասութիւն,
- Մարդու իրաւունքներու եւրոպական դատարանին,
- Միացեալ Նահանգներու դաշնակցային դատարաններուն, ինչպէս նաեւ այլ երկիրներու դատարաններուն:

Հայաստանի ներկայի կառավարութիւնը ոչ մէկ շահագրգռուածութիւն ունի Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ դատական հայցեր ներկայացնելու Միջազգային դատարանին մէջ՝ ընդդէմ Թուրքիոյ, ուստի ամերիկահայերը պէտք է ձեռնարկեն իրաւական գործողութիւններու: Այլ խորհրդանշական բանաձեւի մը համար պայքարելու փոխարէն, անոնք պէտք է լոպիինկ կատարեն Ներկայացուցիչներու տան եւ Ծերակոյտին մէջ՝ երկարաձգելու վաղեմութեան ժամկէտը, ինչ որ կարելիութիւն պիտի տայ հայերուն դատական հայցեր ներկայացնել՝ Յեղասպանութեան պատճառով իրենց կրած նիւթական կորուստներու հիման վրայ:

Երբ Ներկայացուցիչներու տունն ու Ծերակոյտը որդեգրեն նման օրինագիծ, անիկա պիտի ուղարկուի նախագահին՝ ստորագրութեան համար: Այս օրէնսդրութիւնը պիտի համապատասխանէ Ողջակիզումի փոխհատուցման վերաբերեալ գործող օրէնքներու իրաւական շրջանակին, ինչպիսիք են՝

- «Ողջակիզումի զոհերու փոխհատուցման մասին» օրէնքը, որ որդեգրուած է Միացեալ Նահանգներու Քոնկրետին կողմէ, 1998 թուականին,
- «Ողջակիզումի ժամանակ բռնագրաւուած արուեստի գործերու վերականգնման մասին 2016 թուականի օրէնքը»,



- Քալիֆորնիոյ ժողովի 2867-րդ օրինագիծը՝ «Հալածանքներու պատճառով կորսուած արուեստի գործերու եւ անձնական ունեցումաձքի վերականգնում», որ ստորագրուած է նահանգապետ Կելին Նիւսըմի կողմէ 2024 թուականին:

Երբ դատեր բացուին Միացեալ Նահանգներու դատարաններուն մէջ, անոնք պիտի գրաւեն ամբողջ աշխարհին ուշադրութիւնը՝ ստիպելով Թուրքիան իրաւական մակարդակի վրայ առերեսուելու իր յանցաւոր անցեալի հետ: Այդ պարագային թրքական կառավարութեան կողմէ Յեղասպանութեան շարունակական ժխտումները պիտի դառնան անիմաստ:

Միացեալ Նահանգներու դատարանները կրնան օրինական կերպով պարտադիր վճիռներ կայացնել՝ պահանջելով Թուրքիայէն փոխհատուցում վճարել հայերուն անոնց կորուստներուն համար: Եթէ Թուրքիան մերժէ կատարել այդ պահանջը, դատարանները կրնան որոշում տալ Միացեալ Նահանգներու մէջ գտնուող եւ թրքական կառավարութեան պատկանող բոլոր սեփականութիւններու, օրինակ շէնքերու, դրամատնային հաշիւներու եւ «Թրքական օդանաւային ընկերութեան» պատկանող օդանաւերու բռնագրաւման վերաբերեալ:

Այս պատմական իրաւական պայքարին սկսելու համար հայերը պէտք է անյապաղ ձեռնարկեն երկու գործողութիւններու.

- 1) Լոպիինկ կատարել Քոնկրետին մէջ՝ այս պահանջները արտօնող օրէնք ընդունելու համար,
- 2) Վարձել միջազգային իրաւունքի ոլորտին մէջ մասնագիտացած լաւագոյն իրաւաբաններ:

Եթէ հայերը յաղթեն դատարանին մէջ, Յեղասպանութեան ճանաչման վերաբերեալ բանավէճը անտեղի պիտի դառնայ: Միացեալ Նահանգներու դատարանի նման որոշում մը գործադրելու որեւէ դիմադրութիւն կամ մերժում՝ թրքական կառավարութեան կողմէ, դիւանագիտական եւ իրաւական լուրջ ճգնաժամ պիտի յառաջացնէ Անգարայի եւ Ուաշինկթընի միջեւ:

Ահա թէ ինչպէ՛ս հայ ժողովուրդը կրնայ վերջապէս հասնիլ արդարութեան՝ ոչ թէ յաւելեալ ճանաչման, այլ դատական յաղթանակներու միջոցով:

ԹՐՔԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԻՒԼԷԱԿԱՆ ՈՒԺԱՆԻԻԹԻ ԿԱՐԵԼԻՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Յարութիւն Իսկահատեան- Պէյրութ

Թուրքիոյ հիւլէական գործունէութիւնը սկսաւ «Հիւլէական Ներուծի Խաղաղասիրական Գործածութիւններու» նպատակով 1955-ի Սեպտեմբերին, Ջուիցերիոյ Ժընեւ քաղաքին մէջ կայացած խորհրդաժողովէն անմիջապէս ետք: 1961-ին թրքական կառավարութիւնը «Չէքմէճէի Կորիզային Հետազոտութիւններու Եւ Վարժութիւններու Կեդրոնին» յանձնարարած էր ունենալ մէկ մեկաուաթ կորիզային փորձարկութեան (1 MW test reactor) գործիք մը: 1973-ին թրքական էլեկտրականութեան հաստատութիւնը որոշեց կառուցել 80 մեկաուաթ էլեկտրականութեան արտադրութեան համար հիւլէական գործարան մը:



Այս ծրագիրը իրագործելու համար, 1976-ին Մելեկիայէն 45 քլմ. հեռու Աքքույու կոչուած վայրը ընտրուեցաւ իբրեւ հիւլէական գործարանին հաստատման տեղը: Թուրքիոյ կառավարութիւնը թէեւ այս ծրագրին իրագործման համար արտօնութիւն ստորագրեց, սակայն գործադրութիւնը չձեռնարկեց երկու պատճառներով: Առաջինը՝ տնտեսական նեղութեան, իսկ երկրորդը՝ պետութիւնը աւելի նպաստաւոր ու շահաբեր կը նկատէր երկրին

Ելեկտրական գործարանները, որոնք հանքածուխով կ'աշխատէին: Մինչ հիւլէական գործարանի շինութիւնը սկսած էր, կառավարութիւնը 1986-ին դադրեցուց այդ գործը եւ փակեց կորիզային հարցերու գրասենեակը, Խորհրդային Միութեան Չերնոպիլ կորիզային կայանի արկածին պատճառով:

Այդուհանդերձ 1993-ին Թուրքիոյ կառավարութիւնը ծրագրեց կորիզային գործարան մը հիմնել: Շինարարութեան գործին համար առաջարկներ ներկայացուցին զանազան ընկերութիւններ, ինչպէս «Գանատայի Հիլէական Ներուժ», «Ելեկտրական Ուեսթինկհաուս - Միթսուպիչի Ծանր Ճարտարարուեստ» եւ «Ֆրամաթոմ Միմընգ» ընկերութիւնները: Թրքական կառավարութեան տնտեսական դժուարութիւններու պատճառով այս գործարանի շինութիւնը յետաձգուեցաւ ցնոր տնօրինութիւն:

2004-ին Թուրքիոյ Ուժանիւթի Եւ Բնական Հարստութիւններու նախարար Հիլմի Կիլեր ձեռնարկեց անմիջական կապեր հաստատել այն երկիրներուն հետ, որոնք տիրացած են հիւլէական հարցերու արհեստագիտութեան եւ ունին բոլոր կարելիութիւնները ընդառաջելու թրքական հիւլէական գործարանի մը շինութեան պատասխանատուութեան: 2006-ին նախարար Կիլեր յայտարարեց թէ Մեւ Ծովի ափին, Մինոփ քաղաքին մէջ առաջին հիւլէական գործարանը պիտի կառուցուի: Ըստ Միջազգային կորիզային ընկերակցութեան, Մինոփի ծովու ջուրին ջերմաստիճանը ընդհանրապէս հինգ աստիճան պակաս է Աքքույուի հիւլէական կայանի ջուրէն, որ աւելի նպաստաւոր է կորիզային մեքենաներուն համար: Մինոփի գործարանին մէջ 100 մեկաուաթ ելեկտրականութիւն արտադրող ելեկտրածին մեքենայ մը զետեղելու եւ գործածելու կարելիութիւնը պիտի ստեղծուի: Ծրագիրը կը նախատեսէ ամբողջ երկրին մէջ հաստատել կորիզային ելեկտրածին մեքենաներ, որոնց ընդհանուր հաւաքական արտադրութեան տարողութիւնը պիտի հասնի 5000 մեկաուաթի: Թրքական Խորհրդարանը 2007-ին օրէնք մը անցուցած էր, որ աւելի լայն իրաւասութիւններ տալու առիթ մըն էր Թրքական Կորիզային ներուժի ընկերակցութեան, ծրագրելու եւ գործադրելու հիւլէական ոլորտին մէջ ելեկտրածին մեքենաներու գործարաններ կառուցելու:

Թուրքիա ԱՄՆ-ի Անհատական նախաձեռնողներու միութեան հետ հիւլէական ոլորտի մէջ համաձայնութիւն մը ստորագրեց 2008-ին: Նման համաձայնութիւն մը գոյացաւ 2010-ին Թուրքիոյ եւ Հարաւային Քորէայի, իսկ Չինաստանի հետ 2012-ին:

Երկրորդ համաշխարհային պատերազմի վերջաւորութեան Ճաբոնի Հիրոշիմա եւ Նակագաքի քաղաքներուն վրայ ԱՄՆ-ի նետած հիւլէական ռումբերու պայթումներէն ետք, հզօր պետութիւնները հետամուտ դարձան լրտեսական ցանցերու միջոցով իրարմէ տիրանալու ընդհանրապէս գիտական ու մանաւանդ հիւլէական ոլորտի գիտերու զաղտնիքներուն: Այս տեսակի գործունէութեանց ընթացքին բազմաթիւ գիտնականներ զոհ զացած են սպանութիւններու եւ չեզոքացումներու: Հինգ հզօր պետութիւններ միայն՝ ԱՄՆ, Ռուսիա, Ֆրանսա, Բրիտանիա եւ Չինաստան սկիզբէն տիրացած են հիւլէական զէնքերու զաղտնիքներուն ու անոնց ճարտարարուեստին, այդ պատճառով ալ ՄԱԿ-ի մէջ բացառիկ



դիրք կը զբաղցնեն՝ ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդին մէջ Վեթօ գործածելու (որոշում մը մերժելու) իրաւունքով:

Վերադառնալով Թուրքիոյ ժամանակակից հիւլէական գործունէութեան, 2018-ին Ռուսիոյ հետ Մերսինի Աքքոյոյ կայանին մէջ երրորդ կորիզային մեքենայ մը հաստատելու համաձայնագիր ստորագրեց: Շնորհիւ իր առաւելութիւններուն ռուսական այս գործակցութիւնը Թուրքիոյ հետ պիտի սահմանափակէ վերջինիս կախուածութիւնը այլ երկիրներէ: Այս ծրագիրն ու անոր գործադրութիւնը ամբողջովին կը ֆինանսաւորուի Ռուսիոյ կողմէ: Ռուսիա հետամուտ է անոր եկամուտներու շահի իր բաժինը ստանալ կանոնաւորաբար: Այս ծիրին մէջ ԱՄՆ-ի Ուժանիթի եւ բնական հարստութիւններու նախարարութեան տնօրէն Հենրի Տ. Սոքոլսքի, թաքուն դժգոհութեամբ անտուղակիօրէն քննադատեց Թուրքիոյ Ռուսիոյ հետ այս գործակցութիւնը եւ յիշեցուց Թուրքիոյ ԱՄՆ-ի հետ այլ գործառնութիւններու պայմանները:

Աքքոյոյի հիւլէական գործարանի երրորդ ելեկտրածին մեքենայի ծրագրին ծախսերը կը հասնին մինչեւ 20 միլիարտ տոլարի: Մասնագէտներ ուշադրութիւն կը հրաւիրեն այն պարագային վրայ, թէ Աքքոյոյ կը գտնուի երկրաշարժային գոտիի մէջ եւ սխալ ընտրութիւն եղած է հիւլէականի այդ վայրը: Ամէն պարագայի Թուրքիոյ հիւլէական ոլորտի մէջ աշխատող քանի մը պատասխանատուներ կ'ըսեն, թէ Ռուսիոյ մասնակցութիւնը այս ծրագրին մէջ տնտեսապէս ամենէն նպաստաւորն է Թուրքիոյ համար:

Այլ մտահոգութիւն մը այս հիւլէական գործարանին կապակցութեամբ այն է, թէ կարգ մը օտար քաղաքական աղբիւրներ կ'ըսեն, որ թէեւ Թուրքիա կը խոստանայ Աքքոյոյի հիւլէական գործարանը պահել իր խաղաղասիրական նպատակներուն մէջ, սակայն միշտ կասկած գոյութիւն ունի որ ան մօտիկ ապագային պիտի վերածէ զայն զինաշինութեան՝ իրանիում բերելով հոն օգտագործելու համար: Կասկածի ծիրին մէջ կ'իյնայ Թուրքիոյ Փաքիստանի հետ զինուորական գործակցութեան պարագան, ուրկէ կը հետեւցուի թէ Փաքիստան ծածուկ կերպով կ'օգնէ Թուրքիոյ միջուկային զենքերու շինութեան եւ արտադրման մէջ, որովհետեւ ան ունի հիւլէական զենքեր եւ ռումբեր: Այլ ազդակ մը որ կասկածի դուռ կը բանայ այն է, թէ Թուրքիա սերտօրէն կը գործակցի Քազախստանի հետ զինուորական հարցերու մէջ: Աշխարհի իրանիումի 100-էն 35-ը կը գտնուի Քազախստանի մէջ: Ի՞նչ բան կ'արգիլէ մանաւանդ այսպիսի օրերուն, որ երկու վերոյիշեալ երկիրները իրանիումի առետուր չընեն իրար հետ ու հետեւաբար Թուրքիա տէր դառնայ հիւլէական զենքերու:

Ստորեւ Թուրքիոյ կարեւորագոյն հիւլէական կայանի՝ Աքքոյոյ - Մերսին-ի տուեալները.

Պաշտօնական անուն հիւլէական կայանի.- Աքքոյոյ Նիւքլիէր Կիւճ Մանթրալը:

Վայր.- Աքքոյոյ, Մերսին, Թրքական Հանրապետութիւն:

Վիճակ.- Կառուցման մէջ:

Կառուցման սկիզբի թուական.- Դեկտեմբեր 2017:

Ծախս.- 24-25 միլիարտ Ամ. Տոլար

Պատասխանատու սեփականատէր.- Աքքոյոյ ՆՃՍ Էլէքթրիք Բրէթիմ ԱՇ:

Ահաւասիկ Հայաստանութենէն աւելի քան դար մը ետք, այդ ոճիրը գործած երկիրը՝ Թուրքիա ոչ միայն անպատիժ կը մնայ ցարդ, այլ կ'ուրանայ իր գործած ոճիրները հայ ազգին հանդէպ, իսկ ցարդ աշխարհի վրայ կը վայելէ այլ երկիրներու համագործակցութիւնը ու կը դառնայ զօրաւոր երկիր, փոշի ցանելով քաղաքակրթուած աշխարհի երկիրներու աչքերուն, որոնք առանց անոր ալ ամէն առիթով Թուրքիոյ արիւնտ ձեռքը կը թօթուեն, որովհետեւ տնտեսական ու քաղաքական շահեր ունին անկէ:

Այս բոլորին մէջ Հայաստան իր համեստ ճիգերով կը փորձէ բարելաւել Մեծամորի իր հիւլէական կայանին սարքերը, որոնք միայն խաղաղասիրական նպատակներու համար գործածուած են ու կը գործածուին: Ներկայիս Երեւան դիւանագիտական բազմաթիւ



խողովակներ բացած է հզօր պետութիւններու հետ, իր մետաղներու եւ քարերու հարուստ հանքերուն օգտագործման փոխարէն՝ հիւլեական ներուժի Մեծամօրի գործարանը նորոգելու, բարելաւելու եւ կամ նորեր հաստատելու նպատակով:

Երբ կը խօսուի հիւլեական ներուժի եւ էլեկտրածին մեքենաներ բանեցնելու աշխատանքին մէջ զայն օգտագործելու կարելիութիւններու մասին, ակամայ կը տարուինք մտածելու հիւլեական զէնքերու արտադրման եւ գործածման հարցին վտանգաւոր ըլլալուն շուրջ, քանի որ միջազգային քաղաքական դէմքեր վերջերս ելոյթ ունեցան հիւլեական զէնքեր գործածելու սպառնալիքով... Աստուած մի՛ արասցէ:

Աղբիւր՝ ՊԱՅՔԱՐ

ՏԵՍԱԿԷՏ

110-ԱՄԵԱԿԻ ՄՏԱԾՈՒՄՆԵՐ



Հայրենահանուածներու Յետնորդներու.
Հայրենահանուածներու Յետնորդներու Ինքնութեան
Եւ Իրաւունքի Վերականգնում

«Միայն պատեհապաշտները տեղ կը հասնին, եւ նկարագիրը դժուար ժամանակներու առաքինութիւնն է»

Է»

(ԶՕՐԱՎԱՐ ՇԱՐԼ ՏԸ ԿՈԼ)

«Տեթիշ» թուականը անցաւ: Քաղաքական իմաստութիւն է հարց տալ, թէ տեսակարար (specifique) տարբերութիւն ունի՞նք գեղասպանութիւնը, հայրենահանումը եւ անհայրենիք մնալու դատապարտութիւնը:

Դար մը զոհերու մասին խօսեցանք, զանոնք յիշեցինք, «սրբադասեցինք»: Միխիթարութեան հանդէսն էր: Աւանդութիւն յարգելու ցուցադրութիւնն էր: Անոնք պարզապէս անգօրութեան խոստովանութիւն եղան: Զոհերը եւ հայրենահանուածները մնացին պատմութեան խորքի պաստառի վիճակին մէջ: Անոնք յուշ եղան, բեմի, խօսքի, կամ գիր-գրականութեան յարդարանք: Հիմա ուրացումը դարձած է քաղաքական նորատեսակ փրկութեան լաստ, հասկնալ՝ խաղաղութեան:

Մերունդներ փոխուեցան, պաստառը մնաց նոյնը:

110 անգամ ապրիլ 24: Անմիջական յետնորդները աղմկեցին, յիշեցին հայրենիք եւ ծննդավայրեր, ուրկէ իրենց նախնիները հեռացած-հեռացուած էին: Այդ աշխարհը մնաց օտարուած, սեւ վարագոյրի ետին: Տէր չեղանք, չկրցանք ըլլալ եւ այսօր ալ տէր չենք նախնիներու ժառանգութեան: Միջազգային դաւադրութիւնը այդպէս վճռեց: Դեռ չեն արգիլած, մենք ալ մենք մեզի չենք արգիլած յիշել: Յիշելը բնական կարգով կ'առաջնորդէ տիրոջ գիտակցութեան: Բայց յիշողութենէն ետք չեկաւ ազգի ոչ ցուցադրական յանձնառութիւնը:



Կարծէք՝ չանհանգստանալու համար չենք խօսիր հայրենահանուածներու յետնորդներու, անոնց ինքնութեան եւ իրաւունքի մասին: Երբ հողը չկայ, կու գայ չորացումը, կ'ըսենք՝ ապահայացում կամ ձուլում: Այս մասին խօսելու համար պէտք է զանոնք տեսնել, գիտնալ, թէ ո՞ր են, ի՞նչ են, կա՞ն որպէս շարունակութիւն, ի՞նչ ճանաչում ունին իրենք իրենց համար եւ իրենցմէ դուրս:

Մփիւոք բնորոշման տակ կուտակուած են հայրենահանուածներու յետնորդները, անոնց վրայ գումարուած են՝ ինքնահայրենահանուածները, հայրենիք լքողները, համագումար, անհայրենիքներ, որոնք գաղթականութիւններ են եւ կ'ապրին այն ինքնախաբէութեամբ, որ հայրենիք ունէին, ունին, բայց ուրկէ բացակայ են, որ պատկեր է, որուն պաշտպանութեան եւ տիրութեան պայքար մղելէ դադարած են. բախտաւոր պարագային, կը զբաղին՝ բարեսիրութեամբ, յուշ երեկոններով եւ յուշամատենաններով եւ այցելութիւններով, օտարի պէս զբօսաշրջիկ կ'ըլլան, թէեւ իրատեսութեամբ պէտք է ընդունիլ, որ նաեւ այդքան է պահանջուածը, եւ իրենք այդքան կրնան ընել, երբ բացակայ են: Քաղաքական եւ պատշաճեցման ճապկումներով նախահայրերէն ժառանգուած-ստացուած հայրենիքը տէր չունի, ո՛չ ներսը եւ ո՛չ դուրսը անոր տէր չենք, ան օրակարգ չէ, կարծէք՝ կացութիւնը ընդունած ենք, որ ան այլեւս չկայ, պիտի չըլլայ, մանաւանդ որ միջազգային համայնքը ընդունած է կացութիւնը՝ որպէս կատարուած իրողութիւն: Այս վերաբերումները մէկ անուն ունին. ՈՒՐԱՅՈՒՄ: Մնացած է բեկոր մը, որուն շուրջ եւ որուն համար կը վիճինք եւ կը սպառինք:

Աւանդութիւններ կը յարգենք, շաբաթավերջերուն կը խմբուինք, այդ կ'ընենք եւ կը կարծենք, որ հայրենասիրութիւն եւ քաղաքականութիւն կը խաղանք եւ սփիւռքը հայ պահելու հէտը կը շարունակենք: Այդքանն ալ կ'ընենք՝ առանց գիտնալու, թէ ո՞ր հիմնական նպատակի իրականացման կը ձգտինք:

Չենք ուզեր տեսնել եւ ընդունիլ, որ յետնորդները այլեւս ազգային գաղթականութիւններ չեն, քանի որ հայրենիքը հասնումի նաւահանգիստ չէ, քանի որ անոնք խարսխած են բազմանուն ասիեր, իրենց վրանները զարկած են ասդին եւ անդին, հոն, ուր հասած են, եւ այլեւս իրենք զիրենք գաղթական չեն համարեր, նոր անուններով շապիկներ հագած են: Իրենց կայք հաստատած երկիրներու համակարգին մէջ ընդգրկուած են՝ որպէս արտադրող եւ սպառող, նաեւ՝ ամէն օր քիչ մը աւելի շեշտուող նոր կենցաղով եւ հոգեբարոյական նոր մտահորիզոնով, որոնք ոչ մէկ ձեռով շարունակութիւն են: Լաւագոյն պարագային, համայնք են: Իսկ համայնքը ազգ չէ, որքան ալ մշակոյթ եւ ենթադրեալ տեսակաւոր ազգային քաղաքականութիւն ուզէ շարունակել: Ո՛չ մէկ տեղ հայրենահանուածներու եւ անոնց յետնորդներու նախահայրերու հայրենիքը եւ հոն վերադարձը օրակարգ չեն: Ո՞ր կը խօսուի Վանի, Մուշի, Սասունի, Ատանայի, Սիսի, Խարբերդի մասին: Հայոց քաղաքական խօսքէն հանուած են այդ տարածքները եւ քաղաքները, անոնք յիշատակի եւ պատմական ծանօթութեան վերացական հասցէներ են: Հայերը, անոնք ըլլան հայրենահանուածի թէ ինքնահայրենահանուածի սերունդ, ո՞ր պիտի յանգին, եթէ որպէս իրաւատէր չմնան, հանդէս չգան եւ չպայքարին: Այդ յետնորդներուն համար այն հայրենիքը, ուրկէ հայրենահանուած են իրենց նախորդները, այսօր իրենց հայրենիքը չէ, իրենք անոր տէր չեն: Բախտաւոր պարագային, հոն հիւր կ'երթան, կը լուսանկարեն: Ուրեմն ի՞նչ կ'ընեն եւ պէտք է ընեն իրաւ շարունակութիւն եւ տէր ըլլալու համար: Այսպէս մտածել, ըստ այնմ դիրքորոշուիլ եւ գործել, ազգային քաղաքականութիւն կ'ըլլայ, որ հրաժարման առաջնորդող պատշաճեցումներէն անդին կը նայի:



Եթէ կարենայինք գաղթականութեան եւ համայնքային պատշաճեցումները ազգային նպատակ չհամարել եւ յանձնառու կազմակերպութիւն յառաջացնել, միանայինք հայրենիք ազատագրելու եւ ունենալու համար, ամէն օր արթննայինք՝ լսելով յիսուն տարի առաջ Արարատի փեշերուն ապրող սերունդի «ՄԵՆ ՀՈՂԵՐ»-ը կանչը, ՏԱՐԲԵՐ ՄԱՐԴ կ'ըլլայինք, ազգեվազներու երկրին մէջ, Լոս, Մարսէյ, Նետերլենտ, Բելգիա հայերէն երգելով՝ հայրենասիրութիւն չէինք խաղար: Պիտի գտնուի՞ն մարդիկ, որոնք ներշնչեն յառաջիկայ տարի Վան, Մուշ, Մասուն, Սիս, Ատանա հասնելու հաւատքը, որպէսզի երազ ունենանք, ոտքի մնանք եւ պատմութեան հեղեղին մէջ չտարուինք՝ որպէս տաշեղ: Հիմա հայրենիք կը լքենք, մէկ գաղթավայրէ միւսը կ'երթանք՝ հետապնդելով լաւ ապրելու իրաւունքը: Կը մտածեմ, որ եթէ օր մը Ամերիկան կրկին քաղաքացիական պատերազմի մէջ գտնուի, Աւստրալիոյ բնիկները՝ ապորիժենները, ազատագրական պայքար մղելու համար ոտքի ելլեն, ի՞նչ պիտի ընեն հայ հին եւ նոր գաղթականները:

Աներազ ժողովուրդներով բնակուած է պատմութեան գորշ անհունը, ուր յոյս եւ կեանք չեն ծաղկիր:

Ինչո՞ւ դադրած ենք ազգին, որ ի Հայաստան, Ռուսիա, Ամերիկաներ, արաբական աշխարհ, հիմա նաեւ՝ Չինաստան, բեւեռներու մէկէն միւսը, չենք ըսեր, որ մարդ ըլլալու համար հայրենատէր պէտք է ըլլալ՝ չըլլալու համար անհող եւ անինքնութիւն:

Այսօր հայ քաղաքական առատաբան շուկային մէջ ո՛չ ոք կը յիշէ իր ժողովուրդի երակէն եկած եւ ազգի խոր զգացողութիւնը ունեցած հայոց Մկրտիչ Խրիմեան տեսիլք ունեցող կաթողիկոսին պատգամը Թոռնիկին... Կը պատահի՞, որ հանրապետութենէն եւ մոլորակի շուրջ դարձող քաղաքական եւ այլ խօսքերու շուկային մէջ հնչէ Խրիմեանի պատգամը Թոռնիկին, ուղղուած իւրաքանչիւր հայու, որ ՀՈՂԸ ՊԷՏՔ Է ԿԵԱՆՔԻ ԵՒ ՄԱՀՈՒԱՆ ՕՐը... որ ԱՆՀՈՂ ՉՄՆԱՍ:

Եւ լսողներ կա՞ն:

Այդ ՀՈՂԸ նախահայրերու կտակած հայրենիքն է, որ արմատներու անուններ կը խտացնէ:

1915... 2025, 2055, օր մըն ալ՝ 3015... Եւ յետոյ ի՞նչ...

Յարափոփոխ աշխարհին մէջ ի՞նչ ենք եւ ի՞նչ կ'ընենք, որպէսզի վերականգնինք եւ ազգ ու հայրենիք վերականգնենք:

Չեմ յիշեր, թէ ո՛վ ըսած էր, որ քսաներորդ դարու մեծագոյն գիւտը հիւլէական ռումբը չէր, այլ՝ կազմակերպութիւնը, «organisation»-ը...

Եթէ այս ԱՄԵԱԿէն սկսէինք ինքնութեան եւ իրաւունքի պահպանման վրայ խարսխուած ազգային ուժի եւ իրաւունքի նպատակային կազմակերպութիւն յառաջացնել՝ առանց անմիջականի մէջ թաղուելու, մեր լինելիութիւնը դիտէինք գալիք դարու եւ դարերու համար, կը պահէինք ինքնութիւն, կը վերագտնէինք իրաւունք, կը դադրէինք ուրիշներու համրանքը լրացնելէ, կ'ըլլայինք նախահայրերու ինքնութեամբ՝ անոնց իրաւ ժառանգ:

Եթէ այս «յեղափոխութիւնը» այսօր չսկսինք եւ չընենք, ո՞ւր պիտի աւարտի ազգի եւ հայու պատմութիւնը: Գոհունակութեամբ պիտի սպասենք եւ գոհանա՞նք, որ յաճախ մեր հայրենահանման մեղսակիցներ խօսք շոյալեն եւ մեզ յուզեն՝ ըսելով, որ օրինակելի կերպով



մերուած ենք այս կամ այն ցամաքամասի երկիրներէն մէկուն կամ միւսին քաղաքակրթութեան, մշակոյթին, կենցաղին: Այդ պիտի նշանակէ, որ այլացած ենք, մենք դադրած ենք մենք ըլլալէ:

Ուրիշ ժողովուրդներ իրենք զիրենք հաստատած են եւ կը հաստատեն՝ հետեւելով եւ ընդունելով ինքնութիւն պահող եւ կերտող Ազատագրական պայքարի ուղին: Եթէ զանազան անուններով հայութիւնները չգիտակցին եւ չգործեն ա՛յս ըմբռնումով, ապագան հայութիւն կոչուած ազգին ի՞նչ պիտի վերապահէ: Այսպէս մտածել եւ ըստ այնմ գործել՝ սովորութիւն դարձած հայկական աթոռ-աթոռակի խաղ չէ, որ կը խաղցուի Հայաստանի բեկոր հանրապետութեան եւ բազմացող «Նոր հայրենիք»-ներու սփիւռքի մէջ:

1939-ին պարտուած եւ գրաւուած Ֆրանսայի զօրավարներէն մին, հակառակ իր իշխանութիւններուն, ո՛չ ըսաւ օտարի տիրապետութեան: Իր երկիրը զինք մահուան դատապարտեց, բայց ինք միացուց ուժերը՝ առանց հրէի եւ հեթանոսի տարբերութիւններու, ջանձնուեցաւ, պայքարեցաւ եւ վերականգնեց իր հայրենիքը: Այդ ընելու համար հայրենիք չլքեց: Եղաւ Դիմադրական Շարժում, որուն անդամները չգացին Թահիթի, Վանքուվըր կամ Հոնոլուլու, երբեմն գնդակահարուեցան: Բայց հայրենիք պահեցին: Հայրենիք ջանձնեցին:

Ինչո՞ւ կը կարծենք, որ երկինքէն մանանայ պիտի տեղայ:

Հայրենահանուածի եւ անհայրենիքի մեր կացութեան ո՛չ ոք մեր փոխարէն լուծում պիտի բերէ: Ճիշդ ուղին իրաւ յանձնառութեամբ «յարատել կոի»-ն է, որ անցեալին պատգամուած էր: Այսօր ալ պէտք է լսել այդ պատգամը: Իրաւունքի եւ արդարութեան համար կռուիլ՝ էապէս մարդու եւ կեանքի հանդէպ ճշմարիտ յարգանքի պայքար է: Չպայքարիլ՝ կը նշանակէ բարենիշ տալ չարին եւ ոճիրին, ընդունիլ բոլոր տեսակի ստրկացումները, անոնք ըլլան քաղաքական, կրօնական, դասակարգային թէ ցեղային:

Եւ հրաժարիլ մարդ ըլլալէ եւ ըլլալ սոսկ մարդանման էակի մը մարսողական գործարանը:

Մեր պատմութիւնը մեզի կտակած է քաղաքական մեծ իմաստութիւն, ուրիշ մեծանուններէ առաջ, ըստ որուն, «Մահ ո՛չ իմացեալ մահ է, իսկ մահ իմացեալ՝ անմահութիւն»:

Իմանա՛լ եւ ունենալ լսելու ու գործելու առաքինութիւն, որ հռոմէացիին համար կը նշանակէր հոգեկան ուժ, նոյնիսկ եթէ ամեակները մոռացման մոխիր կը ցանեն:

Յակոբ Պալեան

20 Մայիս 2025



ԻՆՉ Է ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ՈՐՈՆՔ ԵՆ ՆՐԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

(Զաղաքագետ Գուրգէն Սիմոնեանի նախածնունդեամբ կազմակերպուած գիտական կոնֆերանսին՝ գրող-հրապարակախօս ՌՈՒԶԱՆ ԱՍԱՏՐԵԱՆԻ ելոյթը:



Պետութիւնը մենք ենք և նա ուժեղ է այնքան, որքան ուժեղ ենք մենք... Ինչ է պետութիւնը հանրութեան համար: Պետութիւնը իր երկրի սահմաններում ապրող ազգի ինքնութեան ուժն է, նրա արտաքին ու ներքին զարգացումների անձնագիրը, երկրի քաղաքացու պաշտպանութեան երաշխաւորը, նրա տարածքային ամբողջականութեան, ազգային լեզուի, ներկայ ու գալիք սերնդի ապահովութեան վկայագիրը, իր ազգային հարստութիւնը ազգին ծառայեցնելու գործիքակազմը: Կատարեալ է այն պետութիւնը, որի պաշտօնեաները ունեն ազգային մտածողութիւն, կոռուպցիայի մէջ թաթախուած չեն, իրենց անձնական շահերի համար գրանցուած չեն օտար տերութիւնների հետախուզական համակարգերի ցուցակներում, երկրի ազգային սեփականութիւնը չեն դարձնում անձնական սեփականութիւն և չեն յանձնում այլ պետութիւնների, որպէս

գոյք՝ պարտքի դիմաց, կարգաւորում են եկեղեցի-պետութիւն յարաբերութիւնները՝ ի նպաստ երկրի ու պետութեան կայունութեան: Պետութեան սկզբունքը օրէնքն է: <<Ապրել ենք ուզում ?, լինենք ուժեղ ազգովին: Ազգովին, ահա հրամայականը : Լինենք ուժեղ այնքան, որ մեր անպարտելիութիւնը առ ոչինչ դարձնենք մեզ ծանօթ այն բոլոր դժբախտ պայմանները, որոնք դժուարացնում են մեր ցեղի Ինքնապաշտպանութեան գործը... գրել է Գարեգին Նժդէհ>>:

Արդեօք հայերս դարեր շարունակ գիտակցել ենք պետութեան կարեւորութիւնը և եթէ այո, ապա ինչու են մեր կորուստներն աւելին, քան ձեռքբերումները ...Անհրաժեշտ է անկեղծ լինել պատմութեան հետ, ասելու, որ մենք պետականութեան մշակոյթին այնպէս չենք տիրապետել, ինչպէս Երկիրը անառիկ պահելուն, մեր պատմութեան էջերը լի են երկրի պաշտպանութեան հերոսական դրուագներով, իսկ պետութիւնը յաճախ ենք կորցրել ` այն զոհաբերելով մեր եսակենտրոնութեանը: Մենք ունեցել ենք անպարտելի երկիր՝ Արատտայից մինչև նահապետ Հայկ ու մինչև Սասնայ ծոերի չորս ճիւղերն ու նրանց միջանկեալ ժամանակները՝ Արտաշէս Արքայ ու Տիգրան Մեծ ենք ունեցել մեր գենի ակունքներում: Ինչ եղաւ հազարամեակների հայկեան համաստեղութեան լոյսին, նա երբեք պարտութիւն չէր ընդունում, Հայն ուսուցիչ ազգ է եղել այլ ազգերին և հիմա դադարել է ուսացանել իրեն??: Որն է խնդիրը երբ օտար կայսրութիւնների իշխանութեան ներքոյ անգամ, նա ազատ, անկախ պետութիւն է երազել, յիշենք ազատութեան երգիչ Միքայել Նալբանդեանի տողերը...Ուժեղ պետութեան հիմնաքարը իմաստուն կրթուած ու համարձակ առաջնորդն է, ով հայի գենետիկ հզօրութեան բանալին է եղել միշտ: Թոյլ



առաջնորդի ղեկավարած պետութիւնը ազգի համար պատուհաս է ու մեզ կանգնեցրել է միշտ Հայրենիք կորցնելու փաստի առաջ: Ազգային դիմադրութեան երկարակեցութեան գաղտնիքը, որի գիտակցական մոդելի աղաւաղումը վեց դար հայերիս պատժեց՝ մեզ զրկելով ազգային պետականութիւնից , իսկ հայոց ցեղասպանութիւնից յետոյ մեր ինքնապաշտպանական միջուկը, տարածեց աշխարհով մէկ, իր գենի մէջ մշտապէս պահպանեց պետականաստեղծ ազգի ժառանգական յատկանիշները, որոնք ժամանակի մէջ ծնում են իրենցով ուժեղ ազգային պետութիւն ստեղծելու վերագարթոնքը, ինչի մտահոգութիւնն էլ մեզ այսօր այստեղ է համախմբել: Եւ պատահական չէ, որ հայերիս համեմատել են մոխիրներից վեր յառնող Փիւնիկ թոչունի հետ: Պատմութիւնը ոչինչ չի մոռանում՝ հռոմեացիներ, պարսիկներ, սկիւտներ, արաբներ ու թուրքեր, ռուսներ և այլ կենսագրութիւն չունեցող քոչուոր ազգեր, բազմիցս ասպատակել են հայոց հողը, ջնջել մեր հետքերն ու յիշողութիւնը, որպէսզի մոռանանք մեր ինքնութիւնը, որպէս արարչաստեղծ ազգի, ...:Գիշատիչ ու թափառական ազգերը յաճախ իւրացնելով ազգային մեր գանձերը, կեղծ հովանաւորի խորամանկութեամբ սեփականացրել են մեր ազգային մշակոյթը, տիրացել են մեր գիտական մտքին, մեր անցեալին, ներկային և այսօր արդէն խարխալ են զցել ապագայի հնարաւորութեանը...և փաստը մնում է փաստ, որ որքան վստահեցինք օտարներին, այնքան տանուլ տուեցինք ազգային հսկայական կենսատարածքները, հարստութիւնը, թիրախաւորեցինք մեր գենի տաղանդաւոր բանկը, նրան դարձնելով նախայարձակ ազգերի գիտութիւնների զարգացման աղբիւր, Հայաստանը թողնելով բախտի քմահաճոյքին: Պետութիւնը հզօր է, եթէ նրա արտաքին և ներքին զարգացման հիմքում ազգի գերակայ շահն է դրուած, ոչ թէ պետական պաշտօնեաների անձնական շահերը: ...Հայոց ազգի ամուր պետութեան մոդելը հայ ընտանիքի ամրութիւնն է, որն այսօր ուշադրութիւնից դուրս է մղուել՝ և սերնդին ընկղմել թմրամոլութեան, աղանդաւորութեան, միասեռականութեան և ատելութեան ճահճի մէջ: Թերացել ենք և այս վտանգի պատճառը թոյլ պետութիւնն է, նրա ազգային գաղափարախօսութեան բացակայութիւնը՝ երկէ ու այսօր ու վաղը չպէտք է լինի, քանզի նախորդներն են կերտում հայրենիքի վաղուայ սերնդի ապագան:, իսկ յաջորդ սերունդը երկիր ու ազգ պահելու համար եօթ անգամ աւելի հզօր պէտք է լինի նախորդից... Հեռուստալսարանը, դպրոցը, բուհերը, հասարակական միջոցառումներն ու ամենակարելորդ՝ Հայոց բանակը հայրենասիրութեան ու գիտութեան դարբնոցներ պէտք է դարձնել: Դարձեալ մէջ բերեմ Գարեգին Նժդեհի իմաստուն տողերը՝ <<Հայրենիքը ապրում է սիրով և կործանուում սիրոյ պակասից >> : Թոյլ պետութիւնը ծնում է անմիաբան և ամորֆ հասարակութիւն: Ուստի որքան ամուր ու պաշտպանուած է հայ ընտանիքը,այնքան հզօր և ուժեղ է հայոց պետութիւնը,այնքան բարձր է հայրենասիրութիւնն ու Հայրենիք հասկացութիւնները: Բնակլիմայական և սոցիալական շերտաւորումները , արտագաղթն ու ներգաղթը լուրջ փոփոխութիւններ են առաջացրել նաև հայոց ազգի հոգեբանութեան և նոր ձեւաւորուող մշակոյթի մտածողութեան մէջ և յաճախ աշխարհի քաղաքացի դարձած և իր ազգային ինքնութիւնից օտարուած հայր թերաբժէքաւորում է պետութեան դերը՝ ազգային շահը զիջելով եսակենտրոնութեան անձնական դրսեւորումներին՝ դաւաճանութիւններ, պետական արժէքի նսեմացում, հասարակութեան բարոյական արժէքների նկատմամբ անտարբերութիւն, պետութիւն-ժողովուրդ յարաբերութեան անջրպետ՝ յաճախ երկիրը անգիտակցօրէն տանելով քառսի ...Տաւօք սրտի, այն այսօր էլ շարունակուում է:

Պետականութեան նրբահիւս արուեստին տիրապետել, նշանակում է յարգանք քո սեփական ազգի, նրա թողած ժառանգութեան ու ձեռքբերումների և ինքդ քո հանդէպ:,, Մենք ենք նոր ժամանակների տէրը և պետութեան հզօրութեան բանալին մեր կամքի ու ձեռքերի մէջ է...

ՌՈՒԶԱՆ ԱՍՍՏՏԵԱՆ

ԳՐՈՂ-ՀՐԱՊԱՐԱԿԱԽՕՍ

TIK TOK-ԷՆ ՏԱՃԱՐ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿՆ Է

Դոկտ. Հրաչ Զիլինկիրեան



Այս արագափոխիս եւ աղմկալից ժամանակներուն, երբ մարդը կը խեղդուի իմաստի բացակայութեան մէջ, կը կորսնցնէ իր ինքնութիւնը, իսկ հոգին կը մնայ կարօտ միսիթարութեան, Ամերիկայի եւ Եւրոպայի մէջ սկսած է նկատուիլ անակնկալ երեւոյթ մը: Ուսումնասիրութիւններու համաձայն, նոր սերունդ մը՝ ժամանակակից աշխարհի դատարկութենէն յոգնած, սկսած է դառնալ դէպի այն, ինչ մոռցուած կը համարուէր՝ ասանդական եկեղեցին: Աւանդութեան մէջ անոնք կը վերագտնեն կորուսեալ խաղաղութիւն մը եւ նորոգեալ մօտեցում կը ցուցաբերեն Կաթողիկէ եւ Ուղղափառ

եկեղեցիներու խորհուրդին, հոգեւոր ներհայեցող եւ ինքնամփոփ կարգապահութեան ու սրբութեան:

Catholic Herald-ի մէջ հրապարակուած յօդուած մը կը նշէ. «Ոչ միայն գոթական տաճարներու կամ լատին պատարագի փակ շրջանակներու մէջ, այլեւ երիտասարդ ամերիկացիներու սրտերուն մէջ, որոնք, մշակութային բոլոր հոսանքներուն հակառակ, հոսանքն ի վեր կը թիավարեն դէպի Կաթողիկէութիւն: Այս երեւոյթը տարակուսանքի կը մատնէ թէ՛ աշխարհիկ վերնախաւերը, եւ թէ՛ ազատամիտ բողոքականները: Ինչպէ՛ս կարելի է, քայքայումի եւ թուային ոչնչապաշտութեան (nihilism) այս դարաշրջանին, կարգ ու կանոնի, ծէսի եւ խոստովանութեան Եկեղեցին ընկալել իբրեւ «գրաւիչ» (cool)»:

Այս սերունդը, որ ժառանգած է ոչ թէ իմաստ, այլ ալկորիթմեր՝ նախատեսուած գուշակելու նոր սերունդին քայլերը՝ առանց ըմբռնելու անոր հոգիին խորութիւնը, այսօր կ'ապրի հոգեւոր սովի մէջ: Ազնուութեան, աղօթքի եւ խորհրդաւոր լռութեան փոխարէն, անոնց տրուած է անզգայացնող «TikTok-բուժում» մը՝ աւելի բթացնող քան միսիթարող: Եւ երբ հոգածութեան անունով կը վաճառուին «ինքնասիրութեան» մեթոտներ՝ փափուկ բառերով եւ մշուշոտ խոստումներով, շատերու մէջ ծնունդ կ'առնէ խոր եւ անբացատրելի պակաս մը, ներքին բաւարարութեան մը փնտոտութիւն, զոր ո՛չ մէկ պայծառ էքրան կրնայ լեցնել:



Թուային աշխարհը այսօր վերածուած է միջոցի մը, որ անցած է մարդկային բարոյականութեան սահմանները, ուր ատելութիւն, բամբասանք, հայհոյանք, մակերեսայնութիւն եւ կեղծիք ոչ միայն նսեմացուցած են մարդուն բարոյական գիտակցութիւնը, այլ նաեւ աղաւաղած մարդկային էութիւնը: Այս աշխարհին շլացուցիչ գրաւչութիւնը մեզ սորվեցուցած է բաւարարուիլ մակերեսային գեղեցկութեամբ, արուեստական բաւարարուածութեամբ եւ անցողիկ զգացումներով, որոնք կու գան ու կ'անհետանան կայծակնային արագութեամբ: Բայց այս փայլքը ժամանակաւոր կրկներեւոյթ (mirage) մըն է: Այսօրուայ մարդը՝ մանաւանդ երիտասարդը, զգայուն է այս դատարկութեան ճշմարտութեան նկատմամբ: Ան կը զգայ, որ հոգին սոված է, արմատները՝ կտրուած: Ու այսպէս, ի վերջոյ, ինչ որ կը փնտռէ՝ գուարճանք կամ վայրկենական հաճոյք չէ, այլ իմաստ մը, որ չի խամրիր:

Եւ ահա հոս կը սկսի բացուիլ ուղի մը՝ ոչ դէպի նորութիւն, այլ դէպի մոռցուած արմատները. դէպի անանդութիւն, դէպի հաւատք, դէպի այն հոգեւոր ժառանգութիւնը, որ տարիներ շարունակ լոյսը պահած էր լռութեան մէջ: Թուային աշխարհը, որ ժամանակ մը հաւատքը փոխարինելու մեծխօսիկ յաւակնութիւնը ունէր, այսօր ինք կը բացայայտէ իր ամլութիւնը՝ փայլուն կեղեւ մը առանց հոգիի: Թուային աշխարհը չի ճանչնար լռութեան խորութիւնը, եւ չի կրնար տալ այն մխիթարութիւնը, որ միայն հաւատքին խորքէն կը բխի:

Ժամանակն է, որ Եկեղեցին վերադառնայ իր իսկական կոչումին, ոչ որպէս կառոյց, այլ որպէս բարխաղ սիրտ:

Ինչպէս Եղիշէ Արքեպս. Դուրեան, պատրիարք Կոստանդնուպոլսոյ (1909-1911) եւ ապա Երուսաղէմի (1921-1930), ըսած է՝ «[Եկեղեցին] գոր ո՛չ փայտակերտ աղօթարանի եւ ո՛չ քարաշէն տաճարի նիւթական նշանակութեամբ կ'իմանանք, այլ կ'ըմբռնենք մա՛նաւանդ այն եկեղեցին՝ որ «սեպհական ժողովուրդ» կը թարգմանուի:»

Մարդը որքա՛ն կարիքը ունի հոգեղէն մաքրումի, յոյսի եւ լոյսի՝ բաներ, որոնք այսօրուան քաղաքական ժխտրին մէջ, աշխարհը չի կրնար տալ այլեւս: Այս օրերուն, երբ կարծէք մեզի հասած աշխարհը կը կքի իր իսկ ստեղծած հիմքերուն տակ, Եկեղեցին կոչուած է վերագարթնելու՝ ոչ որպէս անցեալի շքեղ յուշարձան, այլ որպէս ներկայի կենդանի աղբիւր: Աղբիւր մը, որուն ջուրերէն կը հոսին սէր եւ ճշմարտութիւն: Աղբիւր, ուր Աստուած կը սպասէ հայրական հոգատարութեամբ: Եւ երբ երիտասարդը կը տեսնէ, թէ այս լոյսը դէռ չէ մարած, չի մօտենար որպէս ճամբորդ ու զբօսաշրջիկ, այլ որպէս զաւակ, որ երկար թափառումէ ետք իր տունը կը վերադառնայ:

* Դոկտ. Հրաչ Զիլինկիրեան, ընկերաբան, սփիւռքագէտ, սփիւռքի նորարարական ծրագիրներու հեղինակ եւ գործադիր:

ՈՒ ՎՏԱՆԳՈՒԱԾ Է ՆԱԵՒ ԼԵԶՈՒՆ...ԱՅՆ, ԻՆՉՈՒ ՄԻԱՒՈՐԵՑ ՀԱՅԱՒՍՍ ՑԵՂԵՐԻՆ ՈՐՊԷՍ ՄԷՎ ՄԻԱՄՆԱԿԱՆ ԱԶԳԻ



✉ ԱՐԱՅԻՎ ՄԿՐՏՈՒՄԵԱՆ



24 ՄԱՅԻՍ, 2025

Իբրեւ արեւմտահայերէնի պահպանման եւ անոր վերաինքնահաստատման ծառայող հարթակ, «Տարբերակ21» սովորավար իր տարիներու աշխատակից Արայիկ Մկրտումեանի յօդուածները կը հրապարկէ արեւմտահայերէնի վերածուած: Արայիկը արեւելահայ գրող է՝ Երեւանէն: Այսօրուայ գրութիւնը, սակայն, կը պահենք արեւելահայերէնով՝ անշուշտ մեսրոպեան ուղղագրութեամբ, պահելու հարազատութիւնը արեւելահայ սրտցաւ գրողի պոռթկումին՝ ի տես մեր ցուցաբերած մահացու անփութութեան՝ արեւմտահայերէնի, նաեւ ընդհանրապէս արեւելահայերէնի նկատմամբ:

«Խմբագ.»

Այսօր շատերն են խօսում այն մասին, որ արեւմտահայերէնը վտանգուած լեզու է: Նոյնիսկ նշում են, որ այն արդէն ներառուած է «մահացող լեզուների» ցանկում: Ու որ էլ աւելի զարմանալի է, հայերի մի մասն ասես հպարտութիւն է զգում դրանից: Նրանք կարծում են, թէ այդ կարգավիճակը յաւելեալ ուշադրութիւն կը բերի արեւմտահայերէնի նկատմամբ:

Բայց արդե՞ք այն այդպէս է:

Խիստ կասկածներ ունեմ, թէ այստեղ որեւէ ուրախանալու բան կայ: «Մահացողի» կարգավիճակը չի կարող դրական լինել: Տասնամեակներով արեւմտահայերէնի նկատմամբ ամբողջական անուշադրութիւնն այսօր փոխարինուել է մեռնողի հանդէպ դրսեւորուող կարեկեցանքով: Իսկ դա միայն մի բան է նշանակում. հայ ժողովուրդը կանգնած է իր ինքնութեան կարեւորագոյն հիմնասիւններից մէկը կիսով չափ կորցնելու ամենախիսկական վտանգի առաջ: Արեւմտահայերէնը, որ մեզանում ընկալուած է որպէս էրգոթիք մշակոյթ, երբեմն շքեղութեան հոմանիշ, իսկ աւելի յաճախ՝ անհասկանալիութեան ցուցիչ, ոչ միայն պարզապէս արտասանութեան եւ գրութեան ձեւ է, այլեւ հայոց լեզուի հիմքերից մէկը: Պատմական ճակատագիրն այնպէս է կամեցել, որ հայոց լեզուն, բացի նրանից, որ ծնունդ է տուել տասնեակ բարբառների, նաեւ կիսուել է երկու մասի ու դրանցից Արեւմտեանն այսօր զերեզմանաթմբի առջեւ կանգնած է:



Արեւմտահայերէնի կորուստը ջախջախիչ հարուած է հասցնելու մեզ որպէս ազգի; Արեւմտահայերէնի կորուստը հիմքից քանդելու է հայի՝ որպէս աշխարհատարած ազգի տեսլականը: Արեւմտահայերէնի կորուստը ոչ միայն հսկայական մշակոյթի ու գրականութեան, պատմական յիշողութեան ու ժառանգութեան կորուստ է, այլեւ հայ ազգի գերակշիռ մեծամասնութեան ինքնութեան կորստի հարիւր տոկոսանոց երաշխիք: Եթէ հայը հայերէն չի խօսում, նա կ'իսով չափ է հայ: Հայը կարող է իրեն հայ համարել ու ինքն իրեն նոյնացնել ինքնութեան ցուցիչի այլ բաղադրիչների վրայ՝ կրօն, տարածք, յիշողութիւն, բայց եթէ այն օտարալեզու է, ապա ենթական է այդ լեզուի հոգեբանութեանը, որովհետեւ լեզուն պարզապէս արտասանութիւն ու գրելու ձեւ չէ, այլ մտածողութիւն, փիլիսոփայութիւն: Եւ որքան կայացած ու հարուստ է լեզուն, այնքան աւելի բարդ է այդ լեզուով գրուածքը թարգմանել այդ լեզուով: Երկու հարուստ լեզուների միջեւ կատարուած թարգմանութիւններն արուեստ են, ինչպէս օրինակ Աստուածաշնչի թարգմանութիւնը: Եւ եթէ մենք կորցնենք արեւմտահայերէնը, ապա կարող ենք վստահ լինել, որ իրականանում է հայ ազգի ինքնառչնչացման եւս մի ցաւոտ ու անդառնալի փուլ:

Կարող ենք թարգմանել Վարուժան եւ Սիամանթօ անգլերէն կամ գերմաներէն, բայց այն չի հնչի: Գերմանացու կամ անգլիացիու համար այն կը լինի վարպետ գրչի գործ, հիացմունքի առարկայ, բայց ոչ աւելին: Այն կը դառնայ ընդամենը բանաստեղծութիւն:

«Ու պայքար, պայքար, պայքար երգեցի...է, մի՞ թէ սա հնարաւոր է թարգմանել: Բառերը կը թարգմանուին, իսկ ոգի՞ն, ցաւը, բերկրանքը, յիշողութիւնը: Դա ինչպէ՞ս ենք թարգմանելու: Գերմաներէնով այն պարզապէս կը լինի պայքարի մասին, բայց գերմաներէնը չի կարող յիշել հայերէնի յիշողութիւնը, այն հայոց լեզուի ցաւն ու պայքարը չի տեսել, այն հայոց լեզուի քաղցրութիւնն ու քնքշութիւնը չունի: Գերմաներէնն ունի իր՝ գերմանականը:

Արդեօ՞ք որեւէ մէկը կարող է Սիամանթօ թարգմանել:

Ո՞վ կը յանդգնի թարգմանել. «անունս է պայքար եւ վախճանս յաղթանակ» տողերը: Ո՞վ կը թարգմանի այնպէս, որ ֆրանսիացի ընթերողն այն կարդալով գոռայ. «որովհետեւ ես եմ, ես եմ ես եմ ու անունս է պայքար ու վախճանս յաղթանակ»: Ո՞ր ֆրանսիացին կը զգայ այդ տողերի ցաւը, զայրոյթը, վախը, քէնը, վեհութիւնը...ամէն ինչը: Ոչ որ: Որովհետեւ հայերէնը հայինն է ու հայը՝ հայերէնին:

Ու այսօր մենք կանգնած ենք դա կորցնելու առաջ: «Լեռներ ու լեզու, ուրիշ ի՞նչ է աւանդել Հայկ Նահապետը: Կորցնես լեզուն եւ լեռներն աչքիդ հարթութիւն կ'երեւան», - ասում է Տիգրան Մեծը Հայկ Խաչատրեանի «Տիգրան Մեծ» պատմավեպում: Այսօր մենք ինքներս ենք հարթեցնում մեզ, երբ գերադասում ենք այլ լեզուով խօսել, երբ ըստ էութեան նորաձեւական ինքնասպանութիւն ենք գործում, երբ պատրաստ ենք զոհել մեր ինքնութիւնը, մեր Ես-ը յանուն օտար լեզուի:

Նոյն «Տիգրան Մեծ» պատմավեպում արտայայտուած է այն միտքը, որ լեզուն սրի նման է: Այն պաշտպանում է ազգն այնպէս, ինչպէս սուրը՝ իր տիրոջը: Բայց եթէ սուրը ժանգոտուի ու կարող էս մաքրել, եթէ սուրը կոտրուի, նորը կը կռես, ապա ի՞նչ էս անելու, երբ լեզուն ժանգոտուի, երբ այն կոտրուի, բթանայ:

Լեզուի կորուստը մահ է:



Մենք այսօր Հայաստանի Հանրապետութիւնում մեծ խնդիր ունենք արեւելահայերէնի հետ կապուած: Յատկապէս նոր ու աճող սերունդը հայերէն լաւ չգիտէ, հայերէն գրքեր քիչ են կարդում, հայ հեղինակներին՝ առաւելապէս, իսկ արեւմտահայերէնը գրեթէ օտար լեզու է: Անգամ եղել դէպք, երբ արեւմտահայերէն գրքի հասցէին ասուել է. «իսկ սրա հայերէնը չունէ՞ք»: Մենք ի վիճակի՞ ենք հասկանալ, թէ ինչ է կատարում հէնց հիմա: Մենք ի վիճակի՞ ենք հասկանալու, որ սա աւելին է քան Տեղասպանութիւնը: Մոռացման դէմ կռուելը բարդ է: Այն ինչ մոռացուել է, կարող է այլեւս չվերականգնուել, իսկ մենք երեւի սպասում ենք, որ կորցնենք նաեւ արեւմտահայերէնը, իսկ յետոյ բանաստեղծական պաթոսով ողբանք, որ կորցրինք մեծագոյն մի գանձ, որ հային հայ էր պահում:

Է յետո՞յ: Մա ի՞նչ այլանդակ վերաբերմունք է մեր կողմից մեր հանդէպ: Այս ինչպէ՞ս են կարողացել համոզել մեզ, այս ինչպէ՞ս են լուացել մեր ուղեղը, որ հայերէնը հայի համար դարձել է ծաղրելիք, երբ ֆիլմերի անունները մենք հայերէն քիչ ենք արտասանում, որովհետեւ ծիծաղ է յարուցում, երբ գերադասում ենք «կուղիս» ասելու փոխարէն կիրառել անգլերէն *wolverine* կամ ռուսերէն *pacomaxa* տարբերակը եւ «կուղիս»-ը միայն յիմար ծիծաղ է առաջացնում: Մենք հասկանո՞ւմ ենք, որ ծիծաղում ենք ինքներս մեր վրայ՝ հայելու առաջ կանգնած հռիռում ենք ու թքում հայելու արտացոլուող մեր իսկ պատկերի վրայ:

Զգուշացե՛ք հայե՛ր, զգուշացե՛ք: Պատմութիւնն այնքան էլ բարեգութ չէ եւ այն անխնայ պատժում է ամէն մէկին, ով բաւարար չափով անհոգ է ինքն իրեն մոռանալու համար:

Զգուշացե՛ք, հայեր, զգուշացե՛ք...մենք այսօր մեր ձեռքերով փորում ենք համազգային մոռացման գերեզմանը: Մենք այսօր մեր ձեռքերով կանգնած ենք ինքնամոռացման առաջ: Մենք ու միայն մենք:

Եւ թող ոչ ոք չասի, որ ժամանակակից տեխնոլոգիաներն են մեղաւոր եւ այլն եւ այլն, եւ այլն: Մենք ենք մեզ համար պատասխանատու: Ոչ մի այլ ազգ չի փրկելու հայոց լեզուն հայերի համար:

Մենք այսօր կորցրել ենք մեր հայրենիքի գերակշիռ մասը: Հայ ժողովուրդը ցրի է եկած աշխարհով մէկ, հայ եկեղեցին կորցրել է իր վեհութիւնն ու ազդեցութիւնը, պատմական յիշողութիւնն աղճատում է, տարածքային ինքնութիւնը՝ փոփոխում:

Ու վտանգուած է նաեւ լեզուն: Այն, ինչը միաւորեց հայախօս ցեղերին որպէս մէկ միասնական ազգի, այսօր ոտնահարուած է: Այն, ինչը միաւորեց, նա էլ կը բաժանի: Վաղը մենք կ'ունենանք իրանախօս, իսպանախօս, անգլախօս ու ռուսախօս, հայկական ծագումով ինչ որ հիբրիդներ, բայց ոչ հայեր, որովհետեւ հայ՝ նշանակում է հայերէն, իսկ եթէ հայերէն չէ, ապա հայ չէ, որովհետեւ, նոյնիսկ եթէ անգլիախօս հայն իրեն հայ է համարում, որովհետեւ ունի մեծ կապուածութիւն իր երկրի հետ եւ այլն, ապա նրա սերունդները կարող են չունենալ դա, որովհետեւ նրանք ոչ միայն խօսելու եւ գրելու են, այլեւ ՄՏԱԾԵԼՈՒ են ոչ հայերէն:

Իսկ մի գուցէ այս ամէնն արդէն ոչ ոքի չի հետաքրքրում:

Վահան Տէրեանը, երբ գրում էր.

«Մի՞ թէ վերջին պոէտն եմ ես,

Վերջին երգիչն իմ երկրի,

Մա՞հն է արդեօք, թէ նի՞նջը քեզ

Պատել, պայծառ Նայիրի.....»:

Մոռացումն է պատմել մեզ, ինքնակործան ու ինքնասպան մոռացումը: Ես սարսափում եմ, որ այսօր-վաղը մենք կանգնելու ենք մոռացութեան թմբի առաջ մթնած հայոց լեզուի առաջ ու ահաբեկուած մեզ պատած մթից՝ բացականչենք.

-Տոլա՛, ցնորք Նայիրի...

ՄԷ՛Վ, ՄԷ՛Վ, ՄԷ՛Վ



Այս յօդուածիս տուն տուող առիթը բարեկամի մը հետեւեալ տողերն են, որոնց ձայնակցելու համար է, որ կը գրեմ. «Ես միշտ մերժած եմ «Արեւմտեան Հայաստան, «Պատմական Հայաստան» եւ նման արտայայտութիւնները: Ինծի համար կայ ՄԷՎ Հայաստան: Յոռեզոյն պարագային, կը գործածեմ «Հայաստանի արեւմտեան հատուած», «Հայաստանի արեւելեան հատուած» ու նման արտայայտութիւններ, որով միշտ կը շեշտուի Հայաստանի մէկութիւնը»:

Անձնական ել-նամակի մը մէջ պարագայաբար գրուած այս տողերը զիս կը մղեն վերադառնալու այս մէկութեան յանկերգին, եւ այդ՝ ո՛չ միայն մեր հայրենիքի անուանումի պարագային: Երբ այս օրերուն այնքան կը հոլովուի, պէտք էր ըսէի՝ կը ժխտուի, մէկութեան գաղափարը եւ այնքան կը կրկնուի, դժբախտաբար, մեր ոչ մէկութեան «իրողութիւնը», մանաւանդ դուրսէն ու ներսէն մեզի կ'ուզեն հաւատացնել, թէ ներկայ աշխարհին մէջ այնքան ալ անհրաժեշտ չէ հայրենիք ունենալը, հայրենիքի մը պատկանիլը, կ'ուզեն առաջին հերթին շեշտել մեր մէկ հայրենիք ունենալու իսկութիւնը:

Հայրենիքը ո՛չ ծննդավայրդ է, ո՛չ ալ բնակավայրդ: Ասոնք կրնան ըլլալ Հայաստանի մէջ կամ Հայաստանէն դուրս, բայց Հայաստանն է հայրենիքդ, որ երկիրն է հայրերուդ, նախահայրերուդ, որոնք այնտեղ են ապրեր դարերով, մեր պարագային՝ անյիշատակ ժամանակներէ ի վեր, այնտեղ են ստեղծագործեր, մշակոյթ ստեղծեր, երկիր կառուցեր, քաղաքակրթութիւն յառաջացուցեր: Թէ յետոյ ստիպուեր են տեղափոխուիլ, կամայակամայ, գացեր-հաստատուեր են ուրիշ վայրերու մէջ, աւելի յաճախ՝ պարտադրուէ՛ր են երթալու, բայց իրենց հայրենիքը միշտ Հայաստանն է հանդիսացեր՝ իբրեւ պետութիւն ան գոյութիւն ունեցած ըլլալ կամ ոչ: Ուրեմն, ճի՛շդ է, շատ պայմանական հասկացողութիւններ են «Արեւմտեան Հայաստան» կամ «Արեւելեան Հայաստան», «Թրքահայաստան» կամ «Ռուսահայաստան» (ի՛նչ ամօթ) եւ նման անուանումները, որոնք, ի դէպ, երբեւէ պաշտօնապէս գոյութիւն չեն ունեցեր: Սահմանները կը փոխուին ժամանակ առ ժամանակ, հայրենիքդ չի՛ փոխուիր: Կը մնայ ան իր ամբողջական տարողութեամբ, Մեւ եւ Կասպից



ծովերուն միջեւ՝ Հայկական Բարձրաւանդակին վրայ՝ ըլլալով Մեծ Հայք, Փոքր Հայք, եւ քանի մը դար ալ՝ Փոքր Հայաստան (Կիլիկիա): Այդ ամբողջ տարածքն է մեր հայրենիքը, ներառելով ոչ միայն Հայաստանի Հանրապետութիւնը՝ իր ներկայ սեղմուած-կծկուած սահմաններով, այլեւ՝ Ջաւախքը թէ հայաթափուած Արցախն ու Նախիջեւանը, Մուշն ու Մասունք, Կարսն ու Արտահանք, Վանն ու Խարբերդը, Սիսն ու Հաճընը եւ մասամբ նորին. Այս տարածքները մաս կը կազմեն մեր հայրենիքին:

Գալով Հայաստանի Հանրապետութեան, ա՛ն եւս մէկ է, վերնագրին երկրորդ մէկը: Հայաստանի Հանրապետութիւնը գոյութիւն առած է 1918 ՄԱՅԻՄ 28-ին, ա՛յդ է իր տարեդարձի օրը: Կորսնցուցած է իր անկախութիւնը 1920-ին՝ խորհրդայնանալով, վերանկախացած է 1991 սեպտեմբեր 21-ին, սակայն չէ անուանուած Առաջին, Երկրորդ կամ Երրորդ հանրապետութիւն: Պէտք չէ երբեք այդպէս կոչուի: Մէ՛կ է ան ու մէ՛կ պիտի մնայ պատմութեան մէջ՝ անկախ, կիսանկախ կա՛մ ոչ անկախ: Այդ անուանումը կրնայ վերջ գտնել կամ օտար ուժերու գրաւումով եւ այդ տարածքին ուրիշ անուն մը յատկացուելով, կա՛մ ալ... արքայական նոր հարստութեան մը հաստատումով:

Գանք հիմա վերնագրի երրորդ մէկին:

Այդ ազգն է, հա՛յ ազգը, հայութի՛ւնը, որուն մէկութիւնն ալ կասկածի ենթարկել ուզողներ կան: Մէ՛կ է, որքան ալ նուիրագործուած ըլլան զայն բաժան-բաժան ընտղ որակաւորումները՝ «արեւմտահայութիւն», «արեւելահայութիւն», «սփիւռքահայութիւն», տակաւին՝ պարսկահայութիւն, քանատահայութիւն, լիբանանահայութիւն եւ այլն, փոխանակ՝ պարսկաբնակ, քանատաբնակ, լիբանանաբնակ հայութիւն ըսելու. եւ մէ՛կ է, որքան ալ լեզուական, մշակութային, կենցաղային եւ այլ տարբերութիւններ գոյութիւն առած ըլլան ժամանակի ընթացքին՝ տարբեր ազգակներու ի հետեւանք: Մէ՛կ է՝ այդ բոլորով հանդերձ:

Եւ մէկութեան իրողութիւնն է, որ այնքան անհասկնալի, ողբալի ու աններելի կը դարձնէ «ազգային» բառի ջնջումը մեր ազգային հաստատութիւններու անուան մէջէն՝ զանոնք փորձելով ներկայացնել իբրեւ «պետական» կամ «հանրապետական»: Ազգայինը կը ներառէ երկուքն ալ, քիչ մըն ալ աւելին: Այդ հաստատութիւնները համայն ազգին կը պատկանին, յաճախ ալ համայն ազգին միջոցներով կը պահպանուին: Միթէ պէտք չէ՞ մտածել նոյնիսկ Երեւանի պետական համալսարանն ալ վերանուանել Հայաստանի ազգային համալսարան:

Այո՛, մէկ ենք, ու մեր մէկութեան մէջն է մեր ուժը, որ թշնամին՝ ներկայ շուկայական, դրամատիրական, սակաւապետական աշխարհը, կը ջանայ ամէն գնով ջլատել: Չիյնանք ծուղակը:

Վրէժ Արմէն

23 Մայիս 2025

ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՓՈՒՆՋ ՍԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷ



ԿԱՆԳՆԵՐ ԵՍ ՎԵՆ

Կանգներ ես վեհ, կանգներ հպարտ, ա՛րգ իմ հայոց,
Ցաւդ ես ծամմեր ու ամբացեր դար ու դարեր,
Տառապանքով ես թրծուեր, հզօրացեր,
Բայց մընացեր քնքո՛ւջ ու հե՛զ, ա՛րգ իմ հայոց...

Քարերդ շատ, հողդ մի բուռ, չես բրտացեր,
Քարերով լոկ խաչքար կերտեր ես նրբագեղ,
Հոգի դրեր քանդակներուդ մէջ քարեղէն
Ու ոգեղէն, լուսեղէն են անոնք դարձեր...

Քար աշխարհի քարէ խղճին քա՛րդ է լացեր
Եւ վանքերէդ աղօթք յղեր առ Երկնայինն,
Բի՛ւր բի՛ւր մեղաց քաւութիւն է ան միշտ հայցեր,
Մոռցած վերքերդ խոշտանգուածի, չարչարուածի...

Լեռնաշխարհիդ մէջ քարեղէ՛ն, ապառաժեա՛յ,
Միրտդ փխրո՛ւն ու զգայո՛ւն է յար մընացեր
Ու տրոփեր է բիւր ցաւերուն համար մարդկանց,
Մոռնալով միշտ սեփական ցաւն իր կարեւր...

Ու խի՛ղճդ միշտ արթուն, վճիտ է մընացեր
Քա՛ր խիղճերու, քա՛ր սիրտերու աշխարհիս մէջ,
Եւ ներեր է անքէ՛ն սիրտով, ազնուօրէ՛ն,
Քարերո՛ւդ մէջ գութ, կարեկցանք ես ճառագեր...

Բայց ծառացե՛ր, աշտարակուե՛ր ես քաջաբար,
Երբ չարանենգ թշնամին է սպառնացեր
Քու հողիդ սուրբ, բառ ու բանիդ ծիրանեփայլ,
Ապառաժուեր խրոխտաբար սեզ սարիդ պէս:

3/5/2019



.....

ՎԱՐԴ ԻՄ

Լուսափթիթ դուն ծաղկեցար,
Վա՛րդ իմ չքնաղ եւ հոգեթով,
Հայեացքիդ մէջ քու ոսկեշող,
Հորիզոններն էին փռուած...

Թերթիկներուդ վրայ լուսէ
Յուլանքը կար երկնին կապոյտ,
Ջահավառեալ բիրտ աստղերուն,
Որ զգուեցին քեզ սիրահեւ...

Արեգակը ցօղեր կաթեց
Որ դուն շողաս մշտաբուրեան,
Յոյք մը ժպիտ սփռես, բաշխես
Աշխարհին ու մարդուն յոգնած...

Փուշերդ լոկ ծակծկեցին
Պոկել փորձող ձեռքը անմիտ,
Որ յանդգներ ձեռք տալ սրտիդ
Որ բաբախէր թերթերուդ տակ...

Վա՛րդ իմ աղուոր, դէռ կը դողամ
Քու հմայքիդ վարդաբուրեան,
Թող ան ցոլայ լուսապայծառ
Մինչեւ ձմռան բուքն ու բորան...
12/5/2017

.....

ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳՍ

Վերջին զանգիս պատկերները ժամանակէն քիչ աղօտած
Կը խուժեն ներս լուսամուտէն մտքիս, սրտիս, տարիներ անց,
Նորոգ փայլ մը կարծես հագած ու թարմացած, գեղազարդեալ
Զիս կ'ընծայեն պարմանուհին երազներով վարդաշուշան...

Հետքերը լոյս որոնք քամին փորձեց ջնջել անվերադարձ
Ետ կը դառնան գողտրիկ, յուշիկ, թրթիռին հետ լուռ կարօտին,
Ուր կայ վաղուան հորիզոնը լուսավարար ու տեսլական,
Անամպ երկինք ուր դէռ հոգիս թռիչք կ'առնէ լուսարբեցած...



Ժամանակը թէև տրորեց լոյս հետքերէն գուցէ շատ բան,
Հոգիս սակայն դեռ կը փնտռէ լոյս երազներ որ չմեռան,
Առին նոր կեանք տարիներուս թաւալքին հետ փոթորկահար,
Հունտերու պէս ընձիւղեցան, ծիլ ու ծաղիկ տուին բուրեան:

Վերջին զանգիս դողանջները դեռ կը հնչեն ունկերուս մէջ,
Չկայ վախճան ու չկայ վերջ անոնց կանչին երազահեւ,
Տրոփիւնին հետ իմ սրտին եւ հոգիիս անուրջին հետ...

24/5/2025

.....

ՄԻՐԵԼԻ ՀԱՅՐԻԿԻՍ

(Հայրերու ամսուան առթիւ)

Դուն մեկնեցար, շո՛ւքդ մնաց,
Շուքիդ մէջ քու հե՛ւքդ մնաց
Կարօտակէ՛զ, սիրավարա՛ր...

Դուն հեռացար, շո՛ւնչդ մնաց,
Շունչիդ մէջ քու սի՛րտդ մնաց
Հայրենավա՛ն, հայրենաբա՛ղձ...

Դուն մեկնեցար ֆիզիքապէ՛ս,
Հետքերդ լո՛յս ինծի հետ են,
Մթնահալած փարոս որպէս...

Ինծի հետ են յուշդ, վարքդ,
Հայավարի քու կեցուածքդ,
Խոհերդ բիւր, խոկումներդ...

Օրերուս մէջ իմ միզամած,
Ժպիտդ կայ լուսապայծա՛ն,
Որ փարատէ մէզը մռայլ...

Թէ խարխափեմ ու գայթակղիմ,
Հաստատակա՛մ ձեռքիդ փարիմ,
Որ դեռ կ'օգնէ՝ չմոլորի՛մ...



Եւ ամէն պահ յորդո՛րդ կայ
Մարդ մնալու, անկեղծ, իրա՛ւ,
Հայուն վայե՛լ ազնուութեամբ:
2/6/2025

.....

ՄԱՅՐԱՄՈՒՄ

Մայրամուտիս բորբ ճաճանչնե՛ր,
Ծիրանագե՛ղ հուրհրրատէք
Բիւր բիւր խոհե՛ր ու տաք յոյգե՛ր
Հորիզոնին դեռ լուսեղէն...

Գգուե՛ք հոգիս իմաստութեամբ,
Ձեր շողերուն կրակներով,
Արեւանա՛մ վերջին անգամ
Եւ մատուցուի՛մ սիրագորով...

Հորիզոնին ճաճանչագեղ,
Յամենա՛մ դեռ շառայլներով,
Որոնց բոցը ձեզ պարուրէ
Երագներով միշտ հոգեթով...

Թէ մեկնիլ կայ, այսպե՛ս մեկնիմ,
Թողելով լոկ լուսէ տեսիլք,
Անմահ երազը նո՛ր վաղուան,
Լուսաբացին առաւօտեան...
6/6/2022

ԿԵԱՆՔԷՍ ՊԱՏԱՌԻԿ ՄԸ

ՄՕՐՍ ԿԱՆԱԶ ՀԱՅԵԱՅՔԸ



– Արփի՛, ջա՛նս, չեմ գիտեր ինչպէս բացատրեմ. սխալ չհասկցուիմ, բայց մայր ունենալը ինչպէ՞ս կըլլայ մոռցած եմ: Գիտեմ, որ ցաւս մեղմացնելու համար պէտք էր մայրս փնտռէի, գլուխս կուրծքին դնէի, իր աչքերուն մէջ արցունքս տեսնէի, նեղ ժամերուս իր նեցուկը հայցէի ու մերժուած չզգայի:

– Քո՛յրս, 45 տարի առանց մօր ապրիլը, քիչ ժամանակ չէ. բնական է, որ կարգ մը բաներ բթանան:

– Այո՛, 45 տարի ինքնուրոյն ապրելով, ժամանակին դաժանութեան ու պայմաններուն յարմարելով, մոռցած եմ «արդար» իրաւունքս՝ մայրական հոգածութիւն ցանկալու: Թէեւ յիշողութեանս մէջ ամուր տպուած են մօրս հետ ապրած տասնվեց տարիներուս ուղեկցող սէրն ու խնամքը:

Վարդագոյն եւ փայլուն մաշկով մայրս՝ իր կանաչ հրեշտակային հայեացքով, անմեղութեան ու անսակարկ սիրոյ ամենէն բարի տիպարն էր:

Կարծես չարը վրեժ կը լուծէր այդ բարի էակն եւ անողոք քաղցկեղը կը տեղադրէր անոր երիտասարդ կուրծքին մէջ: Չարը անտեղեակ էր, թէ ինք վեց տարի, յամառ պայքար պէտք էր մղէր, մինչեւ որ մօրս անխորտակ կամքը ընկճէր:

Մայրս ամբողջ թաղին հիւրընկալն էր: Մեր տան գետնայարկ ըլլալը շատ նպաստած էր իր մարդասէր ու բարի խառնուածքին: Ով որ դարմանատուն պիտի հանդիպէր, դայեակ Արմենուհիին պիտի այցելէր, եկեղեցիէն թուղթ մը պիտի վերցնէր կամ փերեզակներէն գնում պիտի ընէր, իր «շունչը» մեր տունէն կառնէր: Մեր տունը սպասման սրահ էր, խոհանոց էր, սուրճ էր, սէր էր, ժպիտ էր...: Անշուշտ միակ գանգատողը ես էի, որովհետեւ լուացարանին կուտակուած սուրճի գաւաթները իմ ճիտիս պարտքն էին:

«Նուրիճա՛, հարսնիք ունինք, մեզի հագուստ կը ձեւե՛ս», «Բրդեայ գազակիս սկիզբի քանի մը տողերը կը հիւսե՛ս», «Աղջկաս ձեռագործին կ'օգնե՛ս»...: Տան մէջ միշտ իմ բարկութիւնս գրգռող, շարան մը կտաւեղէն ու բրդեղէն կար. չըսելու համար՝ ուրիշներուն «ղալապալըխը»: «Ո՛չ» բառը մօրս բառարանին մէջ գոյութիւն չունէր: Մայրապետներուն քով իր սորված ֆրանսերէնով եւ թուաբանութեամբ, շարք մը դպրոցականներու շարադրութեան կօգնէր եւ անոնց թուաբանական խնդիրները կը լուծէր: Հանգիստ ու դադար չունէր. դուռ դրացիին, ազգականին, բարեկամին եւ մեր հինգ հոգինոց ընտանիքին բոլոր պէտքերը լի ու լի կը կատարէր:

Պատերազմը եւ քաղցկեղը իր ողնայարը կոտրեցին: Պէյրութի արեւմտեան կողմը գտնուող՝ Ամերիկեան հիւանդանոցին մէջ կը բուժուէր: Պատերազմին ստեղծած անցարգելներուն եւ սահմաններուն պատճառով, իր բժշկական թոթաճարը փոխադրեցին Պէյրութի արեւելեան կողմը գտնուող հիւանդանոց մը: Չախտող բուժման բոլոր երեւոյթները խեղճ մօրս վրայ ի յայտ եկան...: Չախ թելը իր ծաւալով՝ աջ թելին եռեակ չափը ստացաւ: Մեծ քանակութեամբ ճառագայթ (radiotherapy) ստանալուն պատճառաւ, իր կուրծքին վրայ ահռելի վերքեր



բացուեցան: Ինձի համար այդ վերքերը դարմանելը, իրենց տեսքով ու հոտով, խիստ դժուար էր...:

Մայրս յաճախ կ'ըսէր. «Հիւանդութենէս չեմ դժգոհած, այլ ձանձրացած եմ մարդոց տեղատարափ հարցումներէն»: Ոմանք բան մը ըսելու սիրոյն կը ձաբռտէին. «Դէմքէդ բնաւ չէրեւիր, որ հիւանդ ես», «Արապի բժիշկ մը կայ, անոր գնա՛ »: Ամէն պատահական անցորդ, կա՛մ խորհրդատու էր, կա՛մ ալ՝ բժիշկ:

Մօրս Վեցամեայ տառապանքը աննկարագրելի ցաւոտ էր: Նպատակս տառապանքին տարողութեան անդրադառնալը չէ, բայց յիշատակութեան արժանի է, իր աննկուն կամքն ու ներքին զօրութիւնը:

Մեր տան մէջ վխտացող ոտքերը՝ կարող, հիւսող, սուրճ խմողները... բոլորը վերացած էին: Պարզ էր... մօրս նահանջած կարողութիւնները հազիւ իր ցաւին կը բաւէին:

Ռմբակոծումը սաստիկ էր, մեր թաղը տուն առ տուն թիրախ էր: Բոլորիս համար նոր սկսած պատերազմը անսովոր ու սարսափազդու երեւոյթ էր: Մօրս վիզին փաթթուած բարձրաձայն կու լայի: Խեղճս հազիւ ինքզինք բռնած, իր կանաչ աչքերով զիս կը դիտէր...: Այդ նայուածքը յիշողութենէս բնաւ չի հեռանար: Նայուածք մը, որուն մէջ հարիւր տեսակ անպատասխան հարցում կը կարդայի: Իր վիճակին քաջ տեղեակ էր...: Մեզ ո՞ր ձգէր. քոյրս տակաւին ութ տարեկան չէր, եղբայրս ու ես պատանի էինք, հայրս երիտասարդ էր:

Այդ նոյն կանաչ հայեացքով, արթնութեան ու զգաստութեան կոչ կ'ուղղէր: Պէտք էր զօրանայինք, կորուստին, պատերազմին, սուզին հետ հաշտուէինք: Միասնաբար՝ ր ցաւերը դիմագրաւէինք ...:

_ Այո՛, քո՛յրս, այդ յաջորդական ցաւերը՝ 45 տարիներու ընթացքին, ապրեցանք մեր ուրոյն ոճով, պայքարեցանք մեր անհատական ուժերով... Առանց ծնողքի մնացինք, բայց «որբեր» չեղանք: Ներքին զօրութեամբ՝ ամէն մէկ հարուածի հետ, աւելի ճկուն, ամուր ու ամբողջական դարձանք:

Չեմ գիտեր ինչպե՞ս բացատրեմ, մայր ունենալը ինչպե՞ս կ'ըլլայ... մոռցած եմ:

ՄԻԼՎԱ ԻՍԿԻԿԵԱՆ ՄԱՀՐԵՃԵԱՆ

ՎՏԱՆԳՈՒԱԾ, ԲԱՅՑ Ո՛Չ ԿՈՐՄՈՒԱԾ ՄԵՐ ԼԵԶՈՒՆ, ՄԵՐ ՄՇԱԿՈՅԹԸ

Մայիս 17, 2025



Լեզու, սփիւռք, հայրենիք, յիշողութիւն, ինքնութիւն, ձուլում, մայրենի լեզու, լեզուներու անհետացում, լեզուապահպանում, լեզուներու վերակենդանացում, փոքրամասնութիւններ՝ ամէնէն շատ սերտուած նիւթերն են ընկերալեզուաբաններու կողմէ: Պատահական չէ, որ լեզուապահպանումի հարցը առաջնահերթ տեղ սկսած է գրաւել համաշխարհային գետնի վրայ:

Թիւերով խօսինք

Անցեալին ունեցած ենք 12.000 լեզուներ, իսկ այսօր 6000 լեզուներ գոյութիւն ունին: Այս 6000 լեզուներէն 276-ը կը խօսուին մէկ միլիոն հաշուող ժողովուրդներու կողմէ եւ 80-90 առ հարիւրն ալ կը խօսուի բնիկ ժողովուրդներու կողմէ, որոնք հազիւ 10 առ հարիւրը կը հաշուեն երկրի բնակչութեան: Այս կը նշանակէ, որ այսօր լեզուներու 80-90 առ հարիւրը կը գտնուի աշխարհի բնակչութեան 10 առ հարիւրին մօտ, որոնց մեծամասնութիւնը թիւով քիչ է եւ տկար, ինչպէս՝ Փափուա Նոր Կիւնէյի ուարաբունները, որոնք թիւով 500 հոգի են, եւ մալով խումբը՝ 3300:

Օրինակի համար, 1500 թուականին Պրագիլի մէջ 1175 լեզուներ կը խօսուէին, իսկ 1993-ին անոնց թիւը 200 կը հաշուէր: 1996 թուականին Սուտանի հարաւը 132 լեզուներ կը խօսուէին, իսկ 2020-ին անոնց թիւը 17 կը հաշուէր: Այսօր Ինտոնէզիոյ մէջ 425, Փափուա Նոր Կիւնէյի մէջ 312, Աւստրալիոյ մէջ 190 եւ Ամերիկայի մէջ 180 լեզուներ վտանգուած են: Կը նախատեսուի,

որ լեզու մը պիտի կորսուի ամէն երկու շաբաթը անգամ մը:

Կորսուած լեզուներ, կորսուած աշխարհներ

Այս իրողութիւնները կը մտահոգեն ընկերալեզուաբանները, որովհետեւ լեզուներու մեծաքանակ անհետացումի պատճառով մշակոյթներու անհետացումը կրնայ վտանգել մարդկային ցեղին գոյութիւնը: Այսօր երկրագունդի բնակչութեան թիւը անցած է 8 միլիարդ, մարդկութիւնը նուաճած է Ամերիկաները, Աւստրալիան եւ Խաղաղականի ամէնէն փոքր կղզիները, վարժուած է անտառներու, անապատներու եւ սառուցեալ ովկիանոսի պայմաններուն՝ շնորհիւ այն մշակոյթներուն, որոնք փոխանցուեցան լեզուներու միջոցով,



եւ հոնկէ՝ սովորութիւններու, կրօններու եւ արժէքներու թափանցումը եւ տարածումը: Այս տրամաբանութեամբ, որեւէ խախտում լեզուներու այլազանութեան մէջ եւ կրճատում անոնց մշակոյթներու զանազանութեան մէջ՝ կը նշանակէ մարդկային ցեղին յարմարելու ուժականութեան տկարացում:

Լեզուներու անհետացման անակնկալ պատճառները

Կարելի չէ մէկ բացատրութիւն տալ լեզուներու կրած անկումին: Բնական աղէտներ, հիւանդութիւններ, տեղահանութիւն, կրօնափոխութիւն եւ սոստեսական պայմաններ գլխաւոր ազդակներ են:

Օրինակի համար, Իրլանտայի գետնախնձորի «հիւանդութեան» պատճառած անօթութիւնը (1845-1851) մէկ միլիոն անձի մահուան եւ մնացորդին զանգուածային գաղթին պատճառ դարձաւ: 1841-ին 8 միլիոն հաշուող ժողովուրդը 6,5 միլիոն եղած էր տասնամեակ մը ետք: Գիւղաբնակ ժողովուրդը, որ ամէնէն աւելի իրլանտերէն կը խօսէր, ամէնէն աւելին տուժեց, ինչ որ պատճառ դարձաւ այդ լեզուին աննախընթաց տկարացման եւ նոյնիսկ անհետացման որոշ շրջաններու մէջ:

Եւրոպացիներուն Ամերիկա հասնելէն 200 տարի ետք բնիկ ժողովուրդին 90 առ հարիւրէն աւելին մեռաւ հաստատուողներուն եւ անոնց անասուններուն բերած հիւանդութիւններուն պատճառով: Կեդրոնական Մեքսիքան 1518-ին, երբ սպանացիները եկան, 25 միլիոնէ աւելի կը հաշուէր: Սակայն 1620-ին 1,6 միլիոնի իջած էր բնակչութեան թիւը: Ամազոնի մեծ շրջանը ուներ 6,8 միլիոն բնիկ ժողովուրդ, բայց այդ ժողովուրդը 1992-ին միայն 700.000 կը հաշուէր: Ներկայիս, ըստ ՄԱԿ-ի վիճակագրութիւններուն, ՄԻՏՍ-էն մահացողներուն 95 առ հարիւրը կը գտնուի Ափրիկէի եւ Լատին Ամերիկայի մէջ, երկու ցամաքամասեր, որոնք կը պարունակեն աշխարհի 3/4 լեզուները:

Ամազոնի անտառներուն միլիոնաւոր ծառերու անհետացումը, հանքերու մեծաքանակ շահագործումը եւ շարունակական սպանութիւնը տեղացի ցեղերուն՝ կը վտանգեն բնիկ ժողովուրդին կեանքը, կը պատճառեն մեծաթիւ արտագաղթ եւ կը դժուարացնեն անոնց ջանքերը՝ պահպանելու իրենց մշակոյթը, աւանդութիւնները եւ լեզուները:

Համաշխարհային Բ. պատերազմին, Խաղաղական եւ Հնդկաց ովկիանոսներու կղզիներու ընկերութիւնները թիրախ դարձան, եւ հսկայական վտանգի ենթարկուեցան անոնց լեզուները: Փափուա Նոր Կիւնէյի մէջ ճափոնցիները եւ դաշնակից ուժերը պատճառ դարձան հարիւրաւոր խօսակցական լեզուներու ամբողջական կորուստին՝ այրելով բոլոր



արխիւները: Նոյնպէս, անտարանչական արշաւներու եւ գաղութատիրական լեզուներու պարտադրանքին պատճառով հազարաւոր բնիկ լեզուներ եւ մշակութային ժառանգութիւն անհետացան:

Անգլերէնէն անդին

Յաճախ փորձեր ալ կը կատարուին, մանաւանդ՝ համաշխարհային մամուլին կողմէ, մատնանշելու անգլերէնի մեծածաւալ տարածումը եւ անոր ազդեցութիւնը աշխարհի լեզուներուն վրայ: Պատահական չէ, որ անգլերէնը յաճախ կը կոչուի «սպաննող լեզու» ընկերակազմութեան հատորներու մէջ: Այդ մէկը, սակայն, կ'օգնէ ճշդելու պատճառներէն միայն մէկը: Բացատրենք:

Ներկայ վիճակը եզակի է՝ աշխարհ այսօր մեծաթիւ բնակչութիւն չէ ունեցած, համաշխարհայնացումի ընթացքը այսօր արագընթաց չէ եղած, հաղորդակցութեան եւ փոխադրամիջոցներու ճարտարարուեստները այսօր լայնածիր չեն եղած, այսօր լեզուներու միջեւ հաղորդակցութիւն չէ ստեղծուած, եւ ոչ մէկ լեզու այսօր համաշխարհային ազդեցութիւն չէ ունեցած, որքան՝ անգլերէնը:

Հարցումը այն է, թէ ինչպէ՞ս պիտի կրնան լեզուներ, մանաւանդ՝ փոքրամասնութիւն կազմող ժողովուրդներու լեզուները, տոկալ նման պայմաններու մէջ:

Թեր եւ դեմ տեսակէտներ

Մուֆուէնէ կը կարծէ, թէ լեզուները իրենց բնական ընթացքը պէտք է շարունակեն, նոյնիսկ եթէ այդ կը նշանակէ անոնց մահը: Ան կը հաւատայ, որ արդէն լեզուներու այլազանութիւնը Աստուծոյ պատիժն էր Բաբելոնի մէջ, եւ անոնց նուազումը համերաշխութիւն, խաղաղութիւն եւ բարգաւաճում պիտի երաշխաւորէ:

Այս թեզը պաշտպանողները 1960-ական թուականներուն Հիւսիսային Ամերիկայի, Աւստրալիոյ եւ Անգլիոյ մէջ ծանր պատիժներու կ'ենթարկէին աշակերտներ եւ անոնց բերանը օճառով կը լուային, երբ անոնք իրենց մայրենի լեզուն գործածէին դպրոցին մէջ: Անգլիոյ մէջ ուսուցիչներ այցելութիւններ կատարեցին իրենց օտար աշակերտներուն տուները՝ զգուշացնելու անոնց ծնողները եւ արգիլելու տան մէջ անոնց մայրենի լեզուին գործածութիւնը: Անոնք համոզուած էին, որ երկլեզուութիւնը նոր երկրին հանդէպ հարազատութեան ու պատկանելիութեան հարցեր կը յարուցէ եւ կը խանգարէ մանուկին հոգեմտաւոր զարգացումը: Անգլերէնէն զատ ուրիշ լեզու խօսողներ կը նկատուէին՝ ապուշ, ծոյլ, աղքատ, անվստահելի եւ անբարոյ: Այս միջոցառումները եւ համոզումները մղեցին



բազմաթիւ գաղթականներ, որ ո՛չ միայն լքեն իրենց մայրենի լեզուն, այլեւ փոխեն իրենց անունները եւ մականունները:

Բարեբախտաբար 1970-ական թուականներուն, շնորհիւ ընկերալեզուաբաններու ուսումնասիրութիւններուն, կը հաստատուի, որ մայրենի լեզուի դասաւանդութիւնը եւ պահպանումը անհրաժեշտ են՝ մշակելու ինքնուրոյն ազգային ինքնութիւն, մշակութային պատկանելիութիւն, ազգային սովորութիւններ, ընտանեկան սերտ յարաբերութիւններ, մանկական յիշատակներ, լեզուի հանդէպ հաւատարմութիւն եւ հարազատութիւն, ազգային պատմութիւն, բարոյագիտութիւն եւ փիլիսոփայութիւն:

Ահա թէ ինչո՛ւ մեծ թիւով լեզուագէտներ, ինչպէս՝ Տիքսըն, Նեթըլ եւ Ֆիշմըն, կը հաւատան, որ մայրենի լեզուի պահպանութեան հետ կը պահուին՝ մշակոյթ, իւրայատուկ

կենցաղավարութիւն, յատուկ ինքնութիւն, աշխարհահայեացք եւ մտածելակերպ:

Համաշխարհային նեցուկ

Այս չափանիշները եւ ըմբռումները ընդգծելու առումով, Միացեալ ազգերու կազմակերպութիւնը եւ Եւրոպական Միութիւնը որդեգրած են յստակ որոշումներ՝ ապահովելու փոքրամասնութիւններու լեզուական իրաւունքները: Լեզուաբաններուն հրամցուցած լուսաբանութիւնները եւ միջազգային մարմիններու որոշումները կու գան հաստատելու, որ կարելի չէ համաշխարհային համերաշխութիւն ապահովելու պատրուակով քաջալերել գաղութներու լեզուներու հարստահարումը, կամ մէկ լեզուի եւ մէկ մշակոյթի բռնակալական ախորժակները:

Այս գորակոչին իբրեւ ենթահող կը ծառայեն ընկերաբաններու եւ լեզուաբաններու մեծ խումբի մը աշխատասիրութիւններուն արդիւնքները: Անոնք կը հաւատան, որ երբ մայրենի լեզուի փոխանցումը խախտի, անոր կը հետեւի ժառանգուած գիտութեան լուրջ կորուստ, որովհետեւ այդ կը պարունակէ թէ՛ անձնական եւ թէ՛ ազգային պատմութիւններու բանալին, կը յատկանշէ ժողովուրդի մը մշակութային, անձնական եւ ազգային ինքնութիւնը, կ'ընդգծէ անցեալի եւ նախնիներու հետ կապը եւ շարունակականութիւնը, կ'արտացոլացնէ իւրայատուկ աշխարհահայեացք եւ դէպքերու մեկնաբանութիւն, կ'ընդգրկէ անհրաժեշտ, հետաքրքրական եւ հմայիչ քերականական, բառագիտական եւ հնչիւնաբանական յատկանիշներ եւ կը յառաջացնէ ընկերային համերաշխութիւն, ինքնավստահութիւն եւ մշակութային հպարտութիւն:



Ազգային ինքնագիտակցութեան զարթօնք

Պատահական չէ, որ այսօր յունական, իտալական եւ չինական կարգ մը գաղութներ Հիւսիսային Ամերիկայի մէջ զօրաշարժի ենթարկուած են՝ պահպանելու իրենց նախահայրերուն լեզուները, որովհետեւ անոնք հպարտ կը զգան անգամ մը եւս իրենց ժառանգութեամբ, դրական կեցուածք սկսած են մշակել իրենց լեզուին հանդէպ, մտադրած են օգտուիլ իրենց լեզուին հրամցուցած արժէքներէն, սկսած են գիտակցիլ ազգային միասնականութեան կարեւորութեան, անհրաժեշտ կը սեպեն հայրենիքի հանդէպ իրենց կապուածութիւնը եւ կ'ուզեն կառչիլ իրենց իւրայատուկ կրօնական հաւատալիքներուն եւ ծէսերուն:

Երբ մեր լեզուն դարձաւ վտանգուած ժառանգութիւն

Իսկ երբ 2010-ի փետրուարին ԵՈՒՆԵՍԿՕ-ի Վտանգուած լեզուներու ցանկին վրայ զետեղուեցաւ արեւմտահայերէնը՝ մե՛ր մայրենի լեզուն, թերեւս լեզուներու անհետացումը եւ մահը ա՛լ առասպել մը չէր, կամ՝ ուրիշներուն պատահելիք բան մը, այլ՝ քիչ մը աւելի հարազատ:

Արտա Ճէպէճեան

Ղոկտոր ընկերակէզուարանութեան

Քուէյթ, ապրիլ 2025

ՊՐԻՄՄԱԿԷՍ

«ՄԵԾ ԵԳԻՊՏԱՀԱՅ ՄԸ»

Մարուշ Երամեան



Այս գրքոյկը գրուած է Երուանդ Օտեանի գրիչով եւ նուիրուած Պօղոս փաշա Նուպարի: Հրատարակուեր է 1913-ին, Կ. Պոլսոյ մէջ:

Գրքոյկին սկիզբը կենսագրական հակիրճ ծանօթութիւններ տրուած են Պօղոս փաշա Նուպարի հօր՝ Նուպար փաշայի մասին, որոնք այնքան հետաքրքրական են, որ ուզեցինք հրամցնել մեր ընթերցողներուն:

Նման գիրքերու մէջ նաեւ կարելի է հանդիպիլ այնպիսի մանրամասնութիւններու, որոնք կորսուած կը կարծուին ըլլալ հանրութեան համար, ինչպէս է պարագան Նուպար փաշայի մեծ արձանին, որ գետեղուած էր փաշային անունը կրող Աղեքսանդրիոյ պարտեզներէն մէկուն կեղորոնը:

Համացանցին մէջ պրպտումներս ինծի բերին յօդուած մը, որ խորագրուած է «Աղեքսանդրիոյ Շարժող Արձանները», գրուած 2016-ին, Ռայմոնտ Գուլէթի կողմէ:

Այս յօդուածին մէջ հեղինակը կ'ըսէ՝ «Նուպար փաշայի եւ Խտիվ Իսմայիլի արձաններուն նման, որոնք 1952 թուականի յեղափոխութենէն ետք անհետացան: Կը թուէր թէ այդ արձանները մոռացութեան մատնուեր են կամ ... ձուլուեր: Բայց 2000 թուականին այդ արձանները յայտնուեցան տարբեր տեղերու մէջ: Նուպար փաշայի արձանը կը զարդարէ Աղեքսանդրիոյ օփերային մուտքը - նախապէս՝ Մուհամմետ Ալի հանդիսասրահ, աւելի ետք՝ Սայրետ Տարուիշ անուանուած - եւ իր փառայեղութեամբ մեծ շուք մը կու տայ այդ կառոյցին: Պատմութիւնը չի ջնջուիր, պարզապէս... կը տեղափոխուի»:

Արձանը, որուն հեղինակն է ֆրանսացի արձանագործ Denys Pierre Puech (1854-1942), կանգնուած է 1904-ին, պաշտօնական բացումը կատարուած 3 Յունիսին, որուն ընթացքին իօսք առեր է Պօղոս Նուպար փաշան: Պէտք է նշել նաեւ, որ նոյն արձանագործին յանձնուեր է Նուպար փաշայի շիրիմին յղացումն ու իրագործումը:



Երուանդ Օտեան իր տեղեկութիւնները մեծ մասամբ քաղեր է 1910-ին լոյս տեսած Էմիլ Պերթրանի գրիչով «Նուպար Փաշա» հատորիկէն, թարգմանուած նոյնինքն Նուպար փաշայի երկրորդ կարգի զարմիկին՝ Մեսրոպ Նուպարեանի կողմէ: Մեսրոպին եւ Նուպարին մեծ հայրերը երկու եղբայրներ եղած են:

Այս գրքոյկին տողատակի ծանօթագրութիւններէն մէկուն մէջ կը կարդանք.

«Տետրակիս հեղինակը Պ. Էմիլ Պերթրան՝ որ Նուպար փաշայի աւելի ներքին պարագաներով կը զբաղի քան անոր քաղաքական հոյակապ կեանքով, չիշէր հոս թէ 1850-ին Լոնտրա դրկուեցաւ ան Բրիտանական դահլիճին մօտ պայքարելու համար ինչ ինչ յաւակնութեանց դէմ, զորս Թուրքիա արժեցնել կ'ուզէր Եգիպտոսի դէմ, ու յաջողեցաւ իսկ ճանչցնել տալ փոխ-արքային իրաւունքները: Ասիկա առաջինն եղաւ այն բազմաթիւ յատուկ պատգամաւորութիւններէն, զորս կատարեց նա, գրեթէ ամէնքին ալ յաջողցնելով»:

Նուպարեանները իզմիրցի վաղածանօթ գերդաստան մըն են: Պօղոս փաշայի հայրը՝ մեծն Նուպար ծնած է Իզմիր. իր հայրն էր Մկրտիչ Նուպարեան, որ անցեալ դարուն (19-րդ) կ'ապրէր եւ իր ժամանակին ազատական եւ յառաջդիմասէր անձնաւորութիւն մը եղած է, երոպական կրթութիւն առած ըլլալով:

Նուպար տակաւին պատանի հասակին մէջ խնամեալ կրթութիւն մը ստանալէ ետք, կը դրկուի Եգիպտոս, ուր իր մօրեղբայրը՝ Պօղոս Պէյ Եուսուֆեան, ինքն ալ բնիկ իզմիրցի մը, արդէն փայլուն դիրքի մը տիրացած էր Խտիվական հարստութեան հիմնադիր Մուհամմետ Ալիի քով:

Պօղոս Պէյ տեսնելով իր քրոջորդոյն ուշիմութիւնն ու արտակարգ կարողութիւնները, չի վարանիր իր պաշտպանութեան ներքեւ առնել զայն եւ 1842-ին կը ներկայացնէ Մուհամմետ Ալիի, որ իսկոյն Արտաքին Գործերու Նախարարութեան թարգմանիչներու դիւանին մէջ պաշտօնի կը կոչէ խելացի պատանին, որ հազիւ 17 տարեկան կար:

-Քեզ տեսնեմ, աշխատէ՛ ու մարդ եղիր,- կ'ըսէ անոր Մուհամմետ Ալի:

Քիչ ատենէն աննշան պարագայ մը Նուպարի բախտը կ'որոշէ:

Ռակուշայի դուքսը նամակ մը կը գրէ Եգիպտոսի փոխարքային. գիրը այնքան գէշ ու անընթեռնելի էր, որ ոչ ոք կրնայ կարդալ պալատին մէջ: Ի վերջոյ կը բերեն պատանի հայ քարտուղար-թարգմանիչը, որ իսկոյն կը կարդայ ու կը թարգմանէ նամակը: Ասիկա բաւ կ'ըլլայ, որպէսզի ծերունի փոխարքան իր համակրանքը եւ կատարեալ վստահութիւնը շնորհէ քարտուղարին, որուն բախտը այդ օրէն կը սկսի ժպտիլ:

Մուհամմետ Ալի այնքան մեծ համարում կ'ունենայ Նուպարի վրայ, որ անոր կը յանձնէ իր որդոյն՝ Իպրահիմ փաշայի կրթութիւնը:

Երբ Իպրահիմ փաշա Երոպա կ'երթայ պաշտօնական այցելութիւն տալու Ֆրանսայի եւ Անգղիոյ արքունիքներուն, իրեն կ'ընկերանայ Նուպար, եւ Փարիզ, Լուի-Ֆիլիպի պալատին մէջ, պատանի հայագգին մեծապէս կը գնահատուի: Թագաւորը հետը խօսակցելով կը զարմանայ անոր զարգացումին եւ մտային կարողութեան վրայ: Պէտք չէ մոռնալ, որ Լուի-Ֆիլիպի դեռ գահ չբարձրացած, երբ աքսորուած էր Անգղիա, վարժապետութիւն կ'ընէր ապրելու համար, ուստի գիտէր գնահատել երիտասարդ իմացականութեան մը արժէքը:

Ֆրանսական կառավարութիւնը շատ երիտասարդ կը գտնէ Նուպարը պատուիրակութեան միւս անդամներուն հետ անոր ալ պատուանշան տալու համար եւ կ'որոշեն թագաւորին կողմէ իբր նուէր զոյգ մը ատրճանակ տալ իրեն, պատուանշանի տեղ:

Բայց վերջին վայրկեանին, երբ Իպրահիմ փաշա իր հետեւորդներով դուրս կ'ելլէր Թիւրքիի պալատի սրահներէն, ուր եկած էր հրաժեշտ տալու թագաւորին, Լուի-Ֆիլիպի չկրնալով համակրութեան զգացումը զսպել, մարդ կը դրկէ հայ երիտասարդ քարտուղարին ետեւէն, զայն քովը կանչել կու տայ եւ իր քով գտնուող պաշտօնակալի մը կուրծքէն պատուոյ Լեզեռնի խաչը առնելով, Նուպարի լամբակին վրայ կ'անցընէ ըսելով.



-Շւէ՛ք ձեր վեհապետին, որ չէ թէ ֆրանսական կառավարութիւնը, այլ անձնապէս թագաւորը իր ձեռքով այս պատուանշանը տուաւ:

Նուպար այն ատեն հազիւ քսան տարեկան կար:

Անկէ տարիներ ետքը, Նուպար կը ստանայ նաեւ պատուոյ Լէգէոնի մեծագոյն ժապաւէնը:

Այս առթիւ սրամիտ խօսք մը ըրած է մեծանուն հայը, զոր կը յիշէ Էմիլ Պերթրան իր կենսագրականին մէջ եւ որ կ'արժէ կրկնել այստեղ:

Մուեզի ջրանցքին շինութեան մասին կատարուած բանակցութիւնները յաջողցնելու համար Փարիզ գացած ըլլալով, Նուպար գրեթէ ամէն կէտերու վրայ գոհացում կը ստանայ, բայց բնականաբար կը ստիպուի քանի մը զոհողութիւններ ընել, որոնցմէ մին վաթսուն միլիոնի կը նստէր Եգիպտոսի կառավարութեան:

Նուպար փաշա ակամայ համակերպած էր այդ զոհողութեան: Բանակցութիւնները վերջացած, Փարիզէն մեկնելու ատեն իր հրաժեշտը կու տայ Մօռնիի դուքսին, որ իրեն կ'իմացնէ, թէ Նափոլէոն Գ. կայսրը Լէգէոնի հրամանատար անուանած էր զինքը եւ կ'ուզէ ինք անձամբ անոր վիզը անցնել պատուանշանի փողկապը: Նուպար բարձրահասակ էր, իսկ Մօռնիի դուքսը ընդհակառակը՝ կարճահասակ: Որպէսզի գործողութիւնը կարելի ըլլայ, Եգիպտոսի հայ նախարարը կը պարտաւորուի բաւական ծռելու. այն ատեն կամաց մը կը փսփսայ դուքսին.

-Դո՛ւքս, վզիս վրայ ծանրացող վաթսուն միլիոնները կը ստիպեն զիս գլուխս խոնարհել:

Մուհամմետ Ալիի մահուրնէն ու Իպրահիմ փաշայի խիստ կարճատեւ իշխանութենէն ետքը Խտիվ կը հռչակուի Ապպաս փաշա, որուն իշխանութեան ժամանակ Նուպար, դեռ խիստ երիտասարդ եւ տակաւին անկարեւոր դիրքի մը տէր, թէեւ խոստմնալից ապագայով, Պոլիս կու գայ:

Հոն յարաբերութիւն կը հաստատէ Գարաքեհեա (Երամեան) Գէորգ պէյի հետ: Երիտասարդ Նուպարը որքան խելացի, նոյնքան զեղադէմ ու ֆիզիքապէս օժտուած էր, շուտով ուշադրութիւնը կը գրաւէ Գէորգ պէյի աղջկան՝ Օր. Ֆուլիկի եւ ահա՛, հակառակ տակաւին իր համեստ վիճակին, Նուպար կը փեսայանայ Գէորգ պէյի, որ ժամանակին մեծահարուստ հայերէն մին էր: Կ'երեւայ որ Նուպար նախապէս Իզմիր ըրած մէկ ուղեւորութեան միջոցին մեծ համակրութիւն յայտնած էր ծանօթ ընտանիքէ հայ օրիորդի մը եւ ամուսնութիւն իսկ խոստացած անոր: Բայց Գէորգ պէյի աղջիկը մոռցնել կու տայ իրեն իր նախկին խոստումը: Ամուսնութենէն ետքը երիտասարդ ամուլը կը վերադառնայ Եգիպտոս, ուր Նուպար փաշա հսկայաքայլ կը յառաջդիմէ իր ասպարէզին մէջ:

Այս ամուսնութենէն ծնած են երեք զաւակներ՝ անդրանիկը՝ Պօղոս (աւելի ուշ՝ Պօղոս փաշա Նուպար, ՀԲԸ Միութեան հիմնադիր), միւսները աղջիկներ՝ Նոյեմի եւ Զիպալ:

2025 թուականը կը նշէ այս մեծ հայուն՝ Նուպար փաշա Նուպարեանի ծննդեան 200-ամեակը (1825-1899), որուն գլխաւոր նուաճումներէն մին, որ մինչեւ այսօր կը յիշուի իր քաղաքական դերակատարութեան առընթեր, «խառն դատարաններ»-ու իրագործումը եղած է:

<http://www.kantsasar.com/news/55939-2/>

ԱՆՏԱՆՕԹՈՒՀԻՆ

(Խոհագրութիւն)



Տարիներու թաւալումին հետ աւելի խորութեամբ ըմբռնեց ժամանակի անփոխարինելի արժէքը: Շատ արժէքներ կրնար գուցէ վերականգնել, բայց նորին վեհափառ ժամանակը անդարձ էր: Ան ասուպի արագութեամբ կը հոսէր դէպի ո՞ւր, արդէօք...դէպի ապագայ, վստահաբար, կը խորհէր: Եւ այդ նոյն ապագան շատ շուտով կը դառնար ներկայ եւ յետոյ անցեալ: Ո՞վ կրնար շրջանցել այս տիեզերական իրականութիւնը: Եւ ինքն իրեն յորդորեց. «Ներկայ պահն է քո՛ւկդ, ապրէ՛ ու արժէտորէ գա՛յն լիովին, մի՛ ապրիր անցեալի մէջ, ո՛չ ալ ապագայի, անցեալը արդէն ապրուած իրականութիւն է, գոր չես կրնար փոխել, իսկ ապագան՝ անծանօթը, գոր չես կրնար գուշակել բնաւ երբէ՛ք...Ներկայ պահն է իրականը, կեանքի քու բաժինդ որ հաստատապէս քուկդ է...Վայելէ՛ գայն,

իմաստաւորէ՛ գայն, քանզի շուտով ան կը դառնայ անցեալ, անցած-գացած ու ա՛լ անվերադարձ պահ...

Տասնամեակներ սահեր էին իր մանկութեան վաղ օրերէն եւ հիմա՝ կանգնած էր իր մայրամուտին դիմաց: Արդէօք ի՞նչ փոխուեր էր իր մէջ, հարցուց ինքն իրեն: Հոգին նոյնը մնացեր էր՝ աշխոյժ, լուստես, բարի ու զթառատ, հակառակ իր տեսած ու ապրած վերիվայրումներուն: Անիկա դեռ գիտէր երագներ հիւսել յանուն վաղուան միեւնոյն խանդավառութեամբ ու տեսլականով: Դեռ՝ կը հաւատար մարդուն, անոր խորքային ես-ի ազնութեան, լոյսին: Կը հաւատար նոյնպէս այն իտեալներուն, որոնք հիմնասիւնը եղեր էին եւ են իր գոյութեանը այս աշխարհիս երեսին: Իր բարոյական արժէքներու դաւանանքէն ոչինչ զիջած էր: Միամի՞տ էր արդէօք: Թերեւս: Բայց կը հաւատար թէ օր մը արդարութիւնը պիտի յաղթանակէր ի մասնաւորի իր ժողովուրդին կրած ահռելի անարդարութեանց որպէս հատուցում: Չուզեց երկարել:

Միայն հայելին իրեն կը յուշէր որ առաջուանը չէր: Թառամեր էր իր հմայիչ տեսքը, բայց դեռ նշոյլներ կը ճառագայթէին անցեալի հրապոյրէն...Ձիգ հասակը չէր կորաքամած, աչքերուն փայլը չէր խամրած, նոյնիսկ իր ակնոցին ետեւէն: Փառք Աստուծոյ, խելքը, միտքը, յիշողութիւնը դեռ արթուն էին:



Ընդհակառակն, մտածեց, տարիները զինք դարձուցեր էին աւելի իմաստուն, դասեր քաղած էր իր սխալներէն, որոնց զինը լիուլի վճարեր էր: Դարձեր էր հեռատես, շրջահայեաց եւ խոհեմ, թէեւ այդ խոհեմ եզրոյթը իր մէջ ծերութեան համը ուներ...

Տարիներու թաւալքը ան նմանցուց բոլորաձեւ աստիճաններու, որոնք քեզ կը տանին աշտարակի մը գագաթը: Որքան կը բարձրանաս այդ աստիճաններէն, տեսադաշտդ կ'ընդլայնի եւ ամէն իր ու երեւոյթ կրնաս արժեւորել այդ ընդհանուր համապատկերին մէջ: Պզտիկ ու աննշան բաները տակաւ կ'անհետին քու հայեացքէդ, իսկ կարեւորները կը դառնան աւելի ու աւելի ցայտուն ու նշանակալից: Իր տարիներն ու անցած կեանքը այդպէս մեկնաբանեց: Հիմա որքան ներող աչքով կը նայեր մարդկանց մանր-մունր սխալներուն եւ հայեացքը կը սեւեռէր կարեւորագոյն արժեքներուն որոնք կը ցոլային իր հայեացքին դիմաց: Ի վերջոյ, կը մտածէր որ մարդիկ միշտ ալ չեն գիտեր թէ ինչ կ'ընեն...ինչպէս գրուած էր Մեծ Մատեանին մէջ ալ, Յիսուսի բառերով: Արդէն բնաւորութեամբ ալ՝ միշտ ներող եւ անյիշաչար եղած էր: Չէր գիտեր հարկաւ թէ որքան կեանք էր սահմանուած իրեն,բայց աւելի ու աւելի կը կառչէր կեանքին, զայն լիարժեք ըմբռնէր, անոր ուրախութեան խորհուրդը զգալու տենդին...

Ապերախտ չէր կեանքին հանդէպ...անոր լեղիին հետ, ըմպած էր անյագուրդ արեւն անոր, հոգիին ու մտքին մէջ ամբարելով յուշերու եւ յիշատակներու հարուստ գանձեր: Աւելին, իր կեանքի մայրամուտին, յանկարծօրէն բռնկեր էր իր մէջ արարելու, ստեղծագործելու կրակը, ինչպէս ծիրանի բոցը մայրամուտի հորիզոնին: Յորդահոսան գրիչը իր հոգիին ավերէն դուրս կը նետէր հիմա ա՛յն ինչ ամբարած էր իր ներաշխարհին մէջ որպէս յուշ ու ապրում, որպէս յոյզ ու միտք-գաղափար եւ ինք խորին բերկրանքով կ'երկնէր տողեր իր պաշտած Մեծասքանչ բառերով...

Մա գուցէ գերագոյն երջանկութիւն կարելի էր համարել:

Կարելոր բան մըն ալ կը նկատէր: Տարիներուն հետ, հիմա իր սերը հանդէպ իր ժողովուրդին, իր բազմաչարչար ժողովուրդին հանդէպ կարծես կրկնապատկուեր, բազմապատկուեր էր: Այդպէս կը զգար ամենայն անկեղծութեամբ ու ամենայն խորութեամբ: Իր ժողովուրդին հետ նոյնացած կը զգար ինքզինք, առաւել քան երբեւէ:

Յիշեց հայրենի մեծ բանաստեղծուհիին՝ Միլվա Կապուտիկեանի տողերը. «Ինչքան տարիքս առաջ է գնում, Ինչքան անցնում են օրերս անփոյթ, Այնքան աւելի արմատակալում, Խորերն է գնում սերս դէպի քեզ...Այնքան աւելի խորքից եմ այրում քո դարդ ու ցաւով ու բախտով քո թէժ...»:

Որքան ճշմարիտ տողեր՝ արդարեւ:

Միտոյն հետ միասին, կ'ուզէր, կը ջանար իրմէ բան մը տալ անոր, իր ներաշխարհին մէջ կուտակածը բաշխել անոր Մեսրոպաշունչ բառերով...«Զքոյս ի քոյոց քեզ մատուցանեմ» աղօթքին պէս:



Երախտապարտ կը զգար իր ազգին երկնած փառապանծ մշակոյթով, որուն հիմնական առանցքը Մայրենին էր, հայերէնը, եւ ամէն օր աղօթքի պէս զայն կը բարեբանէր, զայն կը փառաւորէր եւ ամէն ճիգ կը թափէր փոքրիկ քար մը աւելցընելու հայերէնով կերտուած դարաւոր ու պանծալի գրականութեան հոյակերտ կոթողին, որպէս յետին մշակը անոր:

Մտաբերեց իր սիրելի հայրիկին խրատը. «Երագս է որ լաւ տիրապետես մեր լեզուին եւ անով գրես մամուլի էջերուն մէջ, անով ծառայես մեր բազմաչարչար բայց ազնիւ ժողովուրդին: Է՛հ»:

Ան ի՞նչ պիտի գիտնար՝ իր անդենական կայքէն, որ գրելը՝ ահա քանի տարի ու քանի տասնամեակ է դարձեր էր իր ճակատագիրը: Օր չէր անցներ որ չգրէր, իր մտածումներն ու ապրումները չյանձնէր թուղթին կամ համացանցի պաստառին: Իր ապրելու իմաստը դարձեր էր անիկա:

Գրելով՝ կը քննարկէր եղածն ու չեղածը, կը վերլուծէր, իր խիղճին հաշիւ կու տար, սխալն ու ճիշդը կը հարցադրէր, կը յստակացներ իր միտքերն ու յոյզերը: Գրելը կրկնակի ապրիլ էր: Գրելը՝ աւելի ճիշդ, քննարկուած կեանքով ապրիլ էր...եւ այսպէս շարունակ: Յոյն մեծ փիլիսոփայ Արիստոտելն ալ արձանագրեր էր. «Չքննարկուած կեանքը լիարժէք կեանք չէ» եւ աւելցուց. թերեւս ասուն մարդը անասունէն տարբերող յատկանշական բան էր՝ խօսքով կամ գիրով քննարկել կեանքի երեւոյթները: Պատասխան գտնել փորձել ինչունէրուն, կամ գոնէ խորհիլ անոնց մասին եւ մտածումի տեսադաշտը ընդլայնել:

Օ՛, մտածեց, որքան բախտաւոր էր որ իր էութեամբ այդպիսին էր:

Իրականութեան մէջ, հիմա յստակօրէն կը գատորոշէր կարելորն ու անկարելորը, էականն ու երկրորդական-երրորդականը, առօրեայ հոգեմաշ հնհնութներէն ազատագրուած կը զգար ինքզինք, չէր տարուեր երբէք այլոց թերեւամիտ կարծիքներէն, զիտէր զանազանէլ ծանրակշիռն ու արժէքաւորը ծանծաղամիտ խօսքերէն...

Թող մարդիկ մտածէին իր մասին իրենց ուզածը եւ բամբասէին զինք...Որո՞ւ հոգն էր: Ինք ա՛լ գտած էր իր երջանկութեան բանալին, որ էապէս իր հոգւոյն մէջ էր: Բայց երբէք ամբարտաւան չէր եղած, ոչ ալ գոռոզամիտ, կամ նոյնիսկ մեծամիտ: Միշտ պատրաստ էր իր գթառատ սիրտով օգնել հոգեպէս ընկճուածին, ձեռք երկարել ինկածին, յոյս ներշնչել յուսահատածին, պայքարի ոգի փոխանցել վիատածին...

Կեանքն էր գերագոյն դպրոցը, եզրակացուց, եւ միայն անոր փշոտ արահետներէն անցնելով, ոտքերդ մերթ ընդ մերթ արիւննելով, իյնալ-ելլելով կրնաս բոյլ մը իմաստութիւն քաղել: Գուցէ, շարունակեց մտովին, կեանքի դժուարութիւններն ու անոր տուած վերքերն են, ուրկէ Լոյսը կրնայ թափանցել հոգիէդ ներս եւ ճառագայթ սփռել ներաշխարհիդ...

Եւ նոյնիսկ կարեկցանք զգաց բոլոր անոնց նկատմամբ, որոնք շատ հեզասահ կեանք մ'ունեցած էին, չէին «ճաշակած» խորտուրտութիւններ յաղթահարելու կամքի ոյժն ու պայքարի ոգին, չէին ճաշակած ոգիի յաղթանակի բերկրանքը եւ ճահճացեր էին առօրեայ հանգիստի գորշութեան մէջ: Սա այրած սրտի մխիթարանք չէր երբէ՛ք, այլ ապրուած եւ

հաստատուած իրականութիւն: Պարոյր Սեւակի տողը մտաբերեց տառապանքի մասին՝ «Նա սրբում է աչքը փռուց, նա մաքրում է հոգին ժանգից»:

Մտքին մէջ եզրակացուց: Ոգիի յաղթանակի բերկրանքը գուցէ ազնուագոյնն է բոլոր յաղթանակներուն եւ թերեւս ալ խորագոյնը:

12/4/2025

ԱՎՆԹԱՐԹՆԵՐ



Ամէն ինչէն վեր ՍԷՐՆ է, սերը իրարու հանդէպ, սերը հայրենիքին, ազգին ու համայնքին հանդէպ...Սիրոյ բացակայութեան՝ կը ծաղկին նախանձը, չարութիւնը, անարդարութիւնը, անգթութիւնը...Արդեօ՞ք մենք ունի՞նք այդ ՍԷՐԸ իրարու հանդէպ, մեր ազգին ու հայրենիքին հանդէպ, բացի այն պահերէն, երբ օրհասական վտանգի առջեւ ենք կանգնած...Իսկ մնացեալ

պահերուն, ուշագրաւ իրականութիւն է, Խորենացիի օրերէն, որ մենք ներքին զգուրոտոցներով ենք զբաղած, զիրար պախարակելով, բամբասելով եւ չարախօսելով ենք զբաղած: Կարծես ըլլայինք մէկզմէկու թշնամին: Ահա թէ ինչո՞ւ շարունակ պառակտուեր ենք, պառակտուելով տկարացեր ենք, ջլատեր ենք մեր հաւաքական ոյժը...: Մա չէ՞ մեր ցաւերուն ցաւը, մեր արիւնոդ վերքը, որ արիւնաքամ կ'ընէ մեզ՝ դար ու դարեր, առանց ամոքուելու, առանց բուժուելու: Եթէ ըլլանք մէկս միւսին ԶՕՐԱՎԻԳ, ԱՆԿԵՂԾ ՍԻՐՈՎ ԵՒ ԳԹՈՒԹԵԱՄԲ լեցուն, յայնժամ մենք հաստատօրէն կը ԶՕՐԱՆԱՆՔ, Կ՝ԱՄՐԱՊՆԴԵՆՔ ՄԵՐ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՈՅԺԸ...եւ ոչինչ կրնայ էապէս տկարացնել մեզ: ՍԷՐ, ՍԷՐ ԵՒ ՍԷՐ...ՍՍ ՉԷ՞ ԳԼԽԱԻՈՐ ԲԱՅԱԿԱՆ ՀԱՅ ԿԵԱՆՔԻՆ:

.....

Ազգեր, հասարակական միաւորներ կը զարգանան գերազանցօրէն, երբ իրենց մէջ աշխուժօրէն կը գործէ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԵԱՆ ՈԳԻՆ..., որ առիթ կ'ընծայէ բոլորին հարցադրելու, քննութեան առարկայ դարձնելու տուեալ իրավիճակը, այլընտրանքներ որոնելու, մտաւոր ճիգ ի գործ դնելու եւ համապատասխան արդիւնքի մը հասնելու...: Առանց քննադատութեան, տուեալ ընկերային-հասարակական-քաղաքական-տնտեսական դրութիւնը կը լճանայ, կը ճահճանայ..., յառաջդիմութիւնը կը կասի...: Ամբողջ արեւմտեան քաղաքակրթութեան զարգացումը յառաջ եկած է, շնորհիւ անոնց մտքի մարդոց, անոնց փիլիսոփաներուն յառաջ տարած հարցադրումներուն, մտաւոր յարատեւ որոնումներուն, քննադատութիւններուն...ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆԸ ԷԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ Է ԱԶԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ...



.....

ԱՐԱՐԻՉԻՆ անունով խօսողներ, բարբառողներ եւ երկարապատում ուսումնասիրութիւններ գրողներ այնքան շա՛տ են մեր մէջ, որ պահ մը կը տարուիս հաւատալու թէ անոնք իսկապէս ալ ԱՐԱՐԻՉԸ կը կրեն իրենց մէջ, Անով կ'առաջնորդուին իրենց մտածումներուն, խոհերուն, վարքին ու արարքներուն մէջ... թէ բարեխիղճ են, արդարամիտ, ճշմարտախօս...: Փորձութեան Պահը, սակայն, չուշանար եւ նմաններէն ԿԵՂԾԵՐԸ կը բացայայտուին իրենց ամբողջ մերկութեամբ, ի չիք դարձնելով իրենց քարոզածին ԱՆԿԵՂԾՈՒԹԻՒՆԸ...: Մինչ անդին, կան ազնիւ ու խոնարհ մարդիկ, որոնք չեն բարբառիր բա՛րձր-բա՛րձր բառերով եւ եզրոյթներով, բայց «Էթիքայի» կամ բարձր բարոյականութեան ճշմարիտ կրողն են՝ իրենց վարքով, գործքով, արարքներով...Ի վերջոյ, ՄԱՐԴԸ ԿԸ ԴԱՏՈՒԻ ԻՐ ԱՐԱՐՔՆԵՐԷՆ ԳԵՐԱԶԱՆՅՕՐԷՆ, ԵԻ ՈՉ՝ ԽՕՍՔԵՐԷՆ:

.....

Հիմա աշխարհը կ'ընթանայ երկու հակաբեւեռներու պայքարով...Պայքարի մէկ բեւեռին՝ ազգային սկզբունքով, ազգային գաղափարով եւ արժէքներով ապրող մարդիկ են, պայքարի միւս բեւեռին՝ համաշխարհայնացման եւ համահարթեցման ծառայող վարձկան ոյժերն են (կլոպալիստները), որոնք կը միտին նոր աշխարհակարգ ստեղծել, ուր չկայ ազգութիւն, չկայ ազգային ինքնութիւն, չկան ազգային պատմութիւն ու մշակոյթ, ազգային բարոյական-հոգեւոր արժէքներ...եւ մարդը դարձած է ԱՆԴԷՄ, ԱՆԴԻՄԱԳԻԾ մի փերեզակ, հոս-հոն քշուող աշնան մի տերեւ...ՄԵՐ ՊԱՅՔԱՐԸ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ ՅԱՆՈՒՆ ԱԶԳԱՅԻՆԻ, ՅԱՆՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆԻ, ՅԱՆՈՒՆ ԱԶԳԱՀԱԻԱՔԻ ԵՒ ՀՈՂԱՀԱԻԱՔԻ...եւ ամէն երեւոյթի մէջ, պիտի փնտռենք, պիտի հարցադրենք թէ որո՞ւն կը ծառայեն տուեալ երեւոյթի մէջ ներգրաւուած անձինք ու կառոյցներ եւ ըստ այնմ պիտի դիրքաւորուինք, եթէ կը հաւատանք ԱԶԳԱՅԻՆԻ, ՀԱՅԿԱԿԱՆԻ, ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆԻ:

.....

Մեր երագած ՀԱՅՐԵՆԻՔԸ մենք պիտի կառուցենք՝ մեր մաքառումով, քրտնաթոր աշխատանքով, արդարութեամբ, պայքարելով բռնութեանց, չարութեան եւ անիրաւութեանց դէմ: Հայրենիքները պատրաստ չեն հրամցուիր երբէ ք...անոնք քար առ քար կը կառուցուին իրենց ժողովուրդի ջանքերով, ըստ անոր ժողովուրդին փայփայած երազին, տեւականին, արժէքներուն:

.....

Ամէն ժամանակաշրջան կ'ունենայ իր հերոսները, մարդիկ որոնք կը մերժեն կուրօրէն ենթարկուիլ բռնութեանց, քաղաքական թէ այլ, ...մարդիկ՝ որոնք տուրք չեն տար վերէն եկող՝ զիրենք ստրկացնելու միտող հրահանգներուն..., մարդիկ՝ որոնք ջիղ ունին, արժանապատուութիւն, անհատականութիւն...: Նման մարդիկ են որոնք պատմութիւն կը կերտեն, ազատութեան ոգին վառ կը պահեն, եւ յաւերժօրէն տեղ կը գրաւեն զիրենք ծնող ժողովուրդի սրտին մէջ: Ստրկամտօրէն ծոխը, քծանքն ու շողոքորթութիւնը կը սպաննեն մարդ էակին արժանապատուութիւնը, ինչ որ ալ ըլլան պայմաններն ու պարագաները...Ի



բարեբախտութիւն մեզ, հայ ժողովուրդը ունեցած է նման հերոսներ, որոնք պիտի ապրին ու ապրեցնեն մեզ, ԱԶԳԱՅԻՆ ՀՊԱՐՏՈՒԹԻՒՆ պիտի ներշնչեն մեզի բոլոր ժամանակներուն...: Իսկ ազգերը կը յարատեւեն նման ՀՊԱՐՏՈՒԹԵԱՄԲ՝ օղի, ջուրի, հացի նման կենսական:

.....

Բարի մարդը բարիք ու լոյս կը սփռէ ամենուր, իսկ չարը՝ չարիք ու խաւար...Բարիին խօսքերը կը դառնան սպեղանի ցաւերու, ամոքիչ բալասան վերքերու, լոյսի փարոս մոլորեալին, մինչ չարին խօսքերը բան մը կը կոտրեն մարդուն մէջ, յոյսի եւ լոյսի մարիչ են, մոլորեցնող են ու ապականող...Բարին միշտ ալ պիտի պայքարի չարին դէմ, իր լոյսը պիտի տարածէ մարդկանց հոգիներէն ներս, որպէսզի լոյսը թագաւորէ երկրի վրայ...ԱՅՂ Է ԻՐ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ:

.....

Անարդարութիւնը գուցէ ըլլայ ամենէն խորքային պատճառը Հայաստանէն ԱՐՏԱԳԱՂԹԻ...Սակայն պիտի մտածել, որ ԱՆԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ ԱՄԷՆ ՏԵՂ Է, ԱՌԱՆՅ ԲԱՅԱՌՈՒԹԵԱՆ...Պարզապէս, մենք՝ հայերս, հոգեբանօրէն, օտարին կողմէ գործադրուած անարդարութիւնը թերեւս աւելի տանելի համարենք, քան մերիններէն եկած անարդարութիւնը...Չէ՞ որ մարդ էակը՝ իրեն մօտիկ մարդոցմէ կ'ակնկալէ այլ վերաբերմունք, եւ այդ ակնկալութեան համեմատութեամբ ալ կը վրդովուի, եթէ կեանքին մէջ գտնէ անոր հակառակը: Իսկ ՕՏԱՐԸ ՈՐՔԱՆ ԿՈՒԿՈՏԱԾ Է ՄԵՐ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ ԵՒ ՄԻՆՉԵՒ ՀԻՄԱ:

.....

Այնքան շատ են, մեր օրերուն յատկապէս, կեղծիքն ու շողոքորթութիւնը, երեսպաշտութիւնն ու մակերեսայնութիւնը, որ չես գիտեր՝ ո՞վ է ճշմարիտ բարեկամը, որ իսկապէս կը բաղձայ քու երջանկութիւնդ, կը կիսէ ցաւդ ու խինդդ, եւ որուն բարեկամութեան կրնաս վստահիլ ու ապահինիլ.: Մարդ էակը, ըստ էութեան, ՄԻԱՅՆԱԿ Է մեր ներկայ ժամանակներուն, նոյնիսկ եթէ ան շրջապատուած է մարդկանցով...Գոյութենական այս մենակութիւնը շեշտուած է՝ մանաւանդ անոնց մօտ, որ տուրք չեն տար հոգիի եւ մտքի վրայ գործադրուող ճնշումներուն, որոնք հեռու են սուտէ ու կեղծիքէ...որոնք ճշմարիտը կը խօսին եւ չեն քծնիր ի հաճութիւն այլոց...Նմանները բարձր գին կը վճարեն իրենց ուղղամտութեան եւ ազատութեան համար յայտնապէս:

.....

«Դու դժուար ժամիս բերկրանք մշտաշող, Դու ուրախ ժամիս մորմոք մշտակէզ...»...Ահա ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ՝ երկու խիտ տողերովը ՄԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆԻ իր վերիվայրումներով, իր փառքի, յաղթանակի եւ պարտութեան էջերով, լոյսով ու մութով, պանծալի մշակոյթով, ոսկեղենիկ բարբառով, Բառ ու Բանով եւ զանոնք ամէն գնով պաշտպանելու անգորութեամբ եւ հայ հոգիի այլասերումով..ԲԵՐԿՐԱՆՔ ՄՇՏԱՇՈՂ՝ երբ հաղորդ կը մնանք հայ դարաւոր ու փառաւոր ՄՇԱԿՈՅԹԻ զանձերուն...ՄՈՐՄՈՔ



ՄՇՏԱԿԷԶ՝ երբ կը նայինք պանդուխտ Արարատին, Անիի աւերակներուն եւ երբ կը նահանջենք բանի եւ գործով, գիտութեամբ եւ անգիտութեամբ, հայրենատիրութեան տեղ հայրենալքումով ...ՄԵՂԱՅ, ՄԵՂԱՅ ԱՐԱՐԱՏԻՆ:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՔԱՌԵԱԿՆԵՐ



Երագներս քամին առաւ, տարաւ հեռու-հեռու ավեր,
Բուռ մը հունտեր որ մնացին ծիլ ու բողբոջ արձակեցին,
Մեծցան, շատցան, բիւր-բիւր ծաղիկ բացին գունեղ եւ հոտաւէտ,
Պարտէզ դարձան մշտադալար, բուրաստան մը հոգեղիւթիչ:

.....

Նիւթով հարբած եւ գինովցած, մոռցաք ոգին ու հոգին ալ,
Գոռոզացաք հորթով ոսկեայ որ սին պատրանք էր միմիայն,
Մինչդեռ սակաւ հոգիները լուսարբեցան Բանի կենաց
Ու բարձրացան սանդուխտ ի վեր ճշմարտութեան արեւավառ:

.....

Ձեր ճամբէքին տրորեցիք սիրտեր մաքուր, անդաւաճան,
Որոնց վճիտ խօսքը բիւր ինչպէս ջուրը՝ ակնաղբիւրէն,
Կեղծ ու շուայտն էր հմայիչ ձեր աչքերուն մշուշապատ,
Գուցէ հիմա միայն տեսնէք ճշմարիտը ջինջ ու բիւրեղ:

.....

Ձեր ճամբէքին մամոնան էր, ցոյցը նիւթի ոյժին դատարկ,
Ձեր ճամբէքին կեղծ ընկերներ տուին բարեւ, անցան-գացին,
Դուք իրաւը կորսնցուցիք, չարժէքներու փայլէն տարուած,
Ափսոս, այնքան ուշ է արդէն, մայրամուտն է հորիզոնին:

.....

Դրամի, դիրքի վրայ նստած,
Կ'արհամարհէք դուք հայ հոգին,



Ձեր մամոնան լեցնել կրնա՞յ
Հոգւոյն սովը ձեր խղճալի...

.....

Մուսան ազատ օդը կ'ուզէ,
Որ թեւածէ ան անարգել,
Ճառագայթէ խոհեր լուսէ,
Յոյզերով բորբ ու հրբեղէն...

.....

Դիմակը կեղծ շուտ կ'իյնայ վար՝
Կեանքի հովերն երբ որ փչեն,
Դէմքը իրաւ ինչո՞ւ վախնայ
Հողմերէն բիրտ, փոթորիկէն...

.....

Ուժեղ է ան որ կ'ընդունի իր սխալը,
Կը խրրատուի ու դաս կ'առնէ իմաստնօրէ՛ն,
Իսկ տկարը միշտ ալ կ'իյնայ նոյն ճահիճը,
Մեղքը նետէ այլոց վրայ յիմարօրէ՛ն:

.....

Աւա՛ղ միայն աղօթք մնաց՝
«Ազգիս հայոց՝ սէր միութիւն»,
Քանզի միշտ ալ բաժան-բաժան,
Հաւաքական ոյժ մը չէղանք:

.....

Մեր ամբոցին դուռը բացողն
Եղեր է միշտ մատնիչ Յուդան,
Որ դեռ գործէ անխիղճ սրտով,
Իր սին շահին է հըպատակ...

.....

Միտքեր դրի ես քովէ-քով,
Տաղ հիւսեցի լուսագործով
Եւ զարմացայ՝ ուրկէ՞ եկան
Այդ միտքերը անեզրական...

.....

Խառնաշփոթ աշխարհին մէջ,
Ունկն դիր լոկ ներքին ձայնիդ,



Ան թող դառնայ քեզ ուղեկից,
Քեզ ուղեցոյց ամէն քայլիդ:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ